Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ՝ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 100-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Օգոստոսի 22-ին, վաղ առավոտյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, չորս ամիսների բացակայությունից հետո, ԱՄՆ-ից, ուր մեկնել էր ամերիկահայոց թեմի հիմնադրման 100-ամյա հոբելյանական հանդիսությունները նախագահելու, ինչպես նաև բուժման նպատակով, վերադարձավ Հայրենիք՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ՄԵԿՆՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 14-ին, ընդառաջելով Ամերիկայի Արևելյան, Արևմտյան և Կանադայի Հայոց թեմերի առաջնորդներ Տ. Խաժակ արքեպս. Գարսամյանի, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի և Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի համատեղ հրավերին, Ամերիկայի Միացյալ Նահանգներ մեկնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը՝ մասնակցելու և անձամբ նախագահելու դեռևս 1898 թվականին երջանկահիշատակ Մկրտիչ Ա Խրիմյան Կաթողիկոսի (Խրիմյան Հայրիկի) կողմից հայրապետական կոնդակով հաստատված ԱՄՆ-ի հայոց թեմի 100-ամյակի հոբելյանական տոնակատարությունները: Բժշկական քննության ենթարկվելու համար Վեհափառ Հայրապետը նախ մեկնեց Լոնդոն, ապա այնտեղից՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

Նորին Սրբությանը ուղեկցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, ինչպես նաև հոգեշնորհ Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանը՝ իբրև գավազանակիր:

Ինչպես միշտ, մեկնելուց առաջ Հայոց Հայրապետը Մայր Տաճարում, Իշման Սուրբ Սեղանի առջև, իր գոհաբանական աղոթքն առաքեց առ Աստված և խնդրեց, որ անցնելիք ճանապարհը լինի բարեհաջող, այնուհետև ներկա միաբաններին մաղթեց համբերություն, խաղաղություն և գործերի կատարյալ հաջողություն՝ իր բացակայության ընթացքում: Ապա Նորին Սրբությունն առաջնորդվեց «Զվարթնոց» օդանավակայան:

Գարեգին Ա Վեհափառին ճանապարհելու էին եկել Մայր Աթոռի

«ՏԷՐ, ԿԵՑՈ ԵՒ ՊԱՀՊԱՆԵԱ...»

միաբանությունը՝ դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պողոսպալյանի գլխավորությամբ, ինչպես նաև ՀՀ կրոնի գործոց պետական կոմիտեի նախագահ Լազար Սուքյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, պաշտոնատար այլ անձինք, մամուլի ներկայացուցիչներ և մեծաթիվ հավատավոր հայորդիներ:

ԺԱՄԱՆՈՒՄ ՆՅՈՒ ՅՈՐՔ

Նորին Սուրբ Օծությունը, բժշկական քննությունը շարունակելու, ինչպես նաև նախապես ծրագրված հովվապետական այցելությունը ամերիկահայոց թեմ իրականացնելու նպատակով, ապրիլի 20-ին Լոնդոնից մեկնեց Նյու Յորք:

Ասենք նաև, որ 1998 թվականը թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի կողմից հայտարարվել էր «Հարյուրամյակի տարի», որի գլխավոր հանդիսությունները տեղի ունեցան մայիսի 3-10-ը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սակավաթիվ ծխերի համեստ գոյությամբ ու այս ափերում ապաստան գտած հայերի չարքաշ ու տոկուն աշխատանքով հիմնվեցին Հյուսիսային Ամերիկայի Արևելյան, Արևմտյան և Կանադայի այսօրվա կազմակերպված թեմերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո: Թեմեր, որոնց ծխերի թիվն անցնում է հարյուրից և այսօր, տոնախմբելով հիմնադրման 100-ամյակը, փառք ենք տալիս Աստծուն՝ մեկդարյա առաջնորդության համար:

1880 թվականի վերջերին Միացյալ Նահանգներում սկսել էր աճել հայ գաղթականության թիվը: Կազմվում էին փոքրիկ, սակայն աշխույժ համախմբումներ: Բայց հայոց քրիստոնեական հավատը տակավին իր եկեղեցական արտահայտությունը չէր գտել Նոր Աշխարհում: Հայրերի շավղով ընթանալու ցանկությունն օրավուր մեծանում էր:

1887 թվականին արդեն Ուսթերի շրջանում 400 ամուրի աշխատավոր հայեր կային: Նույն թվականի սեպտեմբերի 3-ին, հավաքույթներից մեկի ժամանակ, ծանոթ մտավորական և ուսուցիչ Մկրտիչ Փորթուգալյանը հետևյալ խոսքերն է ուղղում հավաքվածներին. «Հայը, իր ինքնությունը պահելու համար, ուր որ երթայ, իր հետ կը տանի իր եկեղեցին, իր թերթը եւ իր դպրոցը»:

Գաղթական հայերի նախաձեռնությամբ 1888 թվականին հիմնվեց «Հայկական կաճառ Ակումբ»-ը, որի անդամները պաշտոնագրով դիմեցին Թուրքիո Հայոց Պատրիարքարան՝ իրենց հոգևոր հովիվ նշանակելու խնդրանքով:

1889 թվականի հուլիսի 25-ին, Պատրիարքարանի նշանակմամբ և ժամանակի գահակալի՝ երջանկահիշատակ Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քերեստեճյան Կաթողիկոսի համաձայնությամբ, Հայոց առաջին հոգևոր հովիվը՝ հոգեշնորհ Տ. Հովսեփ վրդ. Սարաջյանը, ժամանեց Ուսթեր:

Նույն թվականի հուլիսի 28-ին մատուցվեց առաջին Սուրբ և անմահ Պատարագը, իսկ օգոստոսի 20-ին կազմվեց առաջին Մխական Խորհուրդը: Արդեն սեպտեմբերի 4-ին Բոստոնում կատարվեց Հայկական անդրանիկ մկրտությունը:

1890 թվականի փետրվարի երկուսին Ուսթեր քաղաքի Մխական Խորհրդի անդամները որոշեցին եկեղեցի կառուցել:

1891 թվականին Ուսթեր Մասսաչուսեցի հայերն ունեցան իրենց սեփական եկեղեցին, և առաջին արարողությունն այնտեղ կատարվեց Սուրբ Մենդյան օրը, և, համաձայն օրվա սուրբ խորհրդի, եկեղեցին անվանվեց Սուրբ Փրկիչ: Հետագայում Ս. Փրկիչին հաջորդեցին նոր եկեղեցիները:

1898 թվականին, Խրիմյան Հայրիկի հեռատես քայլով, Ամերիկայում հաստատվեց Հայոց Եկեղեցու Առաջնորդություն՝ համախմբելու և ուղղություն տալու երկրի զանազան կողմերը ցրված ծխերին: Հաջորդ տարիներին Ամերիկայի Հայոց թեմն աճեց, զարգացավ և դարձավ Հայոց Եկեղեցու ամենաընդարձակ ու աշխույժ թեմը: Ուսթերի եկեղեցին անվանվեց Ամերիկայի տարածքի Հայոց Մայր Եկեղեցի:

1901 թվականի հունիսի 17-18-ը գումարվեց հոգևորականաց անդրանիկ համաժողովը:

1902-ի հունիսի 12-ին տեղի ունեցավ առաջին Պատգամավորական ժողովը:

1928 թվականին Կալիֆոռնիայում ստեղծվեց առանձին թեմ, տասը տարի հետո, 1938-ին, առանձին թեմ հիմնվեց նաև Հարավային Ամերիկայում, իսկ Կանադան առանձնացավ 1984-ին:

1923 թվականին Առաջնորդարանը Ուսթերից փոխադրվեց Բոստոն, 1927-ին՝ Նյու Յորք:

1968-ից սկսյալ, Միացյալ Նահանգների Նյու Յորք քաղաքի սրտում վեր հառնեց Ամերիկայի Հայաստանյայց Եկեղեցու առաջին Մայր Տաճարը, որ կոչվեց Հայ ժողովրդի մեծագույն հերոսներից մեկի՝ Սուրբ Վարդանի անունով: Մայր Տաճարի օծումը կատարվեց Ամենայն Հայոց երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի ձեռամբ: Մայր Տաճարի կողքին կառուցվեց Ամերիկայի Արևելյան թեմի Առաջնորդարանը, ուր գտնվում են առաջնորդ Սրբազան Հոր և այլ բաժանմունքների գրասենյակները:

1898 թվականին հաստատված Առաջնորդության հովանավորու-

թյան ներքո են գտնվում Հյուսիսային ու Հարավային Ամերիկաները, ինչպես նաև Կանադան: Այսօր Հյուսիսային Ամերիկան ունի երկու թեմ՝ Արևելյան և Արևմտյան, Կանադան՝ առանձին-առանձին առաջնորդական թեմեր, իսկ Հարավային Ամերիկան՝ երեք թեմ՝ Արգենտինա, Բրազիլիա և Ուրուգվայ:

Խրիմյան Հայրիկի 1898 թվականի հայրապետական տնօրինումը՝ Հայ Եկեղեցու թեմ հաստատել Նոր Աշխարհում, 20-րդ դարում իր կարևոր անդրադարձն ունեցավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և հայ ժողովրդի կյանքում:

ԿԻՐԱԿԻ, 4 ՄԱՅԻՍԻ. «ՀՐԱՇԱՓԱՌ»-ՈՎ ՄՈՒՏՔ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Մայիսի 3-ի կիրակի օրը, երեկոյան ժամը 19.00-ից առաջ, հավատացյալների հոծ բազմություն էր հավաքվել Նյու Յորքի Ս. Վարդան Մայր Տաճարում՝ դիմավորելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Նորին Սրբությանը դիմավորելու համար եկեղեցու բակում երկշարք կանգնած էին նաև շրջանի հայկական դպրոցների և Առաջնորդարանի Խրիմյան Ճեմարանի աշակերտները՝ ձեռքներին կարմիր ու ճերմակ մեխակներ:

Հայոց Եկեղեցու հոգևոր սպասավորներից բացի, ներկա էին նաև քույր Եկեղեցիների ու հարանվանությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ: Ներկա հայ բարձրաստիճան հոգևորականների թվում էին Ամերիկայի Արևմտյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Կանադայի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Բրազիլիայի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Տաթև արքեպս. Ղարիբյանը, Արգենտինայի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը, Ուրուգվայի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Հակոբ եպս. Գրլրնճյանը, ինչպես նաև գերաշնորհ Տ. Հուսիկ եպս. Բաղդասյանը:

Ճիշտ որոշյալ ժամին, 19.00-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղեկցությամբ Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի, Նյու Յորքի Կաթոլիկ եկեղեցու առաջնորդ կարդինալ Ջոն Օ'Քոնորի և գավազանակիր հոգեշնորհ Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանի, շքախմբով և «Հրաշափառ»-ի երգեցողությամբ մուտք գործեց Ս. Վարդան Մայր եկեղեցի և առաջնորդվեց դեպի Ս. Սեղան:

Հավարտ «Հրաշափառ»-ի արարողության, Ամենայն Հայոց

Հայրապետին բարիգալստյան և ողջույնի խոսք ուղղեց գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը՝ ի մասնավորի նշելով. «Փառք կու տամ Ամենակալն Աստուծոյ, որ այս սուրբ տաճարին մէջ Ձերդ Սրբութիւնը անգամ մը եւս ողջունելու պատիւին արժանացուց մեզ: Ամերիկահայ Ձեր հօտը անհամբերութեամբ կը սպասէր Ձերդ Վեհափառութեան ժամանման՝ անգամ մը եւս իր սէրն ու յարգանքը, ինչպէս նաեւ հաւատարմութիւնը յայտնելու հանդէպ հայ ժողովուրդի հոգեւոր կեդրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ անոր արժանաւոր Գահակալին:

1998 թուականը Ամերիկահայ թեմի համար պատմական եւ հպարտացուցիչ տարի մըն է, որովհետեւ կը նշուի Ամերիկայի Առաջնորդական թեմի հաստատման 100-ամեակը:

Խրիմեան Հայրիկէն մինչեւ Ձերդ Վեհափառութիւնը, մեր բոլոր Հայրապետները իրենց մշտական հոգածութեան առարկան դարձուցին Ամերիկահայ թեմը, եւ իրենց առաջնորդութեամբ օժանդակեցին թեմի հոգեւոր կարգացման եւ յառաջդիմութեան:

Այսօր, երբ Ձերդ Սրբութեան երջանկաբեր այցելութեան կ'արժանանանք, Ձեր ներկայութեամբ մենք կ'ողջունենք նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, հայ ժողովուրդի հոգեւոր կեդրոնը, ուրկէ կը ճառագայթէ Գրիգոր Լուսաւորիչի եւ մեր երջանկայիշատակ Հայրապետներու, ինչպէս նաեւ Ձերդ Վեհափառութեան մտքի ու հաւատքի ցոլքերը՝ ջերմացնելով եւ խանդավառելով համայն հայութեան կարօտաբաղձ սրտերն ու հոգիները»:

Սրբազան Հոր բարիգալստյան խոսքից հետո ներկա քույր եկեղեցիների Պետերի անունից Հայոց Հայրապետին ողջույնի խոսք հղեց կարդինալ Ջոն Օ'Քոնորը: Վերջինս, իրեն հատուկ զվարթաբանությամբ խոսքն ուղղելով Նորին Սրբությանը, ասաց. «Ես նախանձում եմ, որ Դուք ինձանից շատ երիտասարդ եք և սակայն Կաթողիկոսն եք Ամենայն Հայոց: Ես Ձեզանից 12 տարի մեծ եմ և միայն կարդինալն ու արքեպիսկոպոսն եմ այս Նյու Յորք կոչված «փոքրիկ ավանի»:

Խորհրդանշական է, որ Ձեր գահակալությունը տեղի է ունեցել Ծաղկազարդի Կիրակի օրը, որով սկսվում է Տիրոջ Չարչարանաց շաբաթը, որովհետև Ձեր ժողովուրդը շատ է տառապել այս մեկ դարի ընթացքում: Սա իրական քրիստոնեության նշանն է: Մենք շնորհակալ ենք Ձեր ավնվության ու քրիստոնեական հավատքի համար և սիրում ենք Ձեզ»:

Ապա ներկաներին իր Հայրապետական պատգամը տվեց Նորին Սուրբ Օծությունը: Խոսելով թե՛ անգլերեն և թե՛ հայերեն՝ Ամենայն Հայոց Հայրապետն ի մասնավորի ասաց.

«Իմ սրտի խորէն կը զգամ, որ պատմական շրջանի մը մէջէն կ'անցնինք: Մենք ականատեսներն ենք դարու մը վերջալոյսին եւ նոր ու փառաւոր հազարամեակի մը արշալոյսին:

Հայերը ամէն պատճառ ունին գոհաբանութեան: 19-րդ եւ 20-րդ դարու հայկական ցեղասպանութիւններէն ետք, մեր հայրենակիցները

մահէն ու տառապանքէն փախչելով, որպէս գաղթական եկան այս երկիրը: Մեր ժողովուրդին համար դիմափոխութիւն մը տեղի ունեցաւ, յուսահատութենէն դէպի ստեղծագործութիւն: Մենք դարձանք գիտնականներ, արուեստագետներ, ճարտարարուեստագէտներ եւ շինարարներ: Այս երկիրը մեզի ամէն դիւրութիւն ու պատեհութիւն ընծայեց աշխատելու մեր երջանկութեան համար, եւ մենք խորապէս երախտապարտ ենք:

Այսօր մենք արժանաւոր անդամներն ենք համաշխարհային հանրակցութեան եւ Միացեալ Նահանգներուն:

Եկեղեցին է, որ, որպէս սնդատուն մեր հոգիին, մեզ պահած է 1700 տարիներէ ի վեր, սակայն մենք այլեւս ազգ մը եւ Եկեղեցի մը չենք, որ կը մխիթարուինք միայն մեր անցեալով: Մենք պատրաստ ենք դիմաւորելու նոր կեանք մը, նոր հայրարամեակ մը: Որպէս առաջին ազգը, որ որդեգրեց քրիստոնէական հաւատքը, 2001 թուականին մենք պիտի տօնենք 1700-ամեակը Հայաստանի մէջ քրիստոնէական կրօնքի ընդունման: Աշխարհը մեզ աւելի լաւ պիտի ճանչնայ, երբ ապագան դիմաւորենք որպէս ՄԷԿ ԵԿԵՂԵՑԻ եւ ՄԷԿ ԱԶԳ: Էջմիածինը հոգեւոր ծննդավայրն է բոլոր հայերուն»:

Արարողության ընթացքում հնչած շարականները երգեց միացյալ գպրաց դասը՝ Խորեն Մելիքանեջյանի ղեկավարությամբ:

Հանդիսավոր արարողությունից հետո, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, Առաջնորդարանի ընդարձակ դահլիճում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԲՐՈՆՔՍՈՒՄ (ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ԱՐՎԱՐՁԱՆ. ՄԱՅԻՍԻ 4-7)

Հայաստանյայց Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արեւելյան և Արեւմտյան, ինչպես նաև Կանադայի թեմերից ժամանած շուրջ 80 հոգեւորականներ մասնակցեցին հոգեւորականաց եռօրյա համագումարին, որ դումարվեց մայիսի 4-7-ը, Նյու Յորքի Բրոնքս կոչվող արվարձանում գտնվող կարդինալ Սփելմենի կրոնական հավաքույթների կենտրոնում:

Մայիսի 4-ին, հետմիջօրեին, կարդինալ Սփելմեն Ռիթրիթ Սերթերի կրոնական հավաքույթների կենտրոն մեկնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը՝ դերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի և դավազանակիր հոգեշնորհ Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանի ուղեկցությամբ:

Համագումարի աշխատանքներին մասնակցում էին նաև Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Բրազիլիայի թեմի առաջնորդ Տ. Տաթև արքեպս. Ղարիբյանը, Արգենտինայի թեմի առաջնորդ Տ.

Գիսակ արքեպս. Մուրադյանը և Ուրուգվայի թեմի առաջնորդ Տ. Հակոբ եպս. Գրլրենճյանը:

Թեպետ Արևելյան թեմի եկեղեցականներն ամեն տարի թեմական պատգամավորական ժողովին նախորդող օրերին էին գումարում համագումարը, սակայն այս տարվա համաամերիկյան կոչվող համաժողովը տեղի ունեցավ Ամերիկայում՝ Առաջնորդական թեմի հաստատման 100-ամյակի առիթով:

Համագումարի գլխավոր նյութն էր՝ «Ապդու քարոզիչներ Սուրբ Գրիգորի միջոցաւ Աւետարանի պատգամին հաղորդակից դարձնել Ամերիկայի Հայերը»: Ներկաները խորհրդակցության նյութ դարձրին նաև Ամերիկայի Հայոց Եկեղեցուն վերաբերվող զանազան հարցեր:

Համագումարի ընթացքում դասախոսություններով հանդես եկան Նյու Յորքի Կաթոլիկ Եկեղեցու Առաջնորդարանից Հայր Բենեդիկտ Կրոշելը, Փեյս համալսարանի և Ս. Վլադիմիր Աստվածաբանական Դպրեվանքի դոկտոր Ալբերտ Ռոսսին, Կալիֆորնիայի Օգլանդ քաղաքի Ս. Վարդան եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Մեսրոպ ավագ քահանա Սարաֆյանը, Առաջնորդարանի «Գրիգոր և Կլարա Զոհրապ» տեղեկատվության կենտրոնի տնօրեն հոգեշնորհ Տ. Գրիգոր վրդ. Մաքսուդյանը:

Բացման աղոթքից հետո, իր բարիգալստյան խոսքում Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանն ասաց, որ Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի և Կանադայի թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի և իր ծրագիրն էր՝ առիթ ընծայել երեք թեմերի հոգևորականներին միասին լինել, միասին աղոթել և միասնաբար լուծումներ որոնել Հայ եկեղեցուն հուզող հարցերի համար:

Երկուշաբթի օրը, հետմիջօրեին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախագահեց համագումարի հերթական նիստը: Իր խոսքում Նորին Սրբություն շեշտեց թեմի թողած 100-ամյա ազդեցությունը Հայաստանյայց Եկեղեցու կյանքում՝ հավաստիացնելով, որ մեր եկեղեցու զորությունը մեծավ մասամբ կախում ունի հայ եկեղեցականի իր ուխտին ու կոչմանը հավատարիմ մնալուց.

«Այս պահը հարիւրամեակի տօնակատարութեանց շղթային մէջ իւրայատուկ, ուրիշ ոեւէ մէկ պահէ անբաղդատելիօրէն տարբեր նկարագիր մը ունի: Եթէ դուք երէկ անդրադարձաք եկեղեցւոյ մէջ իմ արտասանած առաջին խօսքին վերջին պարբերութեանը, հոգեւորական իմ եղբայրներուս ուղղուած խօսքն էր, որովհետեւ Աւետարանին պատկերը աղի, լոյսի եւ խմորի, բոլորիս համար մտապատկեր է իդէալի վերածուած, եւ յարացոյց ուղղութեան նկարագիր ստացած պատկեր է: Յիսուս գործեց Սուրբ Հոգիներով: Եկեղեցին հիմնուեցաւ իբրեւ համայնք Սուրբ Հոգիներով եւ Աստուածաշունչ Մատեանի առաջին իսկ գլուխէն, մենք գիտենք ճշմարտութիւնը, թէ «մարդ է, որ գործէ վերկիր», մարդն

է պսակը տիեզերքի ստեղծագործութեան եւ ես կ'աւելցնեմ, մարդն է նաեւ լծակը տիեզերքի ստեղծագործութեան:

Ինչպես կոյր է տիեզերքը առանց մարդուն, անիմաստ է տիեզերքի գոյութիւնը առանց մարդուն, այնպէս ալ Եկեղեցին Աստուծմէ հիմնուած այն հաստատութիւնն է, որ վստահուած է մարդոց, որպէսզի անոնք յառաջ տանին Քրիստոսի խորհրդական մարմինին ներգործութիւնը, շարունակական ընթացքը փրկութեան համար մեր ժողովուրդի կեանքին: Եթէ երբեք մենք ճշգրտօրէն, հաւատարմօրէն եւ անկեղծօրէն կ'ընդունինք ան աստուածաբանական ճշմարտութիւնը, թէ Եկեղեցին մարմինն է Քրիստոսի, ուրեմն այդ Եկեղեցիին սպասաւորները, ամենաբարձր աստիճանէն մինչեւ ամենէն խոնարհ աստիճանը առանց խտրութեան, Յիսուսի ձեռքերն են, Յիսուսի ոտքերն են, Յիսուսի ականջն են, Յիսուսի լեզուն են, մէկ խօսքով Յիսուսի անձին արտացոլումն են մարդկային կեանքին մէջ այս ժամանակներու ընթացքին:

Եթէ երբեք ես ինձ հետ ուզէի բերել Ձեռնադրութեան Մաշտոցը, այդ Մաշտոցի ամէն մէկ բառին միջն ես կը գտնէի հայելի մը, որուն մէջ իւրաքանչիւրս այսօր ինքզինքիս պէտք էր տեսնէինք, թէ այն ուխտը, որ կատարեցինք առաջի Աստուծոյ, Խորանին վրայ ծունկի եկած եւ ձեռնադրիչ եպիսկոպոսը հարց տուաւ, թէ ունի՞ կիսաւատ ուղղափառութեան, ունի՞ կբարս բարիս եւ մանաւանդ պարտաւո՞ր է կամ պատրա՞ստ է հետեւելու Քրիստոսի հետքերուն, այդ ուխտը դարձաւ Մեր կեանքի միակ եւ անշփոթելի ուղին: Ինչ են այդ հետքերը, որոնց կ'ակնարկէ Մաշտոցը. Յիսուսի տառապանքները, նեղութիւնները, դժուարութիւնները Յիսուսի հետքերն են եւ, իմ խոր համոզումով, այն եկեղեցականը, որ երբեք ինք իրեն վրայ կամաւոր կոհողութիւն չդնէ, եկեղեցական ըլլալու սահմանէն շատ հեռու կը մնայ:

Եւ ուստի ես այսօրուան մեր հաւաքոյթը կը նկատեմ բանալի հաւաքոյթ մը բոլոր այն տօնակատարութեանց, որոնք պիտի հետեւին թեմերուն մէջ այս հարիւրամեակը վերածելու համար հոգեկան վերընձիւղման, վերակենդանացման ու գործածելով գեղջկական գրականութեան մէկ բառ պիտի ըսեմ – ջրտուքի, մեր ժողովուրդի կեանքին: Եւ ամէն անգամ, երբ գտնուած եմ այս տեսակ հոգեւոր հաւաքոյթներու մէջ, այն, ինչ որ անգլերէն լեզուով spiritual retreat կը կոչուի, ես միշտ յիշած եմ աւետարանական այն պատկերը, երբ Յիսուս առաւ Իր Առաքեալներէն երեքը Իր հետը՝ Պետրոսը, Յակոբոսը եւ Յովհաննէսը եւ բարձրացաւ լեռը եւ այնտեղ տեղի ունեցաւ պայծառակերպութիւնը:

Այսպիսի հաւաքոյթ մը ինձ համար առիթ մըն է, որ մեկմէ իւրաքանչիւրը ինքզինքը դիտէ Աստուծոյ հայելիին մէջ եւ այդ հայելիին առաջին անունն է Աւետարան: Այդ հայելիին անունն է Մաշտոց Ձեռնադրութեան: Այդ հայելիին երրորդ անունն է մեր խիղճը: Չորրորդ անունն է մեր ժողովուրդի կեանքը եւ կարիքը, որուն համաձայն պիտի դիտենք ու պիտի դատենք մեր անձը եւ վերջապէս հայելիներուն հայելին՝ Աստուած Ի՞նք է, որ այսօր մեկ կը դիտէ, երբ մենք Իրեն կը նայինք այս հոգեւոր մթնոլորտին մէջ:

Երկրորդ ներածական խօսքը այս ընդհանուր նկատողութիւններէս ետքը այն է, որ հոգեւորականաց այս հաւաքումարը եռօրեայ այս խոկումի, ուսումնասիրութեան, ինքնատեսութեան, ինքնաքննարկութեան այս պահը կարեւորագոյն պահ է ինքնաբիւրեղացման տեսակետէն: Նախ ինքնատեսութեան, ինքնաճանաչման եւ ինքնաբիւրեղացման իմաստով: Ամէն անգամ, երբ բեմ կը բարձրանանք եւ խորանի բեմէն կը քարոզենք, երբ կ'ըսենք ժողովուրդին, որ պէտք է ապաշխարէք, մենք արդեօք այդ ապաշխարանքը մեր կեանքին մէջ կ'ապրի՞նք. ի՞նչ է ապաշխարանքը մեր անձնական փորձառութեանը մէջ: Ինքնատեսութիւն է Աստուծոյ հայելիին մէջ:

Ամէն մէկս, Կաթողիկոսէն մինչեւ սարկաւագը, մինչեւ դպիրը, մինչեւ ուրարակիրը, ամէն մէկս պէտք ունինք այդ վերաթարմացման: Ձեռնադրութեան արարողութեան մէջ ամէնաբարձրաւոյ պահն այն է, երբ խորանին վրայ կը դառնանք, աշխարհէն հրաժարման խորհրդանշական արարքը կը կատարենք, մինչ կ'երգուի «Աստուածային եւ Երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զպէտս կարեաց Եկեղեցւոյ» շարականը: Այդ պահուն կարծէք թէ վերստին կը ձեռնադրուիմ ես, ինքզինքս կը թարմացնեմ ճիշտ այն պահին պէս, երբ քսան տարեկանիս սուրբ անգամ այդ ուխտը կատարեցի: Այսօր ալ այդ ինքնատեսութիւնը հոգեշարժ ոյժ եւ գաղափար ունի իր մէջ: Մենք յաճախ կ'ըսենք ժողովուրդին, պէտք է փոխուինք, պէտք է փոխուինք: Այստեղ կը մէջբերեմ խօսք մը, որ թերեւս ուրիշ տեղ կրկնած ըլլամ, ներողամիտ կըլլաք - "Everyone thinks of changing of the world; no one thinks of changing himself. There is no change of the human world without change of the human person" (Յուրաքանչիւրը մտածում է աշխարհը փոխելու մասին, ոչ ոք չի մտածում ինքն իրեն փոխելու մասին: Մարդկային աշխարհը չի կարող փոխվել առանց մարդկային անձի փոփոխության):

Այս էր հիմնական խօսքս, բայց չմոռնանք, երբ 9 ապրիլին, տարօրինակ զուգադիպութեամբ մը իմ կաթողիկոսական երրորդ տարեդարձին, ճիշտ 9 ապրիլին, մեր Հայաստանի Հանրապետութեան նորընտիր նախագահի՝ պարոն Ռոպերտ Քոչարեանի երդման արարողութեան հանդիսաւոր առիթով արտասանեցի իբրեւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, ըսելով. «Ոչ դրամը եւ ոչ ալ կէնքը պիտի փրկէ Հայաստանը, դրամն ալ, կէնքն ալ ստեղծումն են, արտադրութիւնն են մարդու» եւ եթէ կէնքը տաս մարդու մը ձեռքը, այդ մարդը կարող է այդ նոյն կէնքը առնել եւ երթալ ու ռճրագործ դառնալ: Նոյն կէնքը տուր ուրիշ մարդուն, այդ մարդը կ'առնէ այդ կէնքը եւ կը դառնայ Հայրենիքի պաշտպան:

Ուրեմն նիւթը, նիւթեղէնը, գործիքը, կառոյցները, այս բոլորը իմաստ ունին, եթէ կենսաւորուին մարդով, մարդկայինով: Իր կեանքի գերագոյն վերջին դասն էր, որ տուաւ մեկի, Շահան Պէրպերեան երբ նոյն ամառ ինքը գնաց Ֆրանսա, այնտեղ մահացաւ. վերջին դասն էր հոգին: Երբ ամպիոնէն դուրս եկաւ, կարծէք թէ բոլորս ալ այնպէս լեցուած էինք, որ մենք վմեկ ըլլալուն մէջ յանցաւոր կը զգայինք: Չէինք այն բարձրութեան վրայ, որով այս մարդը կը պատկերացնէր հոգիի մարդը: Հետաքրքրա-

ՏՁԷ ՎԱՅՁՎԱՀՈՂՈՈՄ ՎԱՐՈՒՀՍԵՌՌՈՒԷ ՑՈՂՈՒՀՈՅՍԻՁԵՍԷ ԺՏՁԼՈՅԷՈՒԷ ՍՈՓՈՒԷՁԻ



ՌԻՍՄԻՍԻՑՈՒՄԸ ՑՈՒՇԻՄԻՐԻՑԵՆԵ ՀԱՄԱԾԻՍԻՄՈՎ

ՀԵՌԱՑԱՎՈՒ ՍՈՍԱԾ ՀԱՅՐՍԻՊԵՏԻ ԿՈՍԱԾ ՀՏԵՍՆԻՑԵՆԵ ՎՈՓԼԵԳԻ

կան է, մենք արեւելահայերէնի մէջ առհասարակ եկեղեցական բառը չենք գործածէր, այլ՝ հոգեւորական: Եկեղեցականը պաշտօնեայի իմաստը կուտայ, բայց հոգեւորականը հոգիի՛ մարդու կերպարն է, որ կ'արտացոլացնէ: Մենք պարտաւոր ենք եւ պատրաստ պէտք է ըլլանք ինքնափոխութեան դէպի հարապատացումը մեր ինքնութեան բուն տիպին՝ հոգեւորական մարդու:

Այս երկու ընդհանուր մտածումներով բանալէ ետք իմ խօսքը, հիմա կուգամ բուն մեր նիւթին.- Հայոց Եկեղեցին Ամերիկայի մէջ ահաւասիկ հարիւր տարիներ շարունակ եղաւ թարգմանը Աստուծոյ, հայ ժողովուրդի հարապատ քրիստոնէական աւանդութեան համաձայն այս երկրի չորս տարածքին վրայ ապրող մեր ժողովուրդին համար: Այսօր առհասարակ քրիստոնէական Եկեղեցին և Ամերիկայի մէջ մասնաւորաբար, ուր ես ապրած ըլլալու առաւելութիւնը ունեցած եմ կամ գործած ըլլալու փորձը, տագնապի մը մէջէն կ'անցնի: Եկեղեցին ընդհանրապէս շեշտուած կեանքի տարածք մը ունի ընկերային կեանքի (social) երեւոյթի շրջագծի մէջ, աւելի ճիշտ խօսքով Եկեղեցին Աստուծոյ եւ մարդուն միջեւ ուղղահայեաց (vertical) կապը ըլլալէն աւելի մարդէ մարդ հորիզոնական (horizontal) կապ մըն է կարծէս:

Ժամանակին այս երկրին մէջ ընկերային Աւետարան - the social Gospel -կոչուած աստուածաբանական ուղղութիւնը կը տիրէր ամէն կողմ: Սակայն այդ ուղղութեան ոչ բաւարարութիւնը մեջտեղ եկաւ այն իրողութեանը մէջ, որ ընդհանրապէս մոռացուեցաւ - spiritual dimension-ը (հոգնոր տարածք),- մարդ - Աստուած յարաբերութեան այդ ուղղահայեաց գիծը՝ եկեղեցին վերածուեցաւ մարդ-մարդ հասարակայնութեան մը երեւոյթի: Ես կը յիշեմ Օրթոտոքս Եկեղեցիէն George Florovski, John Meyendorf եւ Father Weigel, որ կաթոլիկ հոգեւորական մըն էր եւ Վատիկանի ժողովին մէջ ներկայացուցիչ մըն էր, կը հակապդէին այդ կուտ ընկերային շրջագծի մէջ եկեղեցին ըմբռնելու հայեցողութեան, կ'ուզէին որ այդ եկեղեցին դառնար Աստուծմով ներշնչուած և երկինքը երկրի հետ խառնած շարժում մը եւ ոչ թէ ընկերային հաւաքական ձեւով ապրելու մէկ սովորական ընթացք մը, որ այսօր գրեթէ իր իմաստն ալ կորսնցուցած է, որովհետեւ շատ ընկերային երեւոյթներ ի յայտ եկած են: Քրիստոնէական հոգեւոր կեանքը տեղատուութեան մէջ է: Քրիստոնէութիւնը մակերեսայնօրէն կը դիտուի, ձեւական, սովորութենական տուեալներով կ'արժեւորուի: Առանց յատուկ ճիգի քրիստոնեայ են շատերը: "It is being taken for granted" (ինքնաբերաբար), ինչպէս կ'ըսէն սովորաբար:

Եւ այսօր ես կ'ուզէի անդրադառնալ որ մեր Հայոց Եկեղեցին եթէ այս հարիւր ամեակի ընթացքին իրագործեց այնպիսի աշխատանք մը, որ պահեց մեր ժողովուրդի հաւատքը կենդանի, ատիկա եղաւ խորհրդագործական կեանքը այն ամբողջ ծիսական հոգեւոր արարողութեանց ներգործութեամբը, որ մեր տրամաբանական, տրամախոհական մտածելու եղանակներէն վեր կը գործէ ժողովուրդին կեանքին:

Եւ այսօր ես կ'ուզէի իմ խօսքիս երկրորդ բաժնի մէջ հետեւեալ երեք բառերուն անդրադառնալ, որոնց մէջ ես կը տեսնեմ եկեղեցւոյ

ամբողջականութիւնը, հարապատութիւնը եւ վաւերականութիւնը: The autuhencity of the church consists in bringing together these three constitutive elements of christian life taken in its integrity (*Եկեղեցու վաւերականությունը կախված է քրիստոնեական կյանքի այս երեք բաղկացուցիչ տարրերի միացումից՝ իր ամբողջության մեջ*) - *ինչպէս կ'ըսէն, ներդաշնակութեան մէջ պահելու համար հետեւեալ երեք տարածքները Եկեղեցիի գոյութեան. հաղորդութիւն, քարոզութիւն եւ ծառայութիւն: Այս երեքին ներդաշնակութիւնն է Եկեղեցին: Աղօթք, պաշտամունք, հաղորդութիւն ընդ Աստուծոյ,* Koinonia *բառով յատկանշուող:*

Սա եթէ չըլլայ՝ մեր հաւատքի աղբիւրը կը ցամքի: Մեր հաղորդութիւնը առ միմեանս պէտք է ըլլայ ճառագայթումը մեր առ Աստուած հաղորդութեան: Հակառակ այն իրողութեան, որ բողոքական շարժումը բարեկարգութեան օրէն ասդին, Լութերի շարժումէն ասդին, կարեւոր չափով անտեսեց հաղորդութեան (koinonia-*ի*) *այս տարածքը եւ ուշադրութիւնը կեդրոնացուց քարոզութեան* (kerigma) *եւ ծառայութեան* (diakonia) *վրայ, այսօր կը գտնուի տագնապի մը մէջ: Որովհետեւ հոգեւոր սնուցումը, այն ատեն հաւատացէք գործունէութիւնը կը դառնայ մարդկային չափանիշներով կուտ ընկերային, գործունէութեան ոեւէ մէկ եղանակ:*

Միացեալ Ազգերու (UN) *մէջ կամ* Non Governmental Organization-*ներու (Ոչ-եկեղեցական կազմակերպություն) մէջ գործող մէկը եթէ երթայ երրորդ աշխարհ՝ Աֆրիկեան, Ասիական, Հարաւ Ամերիկեան, Միջին Արեւելեան կամ ուրիշ տեղ եւ օգնութիւն տայ ժողովուրդին, երթայ եւ ծառայէ ժողովուրդին, ի՞նչ տարբերութիւն ունի քրիստոնեայ միսիոնարէն: Ու՞ր է որակային տարբերութիւնը երկու ծառայութեանց միջեւ: Ես անոր մէջ կը տեսնեմ այդ տարբերութիւնը, որ մէկը կայն կ'ընէ Աստուծոյ, Քրիստոսի ներկայութիւնը ժողովրդի մէջ տարածելու համար ինքը ներթափանցուած ըլլալով այդ ներկայութեամբ: Միւսը կայն կ'ընէ կուտ մարդկային հաշիւներով, նոյնիսկ երբեմն շահակցական նկատումներով: Մարդիկ կան, որոնք առանց խօսելու կը ճառագայթեն:*

Այստեղ փոքրիկ դրուագ մը պիտի պատմեմ ձեզի Մայր Թերեզայի մասին: Էջմիածին էի եւ այն ատեն Կիլիկիոյ Կաթողիկոս էի եւ երկրաշարժէն անմիջապէս ետք գացած էի Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողքին գտնուելու և յայտնելու համար Մեր աջակցութիւնը: Վազգեն Կաթողիկոսի հետ նստեր էի իր գրասենեակի մէջ, երբ եկան ըսին, որ Մայր Թերեզան եկած է եւ կ'ուզէ Վեհափառին հանդիպիլ: Այս ակնուահոգի տիկինը ներս մտաւ երեք-չորս հնդիկ մայրապետներ հետը միասին, նստաւ եւ ըսաւ "Your Holliness I don't have any gold in my hand neither silver in my bag, what I have brought with me, are these sisters. I have them here in Armenia, please tell them what they should do, they are at your command" (*Ձերդ Սրբություն, ես իմ ձեռքին ոսկի չունեմ, ոչ էլ արծաթ՝ իմ պայուսակում, իմ բերածն այս քույրերն են: Ես նրանց բերել եմ Հայաստան, խնդրեմ, ասեք նրանց, թե ինչ պիտի անեն. նրանք ձեր հրամանի տակ են*):

Ոգեկան, ներշնչողական բան մը կար իր խօսքին մէջ, որ յուզեց մեզ՝

բոլոր ներկաներիս: Մինչեւ այսօր այդ քոյրերը Սպիտակի մէջ կը ծառայէն եւ ոչ մէկ հայու կաթոլիկ կը դարձնեն: Իմ անձնական բարեկամներէս մէկը եկած էր եւ գացեր տեսեր էր անոնց գործը եւ արտաբուխ նուիրատուութիւն էր կատարեր, որպէսզի այդ քոյրերը կարենան առաւել եւս արդիւնաւորութեամբ ծառայել այդ անխտրական քրիստոնէական սիրոյ իբրեւ ճառագայթում: Այդ կնոջ դէմքին վրայ ես տեսայ այդ ճառագայթումը առ Աստուած հաղորդութեան:

Անցեալները ինձի օտար թղթակից մը եկած էր: Հարցումներէն մէկն այն էր, թէ երկու կիներ այս վերջին շրջանին մեծ ազդեցութիւն գործեցին հանրային ընկերութեան վրայ, մէկը Lady Diana եւ միւսը Mother Theresa. Դուք ինչպէ՞ս կը գնահատէք այս երկուսը: Ես պատասխանեցի, որ ոչ մէկ տեսակի որակական կապ կը տեսնեմ երկուքի մէջ: Մէկը Աստուծմով ներթափանցուած անձ էր. միւսը ընկերային դէմք մըն էր, որ կանանցի պատճառներով այդպէս համամարդկային յարգանքի արժանացաւ իր մահէն ետքը երիտասարդ տարիքին, մամուլի եւ մահուան ողբերգական նկարագրին եւ ունեցած ընկերային դիրքին պատճառներով: Մի դնէք երկուքը նոյն գիծի վրայ հաւասար:

Այդ աստուածային ներկայութիւնն է, որ Եկեղեցին Եկեղեցի կ'ընէ: Այսօր եթէ երբէք Ֆրանսիայի մէջ արժէչափային վիճակագրական գնահատում ըլլայ, հաւանաբար նախագահ Ժագ Շիրակէն աւելի մեծ համբաւ կ'ունենայ Abbé Pierre այն հոգեւորական պարկ վարդապետը, որ փողոցին մէջ պառկողները կը հաւաքէր, կը խնամէր: Ես իմ աբեղայութեանս շրջանին "Les Chifonnirs d'Emmaus" գիրքն էի կարդացած, իր կեանքի եւ գործի պատմութիւնը, որ իմ վրաս հետք թողած է: Ես չեմ կրցած նոյնը մնալ, նոյն ձեւով կգալ այդ գիրքը կարդալէս ետքը: Վերջերս տակաւին իր երկու գիրքերը կարդացի ու տեսէք այս մէկ խօսքը որքան խորհրդաւոր է, որ կը մէջբերեմ. «Երբ ձեռքդ կը դնես ուրիշի ձեռքին մէջ, ուրիշի ձեռքը չէ, որ կը կգաս, այլ՝ Աստուծոյ ձեռքը կը կգաս քու ձեռքիդ մէջ»:

Ամերիկայի կացութիւնը որոշ չափով գիտեմ, ընկերային պահանջքները շատ են հովիւներէն: Ես գիտեմ քահանայ որուն գլխաւոր գործը կարծես, եկեղեցւոյ համար անհրաժեշտ գնումները շուկայից կազմակերպելն էր, ապրանքները փոխադրել, տոմսակ ցրուել՝ սեղաններ շարել և այլն: Ստոնք աւելի տեղ կը գրաւէին իր կեանքին մէջ քան թէ միւս այն հոգեւոր, աղօթական բաժինը որ պիտի ինքը ընէր որպէսզի ժողովուրդը լեցուէր Աստուծոյ հոգիով: Եթէ կան հարցումներ թէ մեր հոգեւոր պաշտամունքային կեանքը ինչպէ՞ս կրնաք վարգացնել, ինչ որ իմ փորձառութենէս կ'ուգայ, ես ձեզի հետ կը բաժնեմ գայն: Բայց քահանայի, հոգեւորականի պարագային աղօթքը, պաշտամունքը առաջնային նշանակութիւն պէտք է ունենայ եթէ հոգեւորականը իր առաքելութիւնը ուղիղ կերպով պիտի իրագործէ ժողովուրդի կեանքին մէջ:

բ) Երկրորդը քարոզութիւնն է (kerigma): Հաւատացէք այս իմ ամենամեծ ցաւերէս մէկն է: Երբեմն կը պատահի, որ հոգեւորականներէն մէկ կամ երկու հոգի եկեղեցւոյ բեմ կ'ելլէն եւ կը քարոզէն: Երբեմն կը պատահէր, Աստուած տայ որ քիչ պատահի կամ երբէք

չըպատահի, կը դառնայի կ'ըսէի. «Տղա՛ս, եթէ երբէք ես աշխարհական հաւատացեալ մը ըլլայի՝ քարոզը կէս կը թողնէի դուրս կ'ելլէի. բան մըն ալ չըսիր, ոչ մէկ հէտք թողուցիր ունկնդիրներուն վրայ, ապա ինչո՞ւ կը խօսիս: Ընդհանուր խօսքեր, խրատական խօսքեր առանց վերլուծումի, առանց ուսումնասիրութեան: Ես քու խօսքիդ մէջ քու յարգանքիդ պակասը տեսայ քարոզին հանդէպ: Եթէ յարգանք ունենայիր քարոզին հանդէպ այդպէս մակերեսայնօրէն չէիր պատրաստէր»: Հետեւաբար, ինչպե՞ս կ'ուզէս ժողովուրդը կապուի քրիստոնէական հաւատքին եւ եկեղեցիին:

Այն գաղափարը, թէ քարոզութիւնը բողոքականին կը պատկանի, իսկ մկրտութիւն, ծէս, արարողութիւն հայոց քահանային կը պատկանի, ատիկա բոլորովին այլեւս իր ճշմարտութիւնը կորսնցուցած, հինցած գաղափար մըն է: Բայց մենք երբեմն դժբախտաբար պետք եղած ձեւով այդ քարոզութիւնը չենք արժէցնէր: Եւ պիտի տամ ձեզի օրինակներ: Արմաշի դպրոցով, Երուսաղէմի ժառանգաւորացով, Անթիլիասի Դպրեվանքով և յետոյ նաեւ Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանով կերպարանափոխուեցաւ քարոզութեան պատկերը մեր Հայ Եկեղեցիին մէջ: Օրմանեան, Դուրեան, Գուշակեան, Կիւլէսերեան, Գարեգին Յովսէփեան, Խաչատուրեան Պատրիարքներու եւ Կաթողիկոսներու նման դէմքեր քարոզութեան մէջ այնպիսի ճառագայթումներ ունեցան, որոնք նոր աճ եւ նոր ուժգնութիւն բերին Հայց. Եկեղեցւոյ քարոզչական առաքելութեան:

Ես անձամբ լսած ըլլալու երջանկութիւնը ունեցած եմ Գարեգին Յովսէփեանց Կաթողիկոսը: Հոգիները կ'ալեկոծէր եւ չէիր կրնար մնայ անտարբեր: Խօսքը ի՞նքն էր, մէկ խօսքով ճշմարտութիւնը իր անձին մէջէն կը բխէր: Եւ ինչպէս իմ «Հովուական Աստուածաբանութիւն» գիրքիս մէջ ըսած եմ, Շնորհալիին այդ աքանչելի պատկերը մեջբերելով. «Խօսքը չպիտի անցնի ինչպէս ջուրը խողովակէն կանցնի, խօսքը պիտի արտաբերուի այնպէս, ինչպէս սպունգէն կը բխի»: Սպունգ, ջուրը սպունգի մէջ պէտք է իւրացուած ըլլայ որպէսզի այլեւս սպունգին եւ ջուրին միջեւ տարբերութիւն չտեսնես: Հոգեւորականին խօսքը իր մէջ պիտի նախ ապրուած ըլլայ, իւրացուած ըլլայ, խորունկ հասկացողութեամբ տրուի, որպէսզի կարենայ ժողովուրդին հասցնել ճշմարտութիւնը, ապրուա՛ծ ճշմարտութիւնը:

Այսօր այն կերպարանափոխութիւնը, որ անցնող հարիւր տարիներուն ընթացքին պատահեցաւ Հայ Եկեղեցւոյ կեանքին մէջ եւ այժմ Ամերիկայի այս տարածքին վրայ, այդ կերպարանափոխութիւնը պէտք է մենք պայծառ պահենք եւ չնուազեցնենք: Եւ կարող եմ ձեզ հետեւեալը ըսել հանգիստ խղճով – այսօր մենք շատ աւելի զարգացած հոգեւորականներ ունինք, քան ինչ որ հայ Կաթոլիկը ունի կամ հայ Աւետարանականը: Բայց մենք յաճախ չենք արժեցներ մենք զմեզ: Ինձի ըսէք ո՞ր վարդապետը կամ ո՞ր քահանան իր քարոզներուն ընթացքին որ մէկ կաթողիկոսէն կամ մեծ մտաւորական հոգեւորականէն մէջբերում կը կատարէ: Շատ քիչ են: Բայց կաթոլիկ եկեղեցական մը, երբ կը քարոզէ, յաճախ Սրբազան Պապը կամ կարեւոր դէմք մը կամ դէմքեր կը մէջբերէ:

Մէջբերումը մեկմէ շատերուն համար կարծէք թէ պպտիկութիւն է: Ինչո՞ւ ուրիշին բառերը պիտի գործածենք, բայց մեծ գիտնականներ, պարկեշտութիւն կը նկատեն իրենցմէ առաջ ըսուած խօսք մը մէջ բերել: Օրինակի համար, իմ կեանքիս վրայ այն հոգեւորականը որ ամենէն մեծ ներգործութիւնը ըրած դէմքերէն մէկն է մտաւորական, գաղափարական գետնի վրայ Թորգոմ Գուշակեան Պատրիարքն է: Իր բոլոր գիրքերը եւ «Սիոնի» 1929-1938 տարիներու թիւերուն մէջ հրատարակած յօդուածները կարդացած եմ: Ես յաճախ իրմէ կ'օգտուիմ, իրմով կը հարստանամ:

Մեր մատենագիրներէն Գեւորգ Սկեւռացիի մեկ թուղթին մէջ տող մը կայ որ շատ բան կ'ըսէ. Մեր ապգի բարիքներուն մէջ կայ «կայլս մեծացուցանել եւ կինքեանս նուաստացուցանել»: Շատ խորունկ ճշմարտութիւն մըն է:

Ես միւս տեսակետն այլ չեմ ընդունիր, թե ամեն ինչ, որ հայկական է, պատուական է, ան ալ ուրիշ ծայրահեղութիւն է: Ինծի համար ինքնաճանաչումը լաւագոյն եղանակն է մեր առաքելութեան եւ պէտք է վերակենդանացնենք այդ քարոզութեան ուժը:

Քարոզութեան մասին պէտք է մենք ունենանք այն գիտակցութիւնը, որ Աւետարանէն քաղուած ճշմարտութիւնները ժողովրդի ապրուած կացութեան, պայմաններուն համաձայն պիտի մեկնաբանենք, ո՛չ թէ տեսաբանական վերլուծումներ պիտի կատարենք: Քրիստոնէութիւնը գաղափարախօսութիւն (ideology) մը չէ: Քրիստոնէութիւնը ապրելու եղանակ մըն է: Քրիստոս չըսաւ «Ա՛յս է ճշմարտութիւնը», գիրք մը չգրեց, ամպիոններէն չխօսեցաւ: Ան ըսաւ. թէ Ես եմ ճշմարտութիւնը, եւ որ «ետեւս Զիս, ետեւս Զհայրն իմ» (ՀՈՎՀ. ԺԴ 9) եւ թէ «Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն եւ կեանք» (ՀՈՎՀ. ԺԴ 6): Ոչ թէ հոն է ճշմարտութիւնը, ոչ թէ մտքի տրամախոհութեան եղանակներու եզրակացուած փիլիսոփայական ճշմարտութիւն մըն է, այլ մարդու կեանքի, երջանկութեան հետ կապուած հարց մըն է: Եւ քարոզները պիտի ըլլան ժողովուրդի կեանքի ապրուած պայմաններուն մէջ քրիստոնէութիւնը թարգմանելու ճիգը եւ ոչ թէ ընդհանուր գիտական ինքնացուցադրութիւն:

Ինչպէս Քրիստոս Իր քարոզութեանց ընթացքին միշտ ժողովուրդին կարիքն ու բարիքը ունեցաւ որպէս նպատակակէտ, այնպէս ալ մենք պէտք է շարժինք այսօր եւ միշտ: Այսպիսի քարոզութիւնը կրնայ իսկապէս մեծ յեղափոխութիւն (յեղափոխութիւն բառը դրական իմաստով կը գործածեմ), յեղաշրջում յառաջ բերել մեր ժողովուրդի կեանքին մէջ:

գ) Ծառայութիւն. վերջապէս, պէտք է աղօթքը, ծէսը, քարոզութիւնը իրար հետ ներդաշնակուին, եւ անոնք պէտք է յրացուին ընկերային ծառայութեամբ՝ կարիքաւորին, հիւանդին, սգաւորին, որբին, ծերին մատուցուած ծառայութեամբ: Եւ ասիկա մաս կը կազմէ Քրիստոսի առաքելութեան ամբողջութեան: Diakonia *յունարէն բառով կ'արտայայտուի հոգեւորականի գործին տարածելը — ծառայութիւն:*

Քրիստոս միայն չաղօթեց եւ ոչ ալ միայն քարոզեց, խօսեցաւ, այլ գործեց բարիք. հիւանդները բժշկեց: Եկեղեցին եւ անոր սպասաւորը

իրենց գործունէութեան մէջ անպայման տեղ պիտի տան այս կողմին: Այստեղ, Ամերիկայի մէջ, բարեբախտաբար պետական սպասարկութիւնները իրենք յանձն առած են կարիքաւոր, չքաւոր դասակարգին հոգածութիւնը: Welfare-ը շատ մեծ տեղ ունի ամերիկեան կեանքին մէջ: Վստահ եմ, սակայն, դուք ալ, մեր Եկեղեցին ալ անտարբեր չեն մնար ընկերային ծառայութեան այս մարկին նկատմամբ: Յիսուսի պատկերին մէջ առանձնայատուկ տեղ ունի բարի Սամարացիի պատկերը:

Բայց այսօր ես շատ ամփոփ խօսեցայ այս մասին: Աւելին կրնամ ըսել հարցում-պատասխան բաժնին մէջ, խօսքիս աւարտին:

Սակէ անդին միայն կ'ուզէի հետեւեալ երկու մէջբերումները կատարել եւ ձեզի փոխանցել այսօր տեսակ մը իմ առաւօտեան նուէրը: «Թէ քարոզողն լինի շիջեալ մոմ, ունելով մեռեալ հաւատս չար գործովք ոչ տայ լոյս այլ ծուխ հանէ յինքենէ»: Քարոզողը, եթէ ինքը շիջած մոմ ըլլայ, լոյս չի տար, այլ՝ ծուխ կուտայ, ինչպէս կը գրէ Գրիգոր Տաթեւացի «Ամարան» հատորին մէջ: Որքան խորունկ պատկեր: Եւ երկրորդ՝ Ագաթանգեղոսի սա տողը. «Սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք կանանց առաքինութիւն կանոն աշակերտելոցն դնել, մանաւանդ յուժ առնելով կՏէրունական, կմիայնոյն կիմաստնոյն Աստուծոյ, քանզի ասէ իսկ. Սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել»: Ոչ թէ ուսուցանել եւ առնել: Առաջին ճշմարտութիւնը գործն է, կեանքի ճշմարտութիւնն է եւ ոչ թէ խօսքի ճշմարտութիւնը: Եւ եթէ մենք ուզենք երբեք վերլուծել աստուածաբանօրէն, թէ ինչ կը նշանակէ Բանն Աստուած, Աստուծոյ Խօսք, Աստուծոյ Խօսքը գիրը չէ, տողը չէ, Աստուածաշունչի բնագիրը չէ, Քրիստոսի Անձն է: Այս է Բանն Աստուծոյ:

Այս հարիւրամեակը, որուն համար կը շնորհաւորեմ ձեզ անգամ մը եւս, ինչպէս երէկ եկեղեցիի մէջ, ենթեցեալներուն բոլորին յիշատակը օրհնելէ ետքը, կոչ ուղղեցի մեր նոր հոգեւորականութեան, այստեղ կը փակեմ խօսքս Թորգոմ Պատրիարք Գուշակեանի հետեւեալ բառերովը. «Եկեղեցականին համար գահ չկայ, Եկեղեցականին համար խաչ կայ»: Շալկենք այս խաչը պատուով, եւ այդ թող ըլլայ մեր կենքը: Զոհուելով է, որ պիտի ճառագայթենք եւ ճառագայթելով է որ պիտի չսպառինք եւ մեր Եկեղեցին պիտի ապրի»:

***

Վեհափառ Հոր խոսքից հետո ծավալվեց մտքերի փոխանակութիւն: Նորին Սրբութիւնը հանգամանալից պատասխաններ տվեց քահանաների կողմից առաջադրված բոլոր հարցերին, ավելի մանրամասնեց Հայ հոգևորականի պարտականութիւններն արդի պայմաններում:

Քննարկվեցին նաև Հայաստանյայց Եկեղեցուն առնչվող հարցեր: Տ. Վահէ արքեպս. Հովսեփյանը խոսեց Հայ Եկեղեցու ծեսի, Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը՝ հովվական առաքելության, իսկ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը՝ ընկերային-մշակութային կյանքի մասին:

Ցուրաքանչյուր ելույթից հետո, ներկա հոգևորականները

բաժանվում էին վեց ենթախմբերի, համատեղ քննարկում առաջադրված նյութը և ապա համագումարին ներկայացնում իրենց թելադրանքներն ու առաջարկությունները:

***

Հոգևորականաց համագումարն իր լրմանը հասավ մայիսի 7-ի հինգշաբթի օրը, առավոտյան մատուցված Սուրբ և անմահ Պատարագով: Օրվա պատարագիչն ու քարոզխոսն էր բոլորովին վերջերս ձեռնադրված արժանապատիվ Տ. Վարգան քհն. Սապունջյանը:

***

Վերջում ավելացնենք, որ հոգևորականաց համագումարը մեծ խանդավառությամբ ընդունվեց ներկաների կողմից: Շատերի կարծիքով նման համաժողովները բավականին ուսանելի են և գերադասելի է ապագայում ևս, ժամանակային կանոնավոր պարբերականությամբ, այսպիսի համագումարներ կազմակերպել:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ Ս. ՆԵՐՍԵՍ ԸՆԾԱՅԱՐԱՆ

Նույն օրը, երեկոյան, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղեկցությամբ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի և գավազանակիր Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանի, այցելեց Նյու Յորքի Սուրբ Ներսես Ընծայարան: Այստեղ Նորին Սրբությանը դիմավորեց համագումարի մասնակից հոգևորականաց դասը և «Հրաշափառ»-ի ուղեկցությամբ առաջնորդեց դեպի Ընծայարանի մատուռ:

Երեկոյան ժամերգությունից հետո, Հայոց Հայրապետի օրհնաբեր այցելության ուրախ առիթով, բարիգալստյան խոսք ասաց Ընծայարանի վարիչ արժանապատիվ Տ. Առաքել քհն. Ալճալյանը: Ապա ուսումնական գծով տեսուչ դոկտոր Աբրահամ Տերյանը ներկաներին հանգամանալից կերպով ծանոթացրեց կրթօջախի ուսումնական և ակադեմիական ծրագրերին, ներկայացրեց իրենց առաքելությունը:

Այնուհետև Նորին Սուրբ Օծությունը մասնավոր աղոթք առաքեց առ Աստված՝ Ընծայարանի հիմնադիր Տ. Տիրան արքեպս. Ներսոյանի հոգու խաղաղության համար, ինչպես նաև խոսեց աղոթքի ու ծեսի, ուսման ու առաջընթացի մասին՝ ընդգծելով նաև արարողությունների ճիշտ և տեղին կատարման կարևորությունը.

«Սիրելի սաներ, ուսուցիչներ աստվածաբանական այս ճեմարանին. Առաջին հերթին ես անգամ մը ևս պարտք կկգամ աղոթքս բարձրացնել դեպի երկինք և վերակոչել ու պանծացնել անգամ մը ևս հիշատակը այն մեծ հոգևորականին, որ իմ երիտասարդ տարիքին իմ ուսումնական կյանքում ինձ ներշնչող դեմքերեն մեկը եղած է՝

երջանկահիշատակ Տիրան արքեպիսկոպոսը: Թող Աստված երկնքին մեջ անոր հոգին երջանկացնե:

Երկրորդ՝ ես կուզեմ գնահատել մեր երեք թեմերի առաջնորդ Սրբազան Հայրերը, որոնք ձեռք-ձեռքի տված, ներդաշնակաբար այս կենտրոնը կպահեն այսպես կենդանի, ստեղծագործական, առաջադիմական, կարգացողական ընթացքին մեջ: Եվ քանի որ այսօր եկած եմ ոչ թե սովորական այցելությամբ, որպես հովվապետական այցելություն, այլ եկած եմ 100-ամյակի առիթով և երբ Տեր Հայրը հիշեց պարոն Թերկյանը, կմտածեի, թե 100 տարիներ առաջ այս հաստատությունը չկար, հոգևորականներու այսպիսի բազմություն չկար, այսպիսի կարգացման մակարդակ չկար: Մեկը եկած էր Պոլիսեն, մեկը եկած էր Իզմիրեն, ուրիշ հոգևորական մը պատահաբար կուգար գավառներեն, լեզուն չէին գիտեր: Եվ ես կրսեմ այսօր փառք Քեզ Աստված, որ Հայոց Եկեղեցիին այս ծաղկումը շնորհեցիր: Սհավասիկ այսօր այնքան թվով հոգևորականներ կան, և այս հոգևորականության կարգացածության օջախը այս երկրին մեջ կմնա այս հոգևոր դպրոցը և իմ փափագն է, որ, շենքի արտաքին բարեկարգումեն ետքը, ներքին հոգեկան պրկումի, կարգավորման, խորացման ընթացքը, որուն լծված եք, ատիկա իր բարի պտուղները տա մեր ամբողջ ժողովուրդին համար Հյուսիսային Ամերիկայի այս երկրամասին մեջ:

Ես այսօր կուզեի անդրադառնալ նաև այն իրողությանը, որ մենք այսօր մեր Եկեղեցվո 1700-ամյակի տոնակատարություն ըսելով չպետք է հասկանանք միայն և միայն անցյալի վերակոչում, անցյալով պանծացում: Մեր հայրերը... Աստուծո հետ են անոնք, մեր հողագնդին մեջը չեն, մեր պարտքն է կանոնք հիշել, բայց պարտք պետք չէ սահմանենք միայն հիշելու մեջ, այլ անոնց հոգին կենդանացնելու մեջ: Եվ ըսեմ ձեզի՝ այսօր ֆրանսերեն մեկ գիրք անցավ ձեռքս Եվրոպայի այս միության մասին գրված, ուր տող մը կար, որ շատ տպավորվեցաւ: Կրսե՝ մենք Եվրոպայի միության հայրերուն գործը կժառանգենք և ոչ մոխիրը, այլ կրակը: Մենք մեր հայրերը անուններու կվերածենք, բայց պետք է հոգիի վերածենք, ներշնչող, ինչպես կրսե բանաստեղծը: Վարդանի հոգին, Ս. Ներսես Շնորհալու բառերով ասած, ինչպես հրագունդ անշեջ, կմտնե ամեն հայու հոգու մեջ: Ներսես Շնորհալիին կամ ուրիշ մեծ դեմքերուն մինչ Հովհաննես Երզնկացին, այդ աքանչելի ներբողը Գրիգոր Լուսավորչի մասին, այդ բոլորը պետք է ներգործուն ուժ դառնան, ոչ թե մնան գիրքերու մեջ: Այդ հպարտությունը ձևական հպարտություն է: Հպարտությունը արժեք կունենա, երբ պարտականության կվերածվի, ժողովուրդի տեսակ մը ըմբոշխնման, ժողովուրդը կներթափանցվի հայրերու այդ բառերով, անոնց իմաստությամբ, անոնց հոգիով:

Իմ խոսքը այսօր կփակեմ հետևյալ պատգամի իմաստով, հանձնելով մեր սիրելի հին ու նոր ուսուցիչներուն և նաև մեր սիրելի աշակերտներուն: Հոգևոր դպրանոց մը, ճեմարան ըլլա, ժառանգավորաց վարժարան, ինչ անուն ալ որ ունենա, երեք տեսակ գործունեություններու համադրություն մրն է: Առաջին՝ աղոթք և պաշտամունք,

ԴԻՄԱՌՈՄՈ ԿՈՂՄԻՑԵՎԻՑԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՏԱԳԱՀԱՅԵՐԸ ՍՈՓՈՒԹԻՆ

երկրորդ՝ ուսում և կարգացում, երրորդ՝ գործնական ծառայություն: Այս երեք տարրերը եթե կարենանք պահել ներդաշնակությամբ, այն ատեն է, որ կունենանք հոգևոր պատրաստություն: Եթե երբեք մեկը միայն ու միայն շարական պիտի երգե և միայն ու միայն ծես պիտի սորվի և ատով պիտի կատարյալ և ամբողջական համարե իբրև հոգևորական պատրաստությունը, այդ բավական չէ: Եվ սակայն այն անձն ալ, որ ուսումնական իր մեծությանը, իր գիտական ճոխությանը մեջ կհպարտանա առանց աղոթքի, այդ հպարտությունը մեռցնող հիվանդություն մըն է: Այդպիսի մտավորականը ինձի համար մեծ նշանակություն չունի:

Եթե մտավորականը երբեք չկարենա իր ունեցած ուսումը, հմտությունը, իմաստությունը փոխանցել ժողովուրդին, ապա ինքն իր մեջ կբանտարկվի, կմնա: Շատ-շատ երբեմն-երբեմն գիրքերու մեջ կհիշատակվի, որոնք միայն մասնագետները կկարդան: Սիավասիկ, պարոն Տերյանը իր գործերուն մասին խոսեցավ: Ես տեսած եմ գիրքերին շարքին մեջ, բայց հարց տամ ձեզի՝ քանի՞ հայ կա, որ տեղյակ են: Ո՞վ գիտի նույն ինքն ամերիկային մեջ, որ Ռոբերտ Թոմսոն անունով մի անգլիացի, որուն ուսանողությունը կճանչնամ ես Քեմբրիջի համալսարանեն, երբ ինքը ամեն շաբաթ կճամփորդեր Լոնդոն հայերեն սորվելու համար: Շատ գրքեր թարգմանած է իմ ու ձեր հայրերու գրականութենեն ու հարց կուտամ, թե քանի՞ երիտասարդ կա Ամերիկային մեջ, որ գոնե տեղյակ ըլլա այս բոլոր գործերեն:

Մենք պետք ունինք ճառագայթումի, ինչպես երեկ հոգևորականաց համագումարին կրսեի մեր սիրելի եղբայրներուն: Ջուրը ավազանին մեջ պահեք կճահճանա, ջուրը պետք է հոսի, առվակվի, նոր կյանք տա ծառերուն և այդ ծառերեն բարի պտուղ կքաղինք: Ի միջի այլոց «աստվածաբանել», շարականներուն մեջ հիշված բառ է. «Քահանայք, աստուածաբանելով կՏէր խօսեցէք»: Աստվածաբանել չի նշանակե միայն գիտական պրպտում կատարել, գիտական գործերու հետևիլ, գիտական հոդվածներ գրել: ՁԱստված օրհնելը աստվածաբանել է, Աստուծո մասին խոսել է. «խօսք յաղագս Աստուծոյ»: Եթե չըլլա աղոթքը, ո՞ր աստվածաբանները պիտի կարենան ըլլալ Աստուծո թարգմանները: Պիտի ըլլան իրենք իրենց մեծ հեղինակություն ընծայող, իրենց անունով հպարտացող:

Մեկ օր պատահեցավ, որ մասնակցեցա մի ժողովի: Շատ խելացի, ամենեն սուր միտք ունեցողներեն մեկը, որ իմ եղբոր նման հոգևորական էր, ելավ բեմին վրա, ըսավ. հետևյալ տասը պատճառներով ես կպատմեմ Աստուծո գոյության մասին ճշմարտությունը ըստ Սվետարանի: Եվ շատ գեղեցիկ ձևով ներկայացրեց, հետո սակայն դարձավ և ըսավ. կարող էի տասը նույնքան պատճառներով այս ճշմարտության հակառակը փաստել: Այն ատեն ատենապետը ըսավ. այդ մարդը ինձի համար մեռավ իբրև աստվածաբան: Նա ճշմարտությունը վերածել է արվեստի, ճշմարտության մասին տրամախոսելու կարողություն մը ունի և ատիկա վերածել է ինքնաբավ գործունեության մը, ոչ թե Աստուծո և ժողովուրդի մեջ կամուրջ հանդիսանալու առաքելության:

Ես այս դպրեվանքի, այս Հոգևոր Ճեմարանի մեջ կիմանամ նաև սրբականներեն, որ դուք բացի ուսումեն, բացի աղոթքեն, կերթաք թեմերու մեջ գործ կընեք: Ատիկա հետքն է ճշմարտության: Գացեք և գործեք: Ավետարանի հատվածները, ճշմարտությունը ո՞վ պետք է տարածի ժողովուրդի մեջ: Մենք մեր մեջ խորհելով, խորանալով անոնցմով արդյոք խոսքին նպատակը իրագործած կըլլա՞նք: Հետևաբար, ես կոչ կընեմ սիրելի ուսանողներին ավելի շատ աղոթել: Առանց աղոթքի հոգևորական չեմ կրնա երևակայել: Հավաքական, հասարակաց աղոթք, անհատական, առանձնական աղոթք իրար հետ կապված են անքակտելիորեն: Այս մատուռը պետք է ըլլա ամենօրյա կյանքի, աղոթքի, առ Աստված հաղորդության, կորացման աղբյուր: Երկրորդ՝ գրադարանը, դասընթացը, ուսումը, ուսուցչին հետ հաղորդակցությունը, որքան կրնաք հմտանալ այդտեղ կամ Սենթ Վլադիմիր կամ ուրիշ տեղ, ըրեք: Երրորդ՝ ծավալեցեք այդ հմտությունը մեր ժողովուրդի կյանքում:

Կշնորհավորեմ ձեզ բոլորդ, շնորհակալ եմ այս ընդունելության համար և կմաղթեմ, որ բոլորդ ալ անպայման գաք Սուրբ Էջմիածին: «Անպայման» բառը կկրկնեմ, որովհետև մենք պետք է վերաթարմանանք մեր ավանդությամբ: Ես շատ օտար Եկեղեցիներ ճանաչեցի, աշխարհի շատ օտար երկրներ գացի, մեր Եկեղեցվո ավանդությունը ավելի մեծցավ աչքիս: Նացիոնալիկմ կամ շովինիկմ չեմ քարոզեր, բայց երբ կտեսնեմ, որ 5-րդ դարում Փիլոն Եբրայեցիին Հայաստանի մեջ մեր հայրերը կթարգմանեն, դա ինձ համար հոգեկան կորացման աղբյուր է, թե Հայաստանի մեջ Արիստոտելեն անգամ կթարգմանվի և այսօր Հայաստանը պետք ունի նոր ջրտուքի և եկեք Մայր Աթոռ, կորացեք ձեր հայրերու արմատներեն եկած ավիշով: Այս է իմ հրավերը, և մաղթանք ու օրհնություն ձեր բոլորին: Ձեր աչքի բիբին պես պահեցեք այս հաստատությունը, Սուրբ Ներսես Հոգևոր Ճեմարանը»:

Հանդիպումն ավարտվեց մտերմիկ զրույցով: Փոխանակվեցին հուշանվերներ:

6 ՄԱՅԻՍԻ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԾՆՈՐՀՎԵՑ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐԻ ԱՍՏԻՃԱՆ

Մայիսի 6-ի չորեքշաբթի օրը, առավոտյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբի ուղեկցությամբ ժամանեց Նյու Յորքի Եպիսկոպոսական Եկեղեցու (Անգլիկան Եկեղեցին ԱՄՆ-ում) Ընդհանուր Աստվածաբանական Քոլեջ (General Theological Seminary), ուսումնական մի հաստատություն, որն ամենահայտնի աստվածաբանական հաստատություններից մեկն է Միացյալ Նահանգներում, և ուր բարձրագույն կրթություն են ստացել մեծաթիվ հայ եկեղեցականներ:

Այստեղ Նորին Սրբությանը դիմավորեցին Նյու Յորքի Եպիսկոպոսական Եկեղեցու եպիսկոպոս Ռիչարդ Գրինը, Կանոնիկոս Ռոբերտ Ռայթը, եպիսկոպոսական այլ հոգևորականներ:

Հայոց Հայրապետը, զգեստավորվելով դպրեվանքյան կարմիր պատմուճանով, զանգերի զողանջների ներքո, անցնելով գեղեցիկ՝ ծաղիկներով զարդարուն պարտեզների միջով, մուտք գործեց Դպրեվանքի մատուռ, ուր հավաքվել էին Հայ և Եպիսկոպոսական Եկեղեցիների հոգևորականներ, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների Հայոց թեմական առաջնորդները:

Համապատասխան աղոթքների ընթեցումներից և սաղմոսների երգեցողությունից հետո, ամփոփ կերպով ներկայացվեց Նորին Սրբության կենսագրականը, եկեղեցանվեր ու հայապահպան գործունեությունը:

Ապա, Եպիսկոպոսական Եկեղեցու ավանդության համաձայն կատարված երեկոյան հատուկ արարողությունից հետո, ձեռամբ քոլեջի վերատեսուչ Ուորդ Էվինգի, հանդիսավորությամբ Հայոց Հայրապետին շնորհվեց Պատվավոր Դոկտորի աստիճան՝ ի գնահատություն Նորին Սրբության աստվածաբանական, միջեկեղեցական, գրական ու դաստիարակչական գործունեության:

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, շնորհակալություն հայտնելով այս բարձր գնահատության համար, իր խոսքում առանձնակի շեշտեց. «Կեանքիս ամենէն յուսիչ, ներշնչիչ եւ հոգեպէս բաւարարութիւն տուող պահերէն է այս պահը»՝ ընդգծելով Հայ և Անգլիկան եկեղեցիների սերտ բարեկամությունն ու փոխադարձ հարգանքը: Նորին Սրբությունը նշեց նաև, որ Օքսֆորդի համալսարանում ուսանած տարիներին ունեցել է Եպիսկոպոսական Եկեղեցուն պատկանող շատ ուսուցիչներ: Խոսելով Հայոց աշխարհի մասին՝ ասաց. «Մենք այլեւս այն երկիրը չենք, ուրկէ գաղթականներ կու գային: Մենք մաս կը կազմենք աշխարհի ազգերու ընտանիքին: Ի՜նչ փոփոխութիւն»:

***

Հանդիսավոր արարողությունից հետո, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, կազմակերպվեց հատուկ ընդունելություն, որի ընթացքում երկուստեք փոխանակվեցին հուշանվերներ: Քոլեջից մեկնելուց առաջ, Նորին Սրբությունը խնդրեց ղեկավարությանը, որպեսզի իր կողմից տրված Հայաստան այցելության հրավերքը վերջիններս փոխանցեն Անգլիկան եկեղեցու նախագահող եպիսկոպոս Ֆրանկ Գրիզուլդին:

Հանդիսությանը ներկա էին Եպիսկոպոսական Եկեղեցու սրբազան հայրեր, քոլեջի դասախոսներ, ուսանողներ, Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան, Արևմտյան, Կանադայի, Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի թեմերի առաջնորդները, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդը, սրբազան հայրեր Ամերիկայի և Կանադայի թեմերից:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Մայիսի 6-ի երեկոյան Նորին Սրբությունը, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների թեմական առաջնորդների, 100-ամյակի տոնակատարություններին մասնակցող եպիսկոպոսաց դասի և մեծաթիվ այլ հոգևորականների ուղեկցությամբ, այցելեց Ամերիկյան Սուրբ Գրոց Ընկերության Նյու Յորքի կենտրոն, ուր կազմակերպված էր ցուցահանդես Երուսաղեմի Սուրբ Հարություն տաճարի գմբեթի վերանորոգման կապակցությամբ:

Ցուցադրանքում տեղ էին գտել տաճարի գմբեթի վերանորոգման աշխատանքները պատկերող լուսանկարները, ինչպես նաև Հայ, Հույն, Կաթոլիկ և Ղպտի եկեղեցիների պատմա-մշակութային կյանքը ներկայացնող արժեքավոր իրեր, որոնք համարվում են Սուրբ Հարություն եկեղեցու պահպանիչ մասունքները: Ցուցահանդեսում ներկայացված էին նաև հայկական ձեռագրեր, մանրանկարներ, խաչեր, գավազաններ, զգեստներ, որոնք տրամադրել էր Ամերիկայի Արևելյան թեմի Առաջնորդարանը:

Ցուցադրանքը դիտելուց հետո, Սուրբ Գրոց Ընկերության նախագահ դոկտոր Ցուլին Հիփեքերը բարի գալուստ մաղթեց Ամենայն Հայոց Հայրապետին և նրա շքախմբի անդամներին: Ապա մեծաթիվ հրավիրյալներին ներկայացնելով Նորին Սրբությանը, նաև հիշեցրեց, որ Սուրբ Գրոց Ընկերությունը Սուրբ Գրքի իր ճոխ հավաքածուներով պատվավոր երկրորդ տեղն է գրավում աշխարհում: Դոկտոր Հիփեքերը չմոռացավ Հայաստանում՝ քաղաքամայր Երևանում գործող գրասենյակի մասին, իսկ վերջում Նորին Սրբությանը նվիրեց «Գիրք Ծննդոցի» մի գեղեցիկ հրատարակություն:

Այնուհետև ներկաներին իր ուսանելի խոսքը հղեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ ասելով, որ յուրաքանչյուր հայ ընտանիք ունի իր Աստվածաշունչը, որի վերջին էջերի վրա արձանագրում է ընտանեկան որևէ իրադարձություն: Պատմելով Սուրբ Էջմիածնում հաստատված Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի մասին, ավելացրեց. «Այժմ մեծ ջանասիրությամբ կը կատարուին նոր աշխատանքներ՝ Տիրոջ խօսքը ետ՝ տուն բերելու համար»: Շարունակելով իր խոսքը՝ Նորին Սուրբ Օծությունն ասաց.

«Սիրելի եղբայրներ և քույրեր,

Թույլ տվեք նախ և առաջ հայտնել, թե որքան հիացած և երախտապարտ եմ ձեզ՝ այս գեղեցիկ ցուցադրության համար, որն իմ սրտին շատ հարազատ է, քանի որ ինձ հիշեցնում է իմ առաջին հաղորդությունը Աստվածաշնչի հետ, երբ ես դեռևս մանուկ էի և ապրում էի մի լեռնային գյուղում: Այնտեղ մի հսկայական գիրք՝ Աստվածաշունչ

կար, որը թեև կանոնավորապես չէր ընթերցվում, սակայն մեր ընտանիքում տեղի ունեցող բոլոր իրադարձությունները գրանցվում էին Աստվածաշնչի հետևի մասում, և ես լավ գիտեմ, թե մեր հայ մարդիկ ինչպիսի խորին պատկառանք և պաշտամունք ունեն Աստվածաշնչի հանդեպ: Այսօր ես ուզում եմ իմ երախտագիտությունը հայտնել Ամերիկյան Աստվածաշնչյան ընկերությանը:

Գտնվելով Աստվածաշնչի և Աստծո խոսքի տարածման այս խոշոր կենտրոնում, ես ցանկանում եմ հղել իմ ողջույնները, արտահայտել իմ գնահատանքն ու շնորհակալությունը այն բոլոր գործերի համար, որ դուք արդեն կատարել, կատարում և դեռ շարունակելու եք կատարել ապագայում՝ մարդկանց կյանքում Աստծու խոսքի սերմանման և տարածման ուղղությամբ: Մենք ապրում ենք տեխնոլոգիական մի հասարակության մեջ, որտեղ թվերը, վիճակագրական տվյալները շատ ավելի մեծ տեղ ու դեր ունեն, քան որակը և բարոյական ու հոգևոր մեծությունները:

Հիշենք, սակայն, որ Աստծո խոսքը շարունակ ներկա է եղել մեր ամբողջ գրականության մեջ: 5-րդ դարի հայ պատմիչ Եղիշեի վկայությամբ, հայ հոգևոր դասը, պատասխանելով մայրենական պարսիկ արքայի պահանջին՝ հրաժարվել քրիստոնեական հավատքից և դառնալ զրադաշտական, հղեց մի թուղթ-պատասխան, որում ասվում էր, թե մենք մեկ հայր ենք ճանաչում Սուրբ Ավետարանը, իսկ մայր՝ Ընդհանրական Եկեղեցին Կաթողիկե: Սա ոչ թե պետք է գրվի թղթի կամ քարի վրա, այլ պետք է դառնա մեր կենսակերպը, ապրելակերպը: Այն ժողովուրդը, որն ընդունել է Աստվածաշունչը որպես իր ամենասեմ և գերագույն գիրքը, արժեքը, իր կյանքի շարժիչ ուժը և կենսատու լույսը, այժմ ունի լիակատար ապատություն, որը մուտք է գործել թե՛ մեր ժողովրդի կյանքում և թե՛ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Մենք հիմնել ենք Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոն, և ես կուզենայի, որ ձեր ներկայացուցիչները գային ու ականատես լինեին մեր ջանքերին՝ Աստծո խոսքը տարածելու մարդկանց, որոնք իրենց գրականության սկիզբը դրեցին Աստվածաշնչով:

Կուզենայի ձեր ուշադրությանը ներկայացնել մի դրվագ: Երբ 1935 թվականին մենք տոնում էինք Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակը, միջազգային հեղինակություն ունեցող բյուզանդագետ և հայագետ Նիկողայոս Ադոնցը նշեց, որ Աստվածաշնչի թարգմանությունը հայերեն շատ ավելի մեծ նշանակություն ունի, քան դրա թարգմանությունը լատիներեն, որովհետև Սուրբ Գրքի թարգմանությամբ հայերը սկսեցին օգտագործել իրենց գրերը: Մինչ Սուրբ Գրքի թարգմանությունը, հայերը չունեին իրենց գիրը, իսկ երբ Աստվածաշունչը թարգմանվեց լատիներեն, լատին լեզվով շատ ծաղկուն գրականություն արդեն գոյություն ուներ:

Այո, մենք գրի սկիզբը դրեցինք Աստծո խոսքը գրելով և առաջին գիրքը, որ թարգմանվեց և տարածվեց հայոց պատմության մեջ, Աստվածաշունչն էր: Այսօր ես այստեղ՝ Ամերիկայի Աստվածաշնչային ընկերությունում եմ, որը դուք կոչում եք Աստվածաշնչային տուն, իսկ

ըստ իս, ավելի ճիշտ կլինի կոչել Աստվածաշնչային թագավորություն: Ուստի ես դիմում եմ ձեզ և կոչ անում է՛լ ավելի մեծ կարևորություն տալ Հայ Եկեղեցու և Աստվածաշնչային ընկերության համագործակցությանը: Այս նոր դարու շրջանում մենք պետք է ավելի շատ ուշադրություն դարձնենք Աստծու խոսքի տարածմանը ժողովրդի կյանքում: Ես շնորհակալություն եմ հայտնում այսպիսի հավաքների, ինչպես նաև ցուցահանդեսի համար: Շնորհավորում եմ և բարձր գնահատում այն բոլոր մարդկանց և կազմակերպություններին, որոնք իրենց մասնակցությունն են բերում այս գործին»:

«Եթե պետք լինի Աստվածաշունչ ուղարկել ձեզ Հայաստանից,- ժպիտով եզրափակեց իր խոսքը Գարեգին Ա Վեհափառը,- մի՛ երկմտեք ինձնից խնդրել»:

Հանդիպման վերջում տեղի ունեցավ փոքրիկ հյուրասիրություն և փոխանակվեցին հուշանվերներ:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԻՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՐԵՑ ԱՄՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՏԱՐԵԿԱՆ 96-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Մայիսի 7-ի հինգշաբթի օրը, ժամը 12.00-ին, Սուրբ Վարդան եկեղեցում բացվեց Հայաստանյայց Եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի 96-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը, որն իր աշխատանքները շարունակեց մինչև մայիսի 9-ը:

Հետմիջօրեին, ժամը 2.00-ին, իր շքախմբով, «Հրաշափառ»-ի երգեցողությամբ Մայր Տաճար մուտք գործեց Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը և առաջնորդվեց դեպի Սուրբ Սեղան: Նորին Սրբության շքախմբի մաս էին կազմում Հյուսիսային և Հարավային Ամերիկաների թեմական առաջնորդները, եպիսկոպոսաց դասը:

Ամերիկահայոց Արևելյան թեմի առաջնորդ դերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, բարիգալստյան խոսքեր ուղղելով Նորին Սրբությանը, միաժամանակ հիշեց նաև Առաջնորդական թեմը հաստատող երջանկահիշատակ Խրիմյան Հայրիկի 1898 թվականի սրբատառ կոնդակի հետևյալ տողերը. «Ո՛հ, ո՛ տայր ինձ կթեւս արծուոյ, կի պացեալ առ քեզ հասանէի եւ կենդանի բանիւ խօսէի միմիթարէի» և ապա ավելացրեց. «Այսօր մեր Կաթողիկոսը ունի թեւեր՝ մեզի հետ ըլլալու, մեզ միմիթարելու եւ մեզի հետ թեմի հարիւրամեակը տօնախմբելու»: Խոսքի վերջում Սրբազան Հայրը հրավիրեց Նորին Սուրբ Օծությանը՝ իր հայրապետական պատգամը տալու ներկա պատգամավորներին, որոնք հոտնկայս և բուռն ծափահարություններով ողջունեցին Վեհափառ Հորը:

Իր հարգանքի ու երախտիքի խոսքն ուղղելով հայ գաղթակա-

նութիւնը, ում սերունդներն այսօր հպարտ ու գործունեայ քաղաքացիներն են դարձել այդ երկրի, Գարեգին Ա. Կաթողիկոսն ասաց.

«Սիրելի Առաջնորդ Սրբական, սիրելի Առաջնորդ Սրբականներ, հարգարժան Ատենապետ և թանկագին անդամներ թեմական պատգամավորական ընդհանուր ժողովի: Նախ կցանկանամ, որ հոս, ձեզի խոսքս ուղղելեն առաջ, դեպի երկինք բարձրացնեմ ձայնս և ըսեմ այն աղոթքը Շնորհալիին, որ տարիներե ի վեր հայ ժողովուրդի շրթներուն վրա կակղած է, հոգին պայծառացուցած է երկնային իմաստության շնորհներով. «Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն, կբարիս խորհել, կբարիս խոսել, կբարիս գործել յամենայն ժամ, ի չար խորհրդոց, ի չար բանից, ի չար գործոց փրկեա կիս եւ ողորմեա Քո արարածոց եւ ինձ բաղմամեղիս»: Թող այդ իմաստությունը երկնային իջնե մեր բոլորին վրա այսօր, մանավանդ այսօր, երբ մենք պատմության մեջ էջ մը կփակենք, նոր, ավելի լուսավոր էջ մը բանալու համար: Եվ իսկապես, ես կուզեի հայտնել այն իմ զգացումը, որ եթե հրեշտակներու թևերը չըլլային և եթե նույնիսկ մետաղե այդ հրեշտակները՝ ինքնաթիռներն էլ չըլլային, ես եկած կլինեի, լիներ ցամաքով թե ջրով, և եթե հարկ լիներ, անգամ ոտքով՝ թեմական կյանքի այս մեծ իրադարձության ականատեսը լինելու համար:

Հայրական ամենաքաղցր սիրով ողջունում եմ ձեզ բոլորիդ, երբ դուք այստեղ հավաքված եք այսօր պատմական դեպքի մը, մեր հայ ժողովուրդի դարավոր պատմության եւ հատկապես այս երկրում Հայ Եկեղեցու պատմության վերջին մեկ դարի ընթացքում պատմական մի իրադարձության առիթով: Ինչպես Սրբականը ըսավ, վերջին երեք տարիներին ես հանձն եմ առել իմ Եկեղեցուն ծառայելու ծայրագույն եւ ծանրագույն պատասխանատվությունը: Ես պետք է ձեզ հաղորդեմ իմ զգացմունքներն ու մտածմունքները, երազանքներն ու սպասումները, խրախուսանքն ու գնահատանքը: Ես ինձ վեհացած եմ զգում և երախտապարտ եմ Աստծուն, որ այս տարի այստեղ ձեզ հետ եմ, ձեր միջև, և դիմում եմ անձամբ ձեզ: Կկամենայի այս անձնական նվերը մատուցել մեր թեմին որպես ծննդյան նվեր՝ 100-ամյա տարեդարձի եւ ԱՄՆ-ում հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումների առիթով:

Կկամենայի նշել, որ այստեղ թեմական այս ժողովը սովորական հերթական ժողով, տարեկան հավաք կամ էլ մեր եկեղեցիների ներկայացուցիչների հավաք չէ: Այս ժողովը հատուկ նշանակություն ունի:

Ամերիկա այցելությանս առաջին օրը՝ կիրակնօրյա երեկոն ես այցելեցի Սբ. Վարդան տաճար: Այնտեղ մենք անդրադարձանք մեր կյանքի որոշ պահերի. Աստծուն գոհաբանական մաղթանքի պահ, ինքնագնահատման պահ: Ու՞ր է մեր հավատը, ու՞ր ենք հասել մենք այսօր, ովքե՞ր ենք մենք այսօր որպես Եկեղեցի և ի՞նչ ենք ակնկալում ապագայից: Դուք եկել եք այստեղ ոչ թե որպես անհատներ և ձեր ցանկությամբ: Դուք Աստծո մարդիկ եք՝ պատկանող Հայ Եկեղեցուն: Դուք հոգեպես նորոգվել եք, և եթե ձեզնից որևէ մեկն այժմ մտածում է լոկ իր մասին, ապա այս հավաքն իր առաքելության տեսակետից

ձախողվել է: Այստեղ մենք պետք է որպես Եկեղեցի միահամուռ, հավաքական լինենք, մեր անհատականությունից, խմբավորումներից, համայնքային անջատ մտածողությունից վեր կանգնած լայնախոհություն հանդես բերենք:

Մեկը պատկանում է Նյու Յորքի եկեղեցուն /կամ՝ համախում է Նյու Յորքի եկեղեցի/, մյուսը՝ Ուստրի եկեղեցուն, մեկ ուրիշը՝ Ֆլորիդայի կամ էլ Ամերիկայի մեկ այլ քաղաքում գտնվող եկեղեցու: Այստեղ մենք հավաքվել ենք՝ ինքներս մեզ դիտելու մեկ բոլորիս պատկանող թեմի՝ որպես մեկ միասնական ամբողջության, պատկերի /իմիջի/ մեջ: Այսօր ես կկամենայի բաժանել իմ խոսքը երկու մասի՝ նպատակ ունենալով արտահայտել.

ա/ թեմի դերն այսօր այստեղ իմ պատկերացմամբ, և

բ/ ձեզ փոխանցել այն ներկա իրողությունը, որն այսօր առկա է մեր հայրենիքում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Թեմի պատմությանը ծանոթանալիս տեղեկանում ենք, որ մեր հայրերի, այսինքն՝ այն սերնդի, որ գաղթեց ԱՄՆ, իննսուն տոկոսը, նույնիսկ եթե ոչ ավելին, եկան այստեղ որպես ծառայողներ, աշխատավորներ և «պանդուխտ եղբայրներ», ինչպես նրանց Խրիմյան Հայրիկն է նկարագրում: Բայց ի՞նչ է կատարվում մեզ հետ այսօր: Մենք ծառայողներ կամ բանվորներ չենք գործարաններում ու ֆաբրիկաներում, այլ դարձել ենք առևտրական, տեխնոլոգիական և այլ ֆիրմաների տերեր, և այս փոփոխությունը մեր հայկական մշակույթի ստեղծագործ ոգու վկայությունն է: Մի անգամ, մոտ 25-30 տարի առաջ, ես հանդիպեցի մի հայի, որն ասաց. «Ամերիկայում աշխատանքային իմ ողջ կյանքի ընթացքում ավտոմեքենաներ արտադրող մի գործարանում մեխ խփելուց կատ ես այլ բան չեմ արել: Ամեն մեկ վայրկյանը մեկ գամ»: Այժմ այս կերպարանափոխությունը մեր ստեղծարարության արդյունքն է:

Եվրոպայում իմ հրապարակային ելույթների կամ էլ աշխարհով մեկ կանոնական էկումենիկ հավաքների ժամանակ ես հաճախ ասել եմ մեկ բան. մեր ժողովուրդը եկավ այս երկիրը որպես փախստական, սակայն դարձավ քաղաքացի: Դեռևս կան մարդիկ, որոնք տասնյակ տարիներ գտնվում են օտար երկրներում, օրինակ՝ Եվրոպայում, սակայն երբեք չեն դարձել եվրոպացի: Մինչդեռ հայ գաղթականներն այստեղ՝ Ամերիկայում, ուր նրանք գաղթել էին, չմնացին օտարերկրացու պատկերի /իմիջի/ շրջանակներում:

Ես կարդացել եմ, որ առաջին տասնամյակների ընթացքում նրանք դեռևս փնտրում էին իրենց երկիրը: Երկիր, ժողովուրդ,- դրամ խնայենք, ուղարկենք մեր հայրիկներին, մայրիկներին, ուղարկենք մեր կանանց: Ահա սա էր այդ պատկերը: Իսկ ինչքան մարդիկ վերադարձան՝ փրկելու Հայաստանը: Անձամբ ես գիտեմ մարդկանց, որոնք վերադարձան Ամերիկայից՝ ապատագրելու իրենց հայրենիքը Առաջին Համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո, կամ էլ մինչ պատերազմի ավարտը:

Այսօր ինչպե՞ս պետք է գանք այն գիտակցությանը, երախտագի-

տությանն առ Աստված, որ մեր ապատ. անկախ հայրենիքի երազանքն իրականացել է: Այսօր Հայաստանը դարձել է արվեստի, արդարության, իրավունքի, լույսի, ապագայի երկիր. և դուք այսօր այն բախտավոր սերունդն եք, որը կարող է տեսնել մեր պատմության այս մեծ օրը: Ուստի, եկեք էլ ավելի պատրաստակամ, գիտակից, իրազեկ և պատասխանատու լինենք այն երևույթներին, որոնց այսօր դիմագրավում ենք: Եթե մեր հայրերը առանց լեզուն իմանալու, առանց համապատասխան գիտելիքների, կարողությունների և հմտությունների կարողացան հասնել այս ամենին, ապա ինչե՞ր կարող ենք անել մենք, մեր գալիք սերունդը: Անցյալի հուշերը, հիշողությունը զուտ պատմական հետաքրքրասիրություն չեն, և ես կոչ եմ անում, որ այս երկրի մեր երիտասարդ սերունդը պետք է է՛լ ավելի կենդանի ու աշխույժ դարձնի մեր եկեղեցին:

5-րդ դարի հայ պատմիչ Եղիշեն Ավարայրի ճակատամարտը նկարագրելիս գրում է. «Ամեն մի կինվոր ինքն իր մեջ մի եկեղեցի՞ էր»: Ահա դա է եկեղեցի լինելու որակը: Այն ժամանակ մենք չունեինք այս տաճարը, այժմ ունենք այն: Ի՞նչն է տարբերությունը. պատե՞րը, նյու՞թը, հոգևոր շու՞նչը, ոգի՞ն, կյա՞նքը եկեղեցում, այնտեղ ասված քարո՞զը, պատգա՞մը: Այժմ հոգևոր վերանորոգման ժամանակն է, և երբ ես տեսնում եմ մեր հոգևոր ու բարոյական մեծությունների /կամ չափանիշների/ նոր գիտակցությունը, ես հպարտանում եմ: Ահա սա է, որ կուզենայի հաղորդել այս երկրի իմ սիրեցյալ երիտասարդ սերնդին:

Ողջունում եմ ձեզ և խնդրում, որ երբ վերադառնաք ձեր ծիները, բոլորին փոխանցեք իմ այս խոսքը, որն իմ պատգամը չէ, այլ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնինը և Մայր Հայրենիքինը՝ հղված ձեզ իմ խոնարհ անձի միջոցով: Այդ պատգամն է՝ ներգրավվեք գործի մեջ, մի մնացեք մի կողմ քաշված, թողեք ձեր կյանքը պատմության էջի կենտրոնում: Անտարբերությունը, չեզոքությունն ամենամեծ մեղքերն են, որ մենք կարող ենք գործել Աստծո հանդեպ, և այն տեղի կունենա, երբ դուք հեռանաք այս տաճարից: Ծնողնե՛ր, ոչ թե ուղարկեք ձեր երեխաներին եկեղեցի, այլ բռնեք նրանց ձեռքը և եկեք նրանց հետ միասին: Մի՛ պատվիրեք նրանց անել այս կամ այն բանը, այլ արեք ինքներդ՝ նրանց հետ միասին: Մեր Տեր Քրիստոս չէր ասում, թե այստեղ է ճշմարտությունը, այս խելացի մտքի մեջ, կամ այս գրքում. «Ես եմ ճշմարտությունը», – ասում էր Նա: Ահա հենց դա է քրիստոնեական հավատքի բնույթը: Մեր հայրերը մեզ են փոխանցել այդ ըմբռնումը՝ և մենք պետք է դրան այսօր Ամերիկայում կենդանություն տանք:

Այսօր ես աշխարհին նայում եմ շատ մեծ հույսերով, որոնք այժմ կիսում եմ մեր սրբազան առաջնորդ հայրերի և արքեպիսկոպոսների հետ, որոնք այստեղ են ժամանել աշխարհի տարբեր մասերից՝ Հարավային Ամերիկայից, Կանադայից, իսկ ես ինքս էլ՝ Եվրոպայից, որտեղ այս տարի հովվապետական այցելություններ եմ տվել մեր Եկեղեցու երկու՝ Գերմանիայի և Եգիպտոսի թեմերին: Մենք տեսել և զգացել ենք շատ ավելի մեծ ներուժ մեր ազգի և մեր Եկեղեցու մեջ, քան

անցյալում երբևիցե տեսել կամ կգացել էինք: Ահա սա է մեր ներկա ընտրությունը, որ պետք է առաջնորդի մեկ դեպ նոր, է՛լ ավելի նշանակալի նվաճումներ: Եթե իմ հայրը կարողացավ այն, ինչ նա արեց, ապա էլ ինչ արժեք և իմաստ կունենա իմ կյանքը, եթե ես էլ պետք է անեմ լոկ նույնը. եթե պետք է չանեմ էլ ավելի շատ բան ու էլ ավելի լավ:

Այսօր ես եկել եմ ոչ թե իմ տանից, այլ ձեր տանից: Ս. Էջմիածինը միայն իմ տունը չէ: Եկել եմ ձեր հոգևոր տնից, ուր ես ապրել և ապրում եմ վերջին երեք տարիներին: Ես տեսել եմ Աստծո ձեռքերը՝ մեր մարդկանց մեջ աշխատելիս: Այսօր ձեզ հետ խոսելիս ես հիշում եմ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ուսանողներին, որոնք ամեն չորեքշաբթի գալիս են իմ աշխատավայրը: Հինավուրց Գևորգյան Ճեմարանն այժմ հիմնովին վերանորոգվել է և տեղավորում է հարյուր ուսանողի: Սա է մեր հույսը, մեր հիմնական ուժի, կորության սկզբնաղբյուրը: Իմ բարեկամներից մեկն այստեղ ասաց. «Այն, ինչի կարիքը մենք զգում ենք, մարդկային ռեսուրսներն են, նյութական ռեսուրսները կախված են մարդկայինից: Եթե մենք ունենանք մարդկային ռեսուրսներ, կարող ենք գտնել նաև նյութական ռեսուրսներ»:

Ինձ համար առաջնահերթ կարևորություն ունեցող հարցը Եկեղեցու սպասավորների այնպիսի մի սերնդի կազմավորումը, ձևավորումն է, որոնք կրեն առաքյալների, առաքելության գաղափարը, և որոնք հանդիպեն մարդկանց հետ ճիշտ այնպես, ինչպես մեր Տեր Հիսուս Քրիստոսն էր հանդիպում նրանց հետ: 70 տարի շարունակ մեր Եկեղեցու գոյությունը Հայաստանում կրել է բացառապես հիմնարկապահ /ինստիտուցիոնալ/ բնույթ, շենքի, հաստատության, հիմնարկության պահպանման բնույթ: Այժմ ժամանակն է, որ այդ հաստատությունը, հիմնարկը դառնա շարժում, ներկա, գործողություն մեր ժողովրդի հասարակական, սոցիալական և ազգային կյանքում: Ինչպե՞ս կարելի է դա անել. բարձրանալո՞վ ամբիոն Ս. Էջմիածնում և քարո՞զ ասելով, կամ հոդվա՞ծ գրելով: Ո՛չ, դա կարելի է անել՝ հասկացնելով մեր նոր հոգևորականներին իրենց դերը՝ որպես առաքյալներ: Ուրեմն, ուսուցման նոր մեթոդներ պետք է կիրառվեն այնպես, որ ոգեշնչեն և դրդեն մարդկանց՝ առաջ գնալ, այլ ոչ թե միայն կառչած մնալ մեր հայրերին: Ուստի, առաջին պատկերը, որ ես փորձում եմ տեսնել իմ և ձեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, նոր, երիտասարդ սերնդի ձևավորումն է, որը Եկեղեցում պատասխանատվություն հանձն կառնի:

Ուրեմն, մաղթում եմ ձեզ, որ երբ դուք գաք Հայաստան, ոչ միայն ինձ, Վեհարանը, մյուս մասնաշենքերը, եկեղեցիները տեսնեք, այլ նաև գնաք Քրիստոնեական Դաստիարակության եւ Քարոզչության Կենտրոն, տեսնեք մարդկանց սովորեցնելիս, տեսնեք մեր երիտասարդ սերնդի ուսուցիչներին: Այժմ մարդիկ ինձ հարցնում են. «Վեհափառ, կա՞ արդյոք կրոնական դաստիարակություն դպրոցում»: Ես ասում եմ. «Ոչ, բայց այն կա կրթության նախարարության պաշտոնական ուսումնական ծրագրում, սակայն կրոնական ուսուցման համար անհրաժեշտ տեղ, վայր չկա: Լինելով դեմոկրատական երկիր, մեր պետությունը չի

ապահովում որևէ տեղ, վայր՝ կրոն ուսուցանելու համար, սակայն եթե Եկեղեցին կամենում է կրոն ուսուցանել, ապա ապատ է՝ վարվել ըստ իր ցանկության»: Ունենալ կանոն՝ մեկ բան է, կիրառել այդ կանոնը՝ մեկ այլ բան: Այս առումով դեռևս շատ աշխատանք պետք է տարվի:

Կուզենայի, որ դուք հասկանաք, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ոչ միայն հիշատակման, վկայակոչման վայր է, այլև Հայ Առաքելական Եկեղեցու նոր, գործուն կենտրոնն է թե՛ Հայաստանի և թե՛ աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի համար: Չեմ ցանկանում այստեղ կեկույց տալ, համոզված եմ, որ ձեզնից շատերը ստանում են Ս. Էջմիածնում ժամանակ առ ժամանակ հրատարակվող մեր կեկույցը: Սակայն կկամենայի ընդգծել գործունեության այն երկու հիմնական ոլորտները, որոնց ստեղծմանը ես կցանկանայի, որ լիովին մասնակից լինեին Ամերիկայի թեմը և մեր բոլոր թեմերը: Դրանցից մեկը մեր Եկեղեցու կյանքի հիմնովին վերակերտումն է: Այստեղ ծխերը եկեղեցու մասն են, սակայն Հայաստանում մեր թեմերը դեռևս չունեն ծխեր:

Մենք պետք է վերակազմակերպենք եկեղեցու կյանքը մեր հայրենիքում այնպես, որ մարդիկ չընկալեն քրիստոնեությունը որպես փիլիսոփայություն կամ գաղափար, այլ՝ որպես սյուն: Ահա դա է քրիստոնեական հավատքի բնույթը: Մենք խոսեցինք հոգևոր դասի խորհրդակցության ընթացքում, և այս թեմի հոգևոր դասի մեջ առկա բարի կամքը այնքան զգալի էր, որ ես համոզված եմ, որ Հյուսիսային Ամերիկայի երեք թեմերի արքեպիսկոպոսները, թեմական խորհուրդների հետ միասին, ուղիներ կգտնեն՝ Եկեղեցու կյանքը համայնքային հիմքի վրա վերակառուցելու գործին իրենց մասնակցությունը բերելու համար: Մարդիկ պետք է զգան, որ Եկեղեցին իրենց հասարակական կյանքի մասն է:

Որտե՞ղ եմ ես սովորել քրիստոնեություն, ինչպիսի՞ն էին իմ դպրոցները: Ես այն սովորել եմ իմ ընտանիքում, գյուղում, համայնքում: Ահա դրանք էին իմ հավատքի սկզբնաղբյուրները, այլ ոչ թե գրքերը: Իմ տատիկը կարդալ չգիտեր, կրթություն չէր ստացել, քանի որ հնարավորություն չէր ունեցել հաճախել դպրոց: Սակայն նա եղավ այն մարդը, որն ինձ ուսուցանեց ողջ Աստվածաշունչը, ոչ թե բառերը, այլ՝ Հիսուսի հետ կապված բոլոր պատմությունները: Եվ հենց ընտանեկան, համայնքային կյանքն էր, որ նպաստեց, որպեսզի մենք մեծանանք Քրիստոնեական հավատքով: Ահա սա է, որ պետք է արվի մեր հայրենիքում՝ որպես մեր ամենաառաջնահերթ խնդիրներից մեկը:

Այնուհետև, ես կկամենայի նշել, որ մենք փայլուն հնարավորություն ունենք: Դա մեր մեր Եկեղեցու հիմնադրման 1700-ամյա հոբելյանն է: Սովորաբար ասում են՝ քրիստոնեության՝ պետության կողմից որպես մեր ազգի պաշտոնական կրոն հռչակման հոբելյան: Կարևորը ձևակերպումը չէ, մեր Եկեղեցին Առաքելական է, սակայն կարևորն այն է, որ մեր Եկեղեցու պաշտոնական կազմավորումը տեղի ունեցավ 301 թվականին: Ահա թե ինչու մենք նախապատրաստվում ենք 2001 թվականին տոնել մեր Եկեղեցու պաշտոնական կազմավորման 1700-ամյակը: Տվեք ինձ այլ

ապգերի անուններ, որոնք կարող են տոնել 1700-ամյա հոբելյան: Իմ սիրեցյալ եղբոր, այժմ արդեն երջանկահիշատակ, Վազգեն Ա Կաթողիկոսի հետ միասին Մոսկվայում ես ներկա գտնվեցի Ռուս Եկեղեցու 1000-ամյա հոբելյանի տոնակատարության հանդիսություններին:

Ռուս Եկեղեցին հիմնադրվել է 988 թվականին, Կիև քաղաքում: Երբ բացեք Օքսֆորդի բառարանը Քրիստոնյա Եկեղեցու մասին և նայեք Հայաստանի մասին եղած հատվածը, ապա առաջին նախադասությունը, որ դուք կկարդաք, այն է, որ հայերը եղան առաջին ազգը, որ ընդունեցին քրիստոնեությունը որպես իրենց պետական կրոն: Եթե մենք եղել ենք առաջինը և հպարտանում ենք այդ իրողությամբ, ապա ինչպե՞ս ենք մենք մեր դասագրքերում այն ողջ աշխարհի համար էլ ավելի արժեքավոր վկայություն դարձնելու, ինչպե՞ս ենք մեր հավաքույթներում հիշատակելու, որ առաջինն ենք այդ քայլը կատարել: Սակայն երբ կիսում ես կյանքի փորձառությունը քրիստոնեական աշխարհի մնացած մասի հետ, ապա այն դառնում է համաշխարհային կրոնի անբաժան մասը:

Ամեն անգամ, սակայն, երբ ես այցելում եմ Հայաստանի եկեղեցիները՝ Սանահին, Հաղպատ, Գոշավանք, Հաղարծին, Հովհաննավանք, Սաղմոսավանք, կամ Բյուրական ու շատ այլ եկեղեցիներ, և տեսնում եմ, թե ինչ վիճակում է դրանք մեկ թողել մեր անցյալ վարչակարգը, սիրտս ճմլվում է: Եթե մեր հայրերը 5-րդ, 7-րդ, 9-րդ, 13-րդ դարերում կարողացել են ստեղծել և մեկ թողնել այդ ճարտարապետական հուշարձանները, ապա ինչպե՞ս կարող ենք մենք այսօր դրանք այդպիսի լքյալ, ամայի, կիսավեր վիճակում թողնել: Ի՞նչ պիտի ցույց տանք աշխարհին 2001 թվականին: Եթե գան Եկեղեցիների պետեր, կպվմակերպվեն ուխտագնացություններ, ի՞նչ պիտի ցույց տանք. Էջմիածի՞նը միայն, Հռիփսիմե՞ն: Այսքան հարստություն, այսքան հոգևոր գանձ և, ինչպես ասում էր Գարեգին Հովսեփյանց Կաթողիկոսը, «Հայաստանյայց Եկեղեցին ամենամեծ հարստությունն է հայ ժողովրդի» և կամ «Հայ Եկեղեցին հայ ժողովրդի ամենաթանկարժեք գանձն է»: Սակայն ու՞ր է այժմ այն իմ, ձեր երկրում՝ մեր Հայրենիքում:

Եկեղեցին նորից պետք է կյանքի կոչվի, այն մեր պատիվն է և չենք կարող այդպես թողնել: Սհավասիկ, ինձ հետ է Գարեգին Սրբազանը, որ Արարատյան թեմի առաջնորդն է: Սուրբ Սարգիս եկեղեցին ունենք միայն և ուրիշ մի քանի փոքրիկ եկեղեցիներ, ինչպես, օրինակ, Սուրբ Զորավոր, Սուրբ Հովհաննես եկեղեցիները, կամ, ինչպես հիմա կառուցում ենք, ուրիշ փոքրիկ եկեղեցիներ: Մեկ հատիկ եկեղեցի չունենք իմ ու ձեր Հայրենիքի մեջ, որ երկու հարյուր հոգուց ավելի մարդ կարողանա տանել: Եվ փառք Աստուծո, իմ երջանկահիշատակ նախորդի տեսիլքն էր, երապն էր Մայր եկեղեցի շինել, հիմա արդեն դրված են հիմքերը: Հաջորդ երկու-երեք տարիների ընթացքին պիտի բարձրանան պատերն ու գմբեթները և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին պիտի ունենանք որպես վկայություն մեր նոր հավատքի, մեր չհնացող հավատքի, և սա ճառ չէ, հռետորություն չէ: Եթե ուզում ենք

ապրել ճշմարիտ հավատքով, ապա պետք է մեր հայրենիքի մայրաքաղաքի ճիշտ կենտրոնում վեր խոյացնենք այդ եկեղեցին, որը խորհրդանշելու է 1700-ամյա հոբելյանը:

Նաև ցուցահանդեսները, գիտաժողովները պետք է կազմակերպվեն և հրատարակությունները պետք է լինեն այնպես, որ մեր երիտասարդ սերունդը գիտակցի, թե ովքե՞ր և ինչպիսի՞ն են եղել իրենց հայրերն ու պապերը և թե ովքե՞ր և ինչպիսի՞ն պետք է այսօր լինեն իրենք, դեպի ու՞ր են իրենք գնում և ինչպիսի՞ սերունդ են դառնալու:

Կուզենայի հասկանաք, որ մենք այժմ շրջադարձային փուլում ենք: Այո, մենք ունենք շատ թերություններ և պակասություններ, բոլորս էլ մարդ արարածներ /կամ մարդկային էակներ/ ենք: Ո՞րն է այն մարդ արարածը, ո՞րն է այն մարդկային հասարակությունը, ո՞րն է այն Եկեղեցին կամ պետությունը, որը չունի և որտեղ չկան թերություններ, պակասություններ: Դրանք մեր մարդկային բնույթի մասն են: Սակայն կյանքը լույսի ու խավարի խառնուրդ է, և մենք կոչված ենք տարածել լույսը և ցրել խավարը: Ուրեմն, եկեք գիտակցենք մեր պարտականությունը դեպի դրական գործողությունը: Եկեք թեմը դարձնենք ավելի ու ավելի ուժեղ: Թող մեր երիտասարդները ոչ միայն Հայաստան գան, այլև մասնակցեն ուսանողական շարժմանը: Ինչպե՞ս պատահեց, որ անցյալ ամռանը, օգոստոսին, Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու հավատացյալ շուրջ մեկ միլիոն երկու հարյուր հազար մարդիկ՝ երիտասարդներ և աղջիկներ, կարողացան հավաքվել միասին Փարիզում: Ինչպե՞ս եղավ, որ 45 հազար երիտասարդներ անցյալ տարի հավաքվեցին Գերմանիայում՝ Մյունխենում: Ինչպե՞ս անցյալ տարի հուլիսին, երբ ես Ավստրիայում՝ Գրացում մասնակցում էի էկումենիկ հավաքի, այնտեղ հավաքվեցին 10 հազար մարդ, մեծամասամբ երիտասարդներ: Ինչու՞ այս բոլոր հավաքները կարող են տեղի ունենալ աշխարհում, իսկ մենք չենք կարող այդպիսիք կազմակերպել:

Արթնցե՛ք, եկեք վերադառնանք մեր բուն պարտականություններին: Մի պատվիրեք երիտասարդությանն անել այս կամ այն բանը, դա ձեր պարտականությունն է, կատարեք այն ինքներդ: Կուզենայի, որ դուք գալիք տարիներին մասնակցեք համաշխարհային շարժմանը: Ինքս անձամբ մասնակից և ականատես լինելով աշխարհում հոգևոր վերածննդի նոր ոգու դրսևորումներին, ինձ հարստացած, քաջալերված և կորացած եմ զգացել: Եվ սա ճշմարիտ է՝ առնչվի դա քրիստոնեությանը թե իսլամին, բուդդայականությանը թե որևէ այլ կրոնի: Ինչ աղվոր խոսք է ասել Խրիմյան Հայրիկը: Մի օր Գևորգյան ճեմարանի ուսանողներն ապստամբել էին: Կհարցնեք, թե՝ ինչու՞: Որովհետև նրանց պահքի օրերի ընթացքում միս չէին տվել: Խրիմյան Հայրիկը հարցրեց, թե ինչու՞ էին նրանք բողոքում: Ասացին՝ միս չենք ուտեր, Հայրիկ: Խրիմյան Հայրիկը դարձավ տնտեսվարներին և ասաց. «Առտու նախաճաշին, կեսօրը ճաշին, իրիկունը ընթրիքին միս տուէք»: Եվ դառնալով սաներին, ասաց. «Ուզածներիդ չափ միս կերէք, բայց իրարու միս մի՛ ուտէք»:

Խնդիրն այն է, թե ինչպես կարող ենք մենք կառուցել այնպիսի մի հասարակություն, որտեղ նորից ծաղկեն բարոյական, հոգևոր արժեքները և որոնք այնտեղ կլինեն մեր հարստությունն ու կորությունը: Ուրեմն, դիմում եմ, կոչ եմ անում ձեզ բոլորիդ, որ մասնակցում եք այս հավաքին, առաջ նայեք և տարածեք իմ այս պատգամը բոլորին: Այս հարյուրամյակը մի նոր դարաշրջան է լինելու, Ամերիկայում Հայ Եկեղեցու մի նոր տուն է բացվելու և նրա պատմության մեջ մի նոր էջ է գրվելու: Եվ մինչ դուք կշարունակեք ձեր հավաքը, ես նորից կվերադառնամ իմ գործերին: Ես միայն մեկ անձնական խնդրանք ունեմ՝ հիշեցեք ինձ ձեր աղոթքներում: Թող Աստված օրհնի ձեզ»:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Թեմական պատգամավորական ժողովի Բ նիստի ընթացքում տեղի ունեցավ Արևելյան թեմի առաջնորդի ընտրությունը: Ներկաների բացարձակ մեծամասնության քվեով երրորդ քառամյա շրջանի համար առաջնորդ վերընտրվեց դերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը:

Քվեարկության արդյունքները հայտարարելուց հետո, հոգևորականաց թափորը «Ուրախ լեր» շարականի երգեցողությամբ, Մայր Տաճար առաջնորդեց վերընտրված առաջնորդին: Թափորի մաս էին կազմում Կանադահայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Բրազիլահայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը, Ուրուգվայի թեմի առաջնորդ Տ. Հակոբ եպս. Գրիգորյանը, Տ. Արիս եպս. Շիրվանյանը Կալիֆորնիայից, բարձրաստիճան այլ հոգևորականներ: Այստեղ Սրբազան Հայրը հայերեն և անգլերեն լեզուներով շնորհակալություն հայտնեց ներկա պատգամավորներին՝ իր հանդեպ դրսևորած վստահության համար, և խոստացավ իր ուժերն ու կարողություններն առավել նվիրումով ի սպաս դնել թեմի առաջընթացին ու բարգավաճմանը: Ապա խոսեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ծննդյան 2000-ամյակի և քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյաններին նախապատրաստվելու մասին:

Ներկա պատգամավորների անունից Թեմական ժողովի ատենապետ դոկտոր Կարո Կարիբյանը նամակ հղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ տեղեկացնելով Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի վերընտրության մասին, խնդրելով, որ Նորին Սրբությունը վավերացնի այն:

Մայիսի 15-ին Ամենայն Հայոց Հայրապետը, ի պատասխան 96-րդ տարեկան Թեմական Պատգամավորական ժողովի ատենապետ դոկտոր Կարո Կարիբյանի 1998 թ. մայիսի 8-ի թվակիր նամակի, ատենապետին և հարգարժան ժողովականներին ուղղեց Խաժակ Սրբազանի վերընտրությունը վավերացնող հետևյալ գրությունը.

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՍՈՒԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊՍ. ՊԱՐՍԱՄԵԱՆԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

15 Մայիս 1998

Մեծայարգ
Տոքթ. Կարօ Կարիպեան
Ստենապետ Թեմական Պատգամաւորական Ժողովի
Ամերիկահայոց Արեւելեան Թեմի

Նիւ Եորք.

Սիրելի Տոքթ. Կարիպեան եւ յարգարժան ժողովականք,

Սրտի խոր գոհունակութեամբ ստացանք Ձեր 8 Մայիս 1998 թուակիր նամակը, որով կը յայտնէք Մեզի, որ Ամերիկահայոց Արեւելեան Թեմի Տարեկան Թեմական Պատգամաւորական Ժողովը (գումարուած Նիւ Եորքի մէջ 7-9 օրերուն) իր երկրորդ նիստին, Մայիս 8-ին՝ երրորդ քառամեայ շրջանի մը համար Թեմական Առաջնորդ վերընտրեց Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանը:

Հայրապետական այսու գիրով հաճոյքն ունինք հաստատելու եւ վաւերացնելու կատարուած ընտրութիւնը:

Ջերմօրէն կը շնորհաւորենք Պատգամաւորական Ժողովոյդ յարգարժան անդամները, որ իմաստութիւնը ունեցած են իրենց վստահութիւնը անգամ մը եւս արտայայտել հոգեւորականի մը նկատմամբ, որ իր ամբողջ եկեղեցական կեանքի եւ գործունէութեան ընթացքին ցուցաբերած է ամբողջական եւ կոհաբերական անձնուիրութիւն, յարատեւ ու տքնաջան աշխատանք եւ Արեւելեան Թեմիդ բերած է իսկական առաջնորդութիւն՝ անցնող ութամեակի ընթացքին:

Այս առիթով անգամ մը եւս կը շնորհաւորեմ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանը իր խոր հաւատքին եւ արտեռանդն աշխատանքին համար: Քաջ գիտենք իր աստուածատուր շնորհները, կորս ինք գիտցաւ լիառատ կերպով մշակել, ծաղկեցնել եւ Աստուծոյ ու իր Եկեղեցիին եւ ազգին ընծայել: Վստահ ենք, որ երրորդ վերընտրութիւնը նոր խթան, մղիչ ոյժ եւ ներշնչող կօրութիւն պիտի դառնայ, որպէսզի ութնամեայ իր բեղուն վաստակը աւելի եւս ճոխանայ ի բարին եւ ի վայելումն Ամերիկահայոց Արեւելեան Թեմի հաւատացեալ ժողովուրդին:

Այս առիթով կոչ կ'ուղղենք Թեմի հոգեւորականաց դասուն, Թեմական ժողովիդ, թեմական վարչութեան եւ Առաջնորդարանին կապուած բոլոր կազմակերպութեանց եւ ծիսական համայնքային խորհուրդներուն՝ բոլորուիլ վերընտրեալ Առաջնորդ Սրբազանին շուրջ եւ անոր վերին հսկողութեան ներքեւ յառաջ տանել Թեմիդ բոլոր հոգեւոր, կրթական, մշակութային, ազգային, ընկերային, վարչական,

կազմակերպչական գործունէութիւնները՝ միշտ բարձր պահելով մեր Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ եւ անոր հոգեւոր վերին կեդրոնի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան անունն ու պատիւը յայտ մեր հարապատ ազգայնոց եւ օտար Եկեղեցիներու եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու պետական իշխանութեանց եւ ժողովուրդին:

Ողջ լերուք ի Տէր, կօրհնեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԳԱՀԵՑ ՄԱՅԻՍԻ 7-Ի ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՎԱՔՈՒՅԹԸ

Ամերիկայի Հայոց թեմի հաստատման 100-ամեակին էր նվիրված այն մեծապես տպավորիչ գեղարվեստական միջոցառումը, որը տեղի ունեցավ Նյու՝ Յորքի Թաուն Հոլում, հինգշաբթի օրվա երեկոյան: Հարյուրամյա հոբելյանին նվիրված ներկայացումը, որ կրում էր «Գտնված ծղոտից՝ ոսկի» խորագիրը, հեղինակել էր «Մետրոպոլիտեն» արվեստի թանգարանի երաժշտական գործիքների բաժնի վարիչ Լոուրենս Լիբինը: Հանդեսը նախագահում էր Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը:

Ամերիկյան հասարակայնությանը ծանոթ տաղանդավոր հայ արվեստագետների շնորհիվ գեղարվեստական այս հայտագիրն ունեցավ բացառիկ հաջողություն և մեծ արձագանքներ:

Օրվա հանդիսավարը Սի Բի Էս հեռուստաընկերության աշխատակից Արմեն Քեթեյանն էր:

Վերջում, երբ բոլոր մասնակիցները բեմ հրավիրվեցին, համերգասրահում գտնվող արվեստասերները հոտնկայս ծափողջույններով դիմավորեցին ամենքին:

Ապա, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների թեմական առաջնորդների ուղեկցությամբ, բեմ բարձրացավ Նորին Սուրբ Օծությունը: Դիմելով թե՛ հայտագրի մասնակիցներին և թե՛ ներկա արվեստասեր հասարակայնությանը՝ Հայոց Հայրապետն ասաց. «Այսօր ես ուրախ եմ, որ Թեմական հարիւրամեակը կը նշուի մշակութային այս ձեռնարկով եւս: Երկու հազար տարիներէ ի վեր մշակոյթը կարգացուցած եւ պայծառացուցած է Հայ Եկեղեցին»:

Խոսքն ուղղելով արվեստագետներին, Գարեգին Ա Կաթողիկոսն ավելացրեց. «Դուք այսօր կամրջեցիք անցեալը ներկային, եւ ձեր գեղարուեստական նպաստը պիտի շարունակուի ապագային եւս: Ձեր ոգին կ'անդրանցնի ժամանակն ու անջրպետը»: Եվ ապա շարունակեց.

«Մշակութային կյանքի այսպիսի երեկոները, այսպիսի հոգևոր բարձրացումները խոսքի կարիք չունեն: Այսօր ես անհունորեն ուրախ եմ, որ ամերիկյան հողի վրա Հայ Առաքելական Եկեղեցու որպես առանձին թեմ հաստատման հարյուրամյակը նշվում է նաև այս մշակութային ձեռնարկով:

Վերջին երկու հազարամյակների ընթացքում հայ մշակութային կյանքը եղել է հայ եկեղեցական կյանքի էությունը, ուղն ու ծուծը, կարգացել Հայ Եկեղեցու սրտի և հոգու խորքում: Ուստի շնորհավորում եմ հայկական տոնակատարության հոբելյանի բոլոր մասնակիցներին, ովքեր այսօր այնքան գործուն կերպով են մասնակցում այս միջոցառմանը: Խորապես ապշվեցի, տեսնելով դեպի առաջ՝ դեպի ապագայինը նայող և ոչ միայն անցյալը հիշող նոր, երիտասարդ սերնդին:

Այստեղ ես լսեցի 8-րդ դարի եկեղեցական մի հիմն՝ գրված մի սրբուհու՝ Խոսրովիդուխտի կողմից: Այն հավերժացնում է հիշատակը Վահան Գողթնացի անունով մի նահատակի: Վահան Գողթնացին կոտորածների, ջարդերի ընթացքում գերեվարվում է և մանուկ հասակում մահմեդական դարձվում: Սակայն հետո հասկանալով, որ ինքը ծագումով հայ է, հրաժարվում է մահմեդականությունից, վերադառնում հայրենի երկիր և նորից ապրում ճշմարիտ քրիստոնյայի կյանքով: Իսկ երբ նրան բռնում են, բակում տանջանքներ կրելով, իր կյանքը պսակում է նահատակությամբ:

Այսօր դուք հիրավի կամրջել, կապել եք անցյալը ներկայի հետ, և այդ կամուրջը ձգվում է դեպի ապագան: Դուք կամրջեցիք 8-րդ դարը և ներկա դարը: Եվ այդ կամուրջն այն վեհ խորհրդանիշն-արտահայտությունն է, թե մեր տունն այնտեղ է, մեր արմատներն են այնտեղ, և ես էլ գալիս եմ այնտեղից՝ մեր Մայր Հայրենիքից և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Եվ դատարկ ձեռքերով չեմ եկել: Կցանկանայի ձեզ նվիրել ահա այս խաչը՝ բերված Սուրբ Էջմիածնից, ձեր, որպես քրիստոնյա ապգի, ծննդավայրից, մեր հայկական Բեթղեհեմից:

Թող մեր թեմը ծաղկի և, կապելով անցյալը ներկայի հետ, առաջ նայի դեպի ապագան, որովհետև մշակութային ու հոգևոր կյանքում գոյություն չունեն, չկան ժամանակային և աշխարհագրական սահմանափակումներ: Ոգին թափանցում է ժամանակի և տարածության մեջ ու տարածվում երկրե-երկիր, Հայաստանից Ամերիկա»:

Իր խոսքի վերջում, աջահամբույրի եկող յուրաքանչյուր արվեստագետի Նորին Սրբությունը հանձնեց մեկական հուշանվեր:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԱՅԻՍԻ 9-ԻՆ ՆԱԽԱԳԱՀԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ «ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏԱՐԵԴԱՐՁ» ԽՈՐԱԳԻՐԸ ԿՐՈՂ ԲԵՄԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

Մայիսի 9-ի շաբաթ օրը, Առաջնորդարանի Հայկ և Ալիս Գավուքչյան հանդիսասրահում, Նյու Յորքի և Նյու Ջերսիի

հայկական դպրոցների շնորհալի երեխաների մասնակցությամբ, ցուցադրվեց «Շնորհավոր տարեդարձ» խորագրով թատերգությունը, որը կազմակերպել էր Հայկական դպրոցների ուսումնական և մշակութային կենտրոնը: Հանդիսությունը նախագահելու պատիվը վերապահված էր Ամենայն Հայոց Հայրապետին:

Թատերգությունը ներառնում էր Ամերիկայի Հայոց Առաջնորդական թեմի հարյուրամյա պատմությունը: Ներկայացման նյութը պատրաստել էր ուսումնական ու մշակութային կենտրոնի տնօրեն Սիլվա Տեր-Ստեփանյանը, իսկ այն թատերգության էր վերածել բեմավար և դերուսույց Վարդան Հովհաննիսյանը:

Ավելի քան 1000 աշակերտներ, ծնողներ, բարեբարներ և հյուրեր էին հավաքվել հանդիսասրահում:

Ճիշտ ժամը 11.00-ին Նորին Սուրբ Օծությունն իր շքախմբով մուտք գործեց հանդիսասրահ, և, մինչ աշակերտական երգչախումբը, հոգեշնորհ Տ. Մամիկոն աբեղա Քիլեճյանի ղեկավարությամբ, երգում էր «Հրաշափառ»-ը, Հայոց Հայրապետն անցավ աշակերտների կողմից ծաղիկներով կազմած կամարի տակով:

Նախ Գարեգին Ա Վեհափառին, իր օրհնաբեր այցելության ուրախ առիթով, բարի գալուստ մաղթեց Առաջնորդարանի Խրիմյան Ճեմարանի շրջանավարտ Թամար Պարսամյանը, որից հետո սկսվեց ներկայացումը:

«Շնորհավոր տարեդարձ» թատերգությանը մասնակցում էին 100 աշակերտներ՝ խորհրդանշելով թեմի անցած 100-ամյա ուղին: Հանդիսության ընթացքում կարդացվեցին բանաստեղծություններ, հնչեցին խմբերգեր, կատարվեցին հոգեզմայլ մեղեդիներ, հայկական պարեր: Ելույթները բարձր գնահատվեցին ներկաների կողմից:

Վերջում հայկական դպրոցների անունից Ամենայն Հայոց Կաթողիկոսին գեղեցիկ հուշանվեր հանձնեցին թեմի երկու ամենահին դպրոցների՝ Յունիեն Սիթիի Նյու Ջերսիի, որ հարյուր տարիներ ի վեր հայեցի կրթություն և դաստիարակություն է ջամբում հայ մանուկներին և Ֆեուլոն Նյու Ջերսիի, որ իննսուն տարիներ ի վեր նույն գործն է կատարում, ներկայացուցիչ աշակերտները:

Այնուհետև թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը գնահատանքի իր խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետին և հրավիրեց իր հայրապետական պատգամն ու հայրական օրհնանքը բաշխելու ներկաներին:

Հուզված Վեհափառ Հայրապետը նախ բարձրորեն գնահատեց մասնակից դպրոցականներին, աշակերտությանն ընդհանրապես, տնօրինությանն ու ծնողներին: Խոսելով հայկական դպրոցների կարևորության մասին՝ Նորին Սրբությունը ոտքի կանգնեցրեց ներկա ողջ աշակերտությանը՝ երդվեցնելով նրանց, որ վերջիններս

«ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ՄԱՅՐԸ...»

«ՊԻՈՆԵՐՈՒ ԸՆԳԿՆՈՂ ՆՊԱՏ»
Է ՄԻՍՊՏՈՆ ԻՍ-«ՍՈՓՈՇՈՒԼԷ» ՇՏԳԼՈՒԺԵՈՒԷ ՍՈՓՈՒԷԳԻ



ԱՋԱՀԱՍԲՈՒՅՐ

Հավատարիմ կմնան Հայոց լեզվին, Սուրբ Մեսրոպ Մաշտոցին, Մայր Հայրենիքին և Հայ ժողովրդի հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին.

«Սիրելի և վերընտիր առաջնորդ Ամերիկայի հայոց Արևելյան թեմի, սիրելի հոգևոր եղբայրներ և ծնողներ ու թանկագին, ամենասիրելի փոքրիկներ, դպրոցականներ.

Այս բոլոր մարդիկ և տիկինները, որ նստած են այս սրահին մեջը, բոլորն ալ մե՛ծ հանցանք մը գործեցին: Գիտեք ո՞րն է այդ հանցանքը: Նախանձեցան ձեզի, նախանձեցան ձեզի, որ այսպես կայտառ նայվածքներով, բաց ճակատով, մատղաշ հոգիով դուք վերակենդանացուցիք այդ ամերիկյան հողի վրա դարավոր, ավելի քան 2780 տարիներ եղող Երևան քաղաքի, 1700-ամյա հոգևոր կենտրոն Սուրբ Էջմիածնի հավատքը, սերը, ոգին և ապագային ավելի մեծ ըլլալու տեսիլքը, կամքը և, մասնավորաբար, վճռականությունը: Ապրե՛ք երեխաներ, հապար ապրե՛ք: Այս առտու ես մասնավոր շնորհակալություն պիտի հայտնեմ ձեզի՝ դպրոցներու աշակերտներուդ: Այս մեծ-մեծ, խոշոր-խոշոր մարդիկը որ կան ձեր շուրջը, գալես ասդին այսպես խեղդած էին ինձի՝ Վեհափառ, հոս գնա, Վեհափառ, հոն եկուր: Մեկ խոսքով, օր մը ճաշ, օր մը Պատարագ, օր մը քարոզ: Ըսի ե՞րբ պիտի տեսնեմ մեր պարտեզի նոր ծիլերը: Սհավասիկ, այս առտու տեսա, ապատվեցա իրենցմե, եկա ձեզի մոտ: Հա, ուրա՞խ եք, թե՝ ոչ: Այ, հիմա լսեցի, որ ուրախ եք: Երկրորդ գաղտնիք մը ըսեմ ձեզի՝ պստիկներուդ, մեծերը չլսեն: Դուք չկարծեք, որ ես ծերացած եմ: Այդ ճերմակ մորուքս չկա՞, ամեն առտու կելնեմ, ճերմակ կներկեմ: Անոր համար, որ այդ խոշոր մարդիկը եթե ճերմակ մորուքով Կաթողիկոս չտեսնեն, անոր խոսքը մտիկ չեն ըներ:

Այսօր մեր հարյուրամյա ամերիկահայության թեմը նոր շունչ մը առավ, այն մի նոր, թարմ շունչ բերեց մեր համայնքի կյանքից ներս: Դուք պարտեզի մեջ եղա՞ծ եք, եղա՞ծ եք, պստիկներ, հա: Եթե ջուր տաս խոտին, խոտը կանաչ կըլլա, չէ՞, եթե ջուր տաս ծառին, ծառը կմեծնա, չէ՞: Դուք ալ նոր ջուր տվիք մեր հարյուրամյա հայոց թեմին ձեր երգերովը, ձեր թատերական ներկայացումովը, նվագով, մեկ խոսքով, ասեմ ձեզի, արև բերիք մեր հայոց թեմի մեջ այս առավոտ: Այսօր պատուհանից նայեցա, երկնքի վրա արև չկար: Ով Տեր Աստված, ըսի, առանց արևի ինչպե՞ս պիտի ապրինք: Հոգ մի ըներ, ըսավ: Այս առավոտ արևը Ինձի համար, քեզի համար պիտի ծագի այս փոքրիկներուն աչքերուն մեջեն: Այո՞: Եվ երբ որ դուք այսպես հայոց լեզուն, հայոց շարականները, հայոց երգերը, հայոց պարերը, հայոց նվագները կենդանացնեք, հավատացեք, արևը միշտ պայծառ կըլլա Արարատի գագաթեն, Սուրբ Էջմիածնի գմբեթեն մինչև Ամերիկայի չորս ծագերը՝ Ուստրեն, Բոստոնեն մինչև Նյու-Յորք և մինչև նորակալմ մյուս ծուխերը, համայնքները Ամերիկային տարածքի վրա, մինչև Կանադա և մինչև Հարավային Ամերիկա, մինչև Բրազիլ, մինչև Արգենտինա և մինչև Ուրուգվայ և գիտե՞ք մինչև ուր, մինչև Հնդկաստան, մինչև Ավստրալիա, Ինդոնեզիա, Նոր Զելանդիա: Ես հոն հայեր տեսած եմ, և նույն արևն է,

նույն բառերն են, նույն հոգևոր շարականներն են, որոնք մեկ կպահեն մեկ ապգ. մեկ Եկեղեցի:

Եվ հետևաբար, այսօր մենք, հարգանք ընծայելով այն բոլոր մեծ դեմքերուն, ովքեր մեկի կտակեցին այս թեմը, դուք՝ երեխաներ, ուրքի ելեք բոլորդ, դպրոցականներ, ելեք, նայեմ: Հա, ելեք: Հա՛, ապրի՛ք, ապրի՛ք, տեսնեմ ձեկի: Այսպես, երեխաներ, բարձրացուցեք ձեր ձեռքերը ճիշտ ինձի պես: Եվ ինչ որ ըսեմ հիմա, դուք ալ բառ առ բառ պիտի ըսեք: Կխոստանա՞ք ինձի: Կուխտեմ հավատարիմ մնալ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցիին, կուխտեմ հավատարիմ մնալ Մայր Հայրենիք Հայաստանին, կուխտեմ հավատարիմ մնալ Միացյալ Նահանգներու այս աքանչելի երկրին, կուխտեմ հավատարիմ մնալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, կուխտեմ հավատարիմ մնալ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ժանգ չվերցնող գիրին և հայոց լեզվին, կուխտեմ հավատարիմ մնալ քաջն Վարդանի սուրին:

Ապրի՛ք, և Աստված օրհնե ձեկ, ու երբ որ վերադառնամ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, այնտեղ գերեկման մը կա՝ Խրիմյան Հայրիկի գերեկմանը: Պիտի երթամ, ծունկի պիտի գամ ձեր բոլորի անունով և պիտի ըսեմ՝ Խրիմյան Հայրիկ, ելի՛ր: Եվ պիտի ըսե ինձի՝ ես արդեն երկինքն եմ և կդիտեմ ձեկի, թե ես դիտեցի ձեկի. Ես դիտեցի ձեկի 9 մայիսին, երբ հայոց նոր սերունդը՝ այս երեխաները, Նյու Յորք քաղաքին մեջ իրենց հավատարմության ուխտը կատարեցին և պիտի օրհնեմ ձեկի երկինքեն: Անիկա չէ մեռած: Մահացած է, այո՛, ֆիզիկականորեն: Բայց կապրի և կապրի ձեր մեջեն:

Հիմա, դուք ինձի խոստում մը պիտի տաք, եթե չտա՞ք, վայ եկեր է ձեկի, հա՛: Ես այսպես անուշ-անուշ չեմ խոսիր միշտ: Երբեմն նաև կպատժեմ: Խոստումը այս է. երբ որ դուք վերադառնաք, այս օրեն ետքը, դասընկերներ ունեք, բարեկամներ ունեք, ընկերներ, ընկերուհիներ ունեք, դրացիներ ունեք, պիտի շատցնեք թիվը այս հայկական գովեստներուն: Կխոստանա՞ք: Պիտի ըսեք՝ Հովհաննես, Թորոս, Մարալ, Թալին, ով որ կճանչնաք ձեր դասընկերներուն մեջ, հայդե, քալեք նայինք, քանի՞ հայերեն տառեր կան, քանի՞ հայերեն երգ գիտեք: Եթե դուք երգեք, եթե դուք խոսիք, անոնք կնախանձեն և կուգան: Ուրեմն, աշակերտ ըլլալ հայոց դպրոցին, չի բավեր, ուրիշներն ալ աշակերտ ընելը ձեր պարտականությունն է: Միսիոնար պիտի երթաք: Միսիոնար գիտեք ի՞նչ կնշանակե: Պիտի երթաք և պիտի տարածեք ձերը հայոց դպրոցին: Ապրե՛ք երեխաներ և հարյուրամյակը թող ըլլա նոր հարյուրամյակի մը բացված դուռը, դուք ըլլաք այդ դուռը բացողները և 21-րդ դարը երբ մտնենք մենք երկու տարիեն, այս 21-րդ դարին մեջ հայոց լեզուն միշտ կենդանի հնչե ամերիկյան այս հողին վրա:

Իմ խոսքը կփակեմ՝ շնորհավորելով մեր առաջնորդ Սրբազանը, շնորհավորելով հայ դպրոցի բոլոր պատասխանատուները, բոլոր այն անձերը, որոնք այս երեխաներուն այսօրվան շքեղ այս ներկայացումին մեջեն իրենց հայկական սերը արտահայտեցին, բոլորն էլ՝ կպվա-կերպողներ, ուսուցիչներ, ուսուցչուհիներ և դուք՝ ծնողներ: Այսպես ապրեցեք, այս է հայուն ճամփան դեպի պայծառ ապագան:

Դպրոցական երեխաներ, ես մեկի փոքրիկ նվերներ բերած եմ: Այս նվերները չառած, չերթաք»:

Հանդիսության վերջում դպրոցականները Ամենայն Հայոց Հայրիկին ու իր շքախմբին ճանապարհեցին Հայրապետական մաղթերգի երգեցողությամբ:

ՇԱԲԱԹ, 9 ՄԱՅԻՍԻ. ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԷԼԻՍ ԱՅԼԸՆԴ

Հակառակ խիստ աննպաստ եղանակին և անդադար տեղացող հորդառատ անձրևին, ավելի քան 3000 հավատավոր հայորդիներ մասնակցեցին Էլիս Այլընդում կազմակերպված պատվո հանդիսությանը՝ նվիրված բոլոր նրանց, ովքեր 100 տարի առաջ Ամերիկա էին մուտք գործել Էլիս Այլընդի ճանապարհով: Կղզին, որ այսօր վերածվել է թանգարանի, դարձավ նաև բազմահազար հայ գաղթականների անդրանիկ հանդրվանը Միացյալ Նահանգներում:

Օրվա երկրորդ կեսին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի, Միացյալ Նահանգներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ռուբեն Շուգարյանի, ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ Մովսես Աբելյանի, գերաշնորհ, հոգեշնորհ և արժանապատիվ հայրերի ուղեկցությամբ, այցելեց Էլիս Այլընդ կղզի:

Պատվավոր հյուրերի շարքում էին սենատոր Ալֆոնս Դ'Ամատոն, Նյու Յորքի քաղաքապետ Ռուդոլֆ Ջուլիանին, Նյու Յորքի Քաղաքապետական խորհրդի խոսնակ Փիթեր Վալոն, Նյու Յորքի Նահանգի կառավարիչ Ջորջ Փաթաքիի ներկայացուցիչ կոնգրեսմեն Փափասը, Ազգային Տոհմիկ Կազմակերպության ատենապետ Ուիլյամ Ֆուկեյզին: Ասենք նաև, որ վերջինիս Նորին Սուրբ Օծությունը պարգևատրեց մեդալով՝ երկար տարիներ ի վեր ամերիկահայությանը ցուցաբերած օժանդակության համար:

Գրական-գեղարվեստական միջոցառումն սկսվեց վրանների տակ: Հայտագիրը բացվեց «Մետրոպոլիտեն» օպերայի հանրածանոթ աստղ Լուսին Ամարայի կատարմամբ հնչած Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության հիմներգերով: Օրվա հանդիսավարն էր Համստեդ քաղաքի նախկին վերահսկիչ Գրեգորի Փիթերսոնը:

Էլիս Այլնդի հանձնախմբի ատենապետ Արմեն Ավետիսյանի բացման խոսքից հետո, ներկաներին բարի գալուստ մաղթեց քաղաքապետ Ջուլիանին՝ նշելով, որ Ամերիկայի Հայ Եկեղեցին և Նյու Յորք քաղաքը միասին են աճել, հասակ առել ու զարգացել: Այնուհետև անձամբ կարդաց իր պաշտոնական հայտարարությունը, համաձայն որի մայիսի 9-ը Նյու Յորք քաղաքում հայտարարվում էր որպես «Հայ Եկեղեցու 100-ամյակի օր»:

Սենատոր Ալֆոնս Դ'Ամատոն իր խոսքում առանձնակի շեշտեց. «Մենք պիտի չարտոնենք, որ քարոզիչին հետամուտ լինելը ոտնահարի արդարությունը: Թուրքական շրջափակումը պետք է վերջ գտնի, և այլևս օգնություն չպետք է տրվի այն ապգերին, որոնք ճնշում են ժողովուրդներին: Մենք հայ ժողովրդի կողքին ենք»: Վերջում ծերակուտականը ողջագուրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի և առաջնորդ Սրբազան Հոր հետ:

Նյու Յորք քաղաքի խոսնակ Փիթեր Վալոն ներկայացվեց որպես Պետրոս Վալոնյան՝ հայ ընտանիքի զավակ, ում ջանքերի շնորհիվ կազմակերպվեց Էլիս Այլնդի հայկական ցուցահանդեսը: Իր հարսին՝ Աննա Մերի Վալոնին ներկայացնելոց հետո, խոսնակն անդրադարձավ կղզու հայկական ցուցահանդեսին և ապա ասաց. «Ո՞ր ապգը այնքան չարչարուած է ապատութեան համար»: Վերջում նա ներկաներին ընթերցեց քաղաքային խորհրդի հայտարարությունը, որում խոսվում էր ԱՄՆ-ի հայոց թեմի կազմավորման հարյուրամյակի և հայերի՝ որպես քրիստոնեությունը պետականորեն առաջինն ընդունած ժողովրդի մասին:

Այնուհետև ներկայացվեցին այն անձինք, ովքեր Միացյալ Նահանգներ էին մուտք գործել Էլիս Այլընդի ճանապարհով: Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բաշխեց նրանց, ինչպես նաև հանձնեց պատվո վկայագրեր:

Հանդիսության ընթացքում ելույթներ ունեցան երեք մանկական երգչախմբեր. Ուոթերթաուն Մասսաչուսեցի Սուրբ Հակոբ եկեղեցու երգչախումբը՝ Արթուր Վերանյանի ղեկավարությամբ, Փրովիդենս Ռոթ Այլնդի Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ եկեղեցու երգչախումբը՝ Կոստանդին Պետրոսյանի ղեկավարությամբ, և Նյու Յորքի ու Նյու Ջերսիի ամենօրյա վարժարանների միացյալ երգչախումբը՝ Խորեն Մեյխանեջյանի ղեկավարությամբ:

«Շուշի» պարի համույթի կատարմամբ (պարուսույց՝ Սեդա Գանթարճյան) ներկաները ականատես եղան հայոց պարերի նազանքին ու անկրկնելիությանը:

Հանդես գալով շնորհակալության ու երախտիքի խոսքով՝ թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանն առանձնակի նշեց. «Մեր Հարիւրամեակի հանդիսութեանց ամէնէն տպաւորիչ պահն է այս պահը. հակառակ աննպաստ օդին եւ տխուր երկինքին՝ մեր գաղութի անդամներու հոգիներէն բխող ջերմութեան ու սիրոյ ճառագայթումները իրապէս խանդավառիչ եւ ներշնչիչ են»:

Ավարտելով ասելիքը, Սրբազան Հայրը հրավիրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ իր հայրապետական պատգամը տալու ներկաներին:

Նորին Սուրբ Օծությունը բեմահարթակ բարձրացավ ներկաների

բուռն ծափահարությունների ներքո: Ամենայն Հայոց Հայրապետը, դիմելով ներկաներին, նախ հորդորեց չմոռանալ անցյալը և ապա առաջ ընթանալ հույսով, ներշնչումով ու հավատքով: «Մեր հայրերը, որոնք անցան Էլիս Այլընտէն, կորսնցուցած էին իրենց անկախությունը, սակայն այստեղ գտան իրենց ազատությունը»: Գարեգին Ա Կաթողիկոսն առաջարկեց հոսանկայս պատվել բոլոր նրանց հիշատակը, ովքեր եկան այդտեղ ու գնացին երկինք: Ներկաները ոտքի կանգնեցին և, Հայոց Հայրապետի հետ մեկտեղ, աղոթեցին հանգուցյալների հոգիների խաղաղության համար:

Արցունքոտ աչքերով շարունակելով իր խոսքը, Նորին Սուրբ Օծությունը հորդորեց պահել ու պահպանել և զորացնել մեր ազատ ու անկախ Հայաստանը, քանզի մեր պարտքն է անկախության յոթ տարիները բազմապատկել յոթանասուն, յոթ հարյուր և նույնիսկ յոթ հազար տարիներով: Մենք անկախությունը ձեռք ենք բերել վեց հարյուր տարիների գերությունից հետո և եթե հանկարծ որևէ բան պատահի Հայաստանին, մեղավորը մենք կլինենք.

«Սիրելի առաջնորդ Սրբազան Հայր, սիրելի հոգևոր եղբայրներ, Հայաստանի Հանրապետության հարգարժան դեսպաններ Միացյալ Նահանգներում և ՄՍԿ-ում, հարգելի եղբայրներ և քույրեր.

Այս պահն այնպես, ինչպես ես եմ զգում, մեր բոլորի, առանց խտրության՝ հոգևորականի թե աշխարհականի, մեծի թե փոքրի, այր մարդու թե կին մարդու, մեր բոլորի գիտակցության մեջ պիտի մնա անջնջելի և նաև ներշնչող ուժ ունեցող պահ: Ով կմոռանա այս պահը, մոռացած կլինի ինք կինքը: 100 տարի այս երկրում ապրելուց հետո, մեր հայրերի վաստակը և այս մեծ երկրի առջև մեր հայության պատիվը բարձր պահելուց հետո, այսօր մենք բոլորս ներքին կերպարանափոխության կարիք ունենք: Այս պահը չպետք է լինի սովորական օրերից մեկը: Այն պետք է դառնա մի հատուկ օր՝ խմորիչ, կապդուրիչ, ներշնչող ուժ, խթան գալիք օրերի և տարիների համար: Ուզում եմ, որ բոլորդ ոտքի կանգնեք և հիշեք նրանց, ովքեր այս երկրից անցան և երկինք գնացին: Չմոռանանք մեր հայրերին և մայրերին: Եվ հիշենք նրանց հավաքականորեն մի հոգվոց ասելով:

Մեր մեծագույն բանաստեղծներից մեկի՝ Պարույր Սևակի բառերով եմ ցանկանում բացել իմ խոսքը՝ ներածական մի քանի տողերից հետո.

-Ողբամ մեռելոց, կոչեմ ապրողաց...

Հարգանք մեռելներին, պատիվ և պարտք ապրողներին: Այսօր, այս պահին ուզում եմ, որ բոլորս էլ անդրադառնանք այն իրողությանը, որ մեր հայրերը, երբ ոտք դրեցին այս կղզին, անցան այստեղով, նրանք իրենց Մայր Հայրենիքում չէին: Մի զգացմունք, մի հասկացություն, որ մարդու կյանքում ամենաարժեքավորն է՝ մարդկային կյանքից հետո: Այստեղ՝ ԱՄՆ-ում նրանք սակայն ազատություն գտան: Ազատության արձանը, որը մեր կյանքում նաև մեր Հայրենիքի խորհրդանիշն էր,

նրանց հիշեցնում էր ապատության գաղափարը: Գաղափար, որ դարձավ շարժում և իրականություն մեր Մայր Հայրենիքում:

Այն ժամանակ, երբ իմ երջանկահիշատակ նախորդներից անմոռանալի Խրիմյան Հայրիկը գրեց և ստորագրեց այն կոնդակը, որով հիմնում էր Հայ Առաքելական Եկեղեցու Ամերիկյան թեմը, նա գործում էր մի երկրում, որը գտնվում էր ցարական Ռուսաստանի իշխանության տակ: Հայոց Հայրիկին հաջորդած Հայրապետները և իմ անմիջական նախորդ Վազգեն Ա Կաթողիկոսը նույնպես, երբ եկավ այս երկիրը, գալիս էր մի երկրից, որը գտնվում էր Խորհրդային Միության տիրապետության տակ: Սակայն այսօր ես գալիս եմ ձեզ մոտ Հայաստանի ապատ և անկախ Հանրապետությունից:

Եղբայրնե՛ր, ապատությունը մարդկային բնության, էության, խառնվածքի և գոյության անքակտելի մասն է՝ տրված Աստծու կողմից: Եվ նրանք, ովքեր խլեցին մեկանից մեր ապատությունը, որքա՞ն ամոթահար պիտի լինեն այսօր՝ տեսնելով, թե մենք որքան վեհ գործեր ենք կատարել և որ ապատության արևը նորից ծագել է մեր երկրի վրա: Մենք բախտավոր սերունդ ենք: Իմ հայրը չտեսավ այդ օրը: Ձեր մեջ շատերի հայրերն ու մայրերը չտեսան այդ օրը աչքերը փակելուց առաջ:

Սիրելի եղբայրնե՛ր, մեկանից ո՞վ իմ տարիքին եղողներից չի հիշում Միքայել Նալբանդյանի բառերով գրված այն երգը, որ մեր մայրերը մեկ սովորեցրին.

Ապատն Աստված այն օրից,
Երբ հաճեցավ շունչ փչել...
«-Ապատությու՞ն , գոչեցի,-
Թող որոտա իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դավ դնե թշնամին...:

Եվ այսօր, այս պահին մանավանդ, երբ այս կղզու վրա ենք և ճաշակել ենք ապատությունը, որ մեկ տրված է, պետք է այն պահենք, գուրգուրենք, արժեքը գիտնանք: Ամրացնենք, կորացնենք, կարգացնենք մեր Մայր Հայաստանը, մեր ապատ ու անկախ Հանրապետությունը: Այսօրը նման չէ ուրիշ օրերի: 1918 թվականին մենք անկախություն ունեցանք, բայց ժամանակաշրջանի դեպքերն այնպես դասավորվեցին, որ կորցրեցինք այդ անկախությունը երկու տարի հետո: Փառք Քեզ, Աստված, փառք Քեզ, որ յոթ տարի առաջ վերստին ծնվեց ապատ ու անկախ հայությունը, Հայաստանը, և այսօր մեր պարտականությունն է յոթը վերածել 70-ի, 70-ը վերածել 700-ի, 700-ը վերածել հազարամյակների: Զգացական չլինենք միայն, խորհրդածենք: Սա պետք է մեկ համար լինի գիտակցության պահ. ովքե՞ր ենք մենք այսօր: Պետք է գիտակցենք, որ 600 տարվա գերությունից հետո, կրկին ապատ ու անկախ ազգ ենք դարձել: Ինչպե՞ս ենք այսօր ինքներս մեկ պահելու, դրսևորելու:

Եթե ժամանակին որևէ բան պատահեր մեր Հայաստանին, կասեինք, մենք չենք հանցավորը, այլ՝ օսմանյան կայսրությունն է, հետո էլ թե՝

ցարական Ռուսաստանն է, Մոսկվան է: Իսկ այսօր, եթե Հայաստանին մի բան պատահի, ո՞վ է հանցավորը: Մենք ենք մեր երկրի տերը, պատասխանատուն:

Կյանքիս 63 երկար տարիներին օտար, ամայի ճամփեքի վրա ապրելուց հետո, ես այս վերջին երեք տարիներին Աստծո կամքով և մեր ժողովրդի պահանջով կամ ընտրությամբ եկա Հայաստան և այլևս ինչքան որ Աստված ինձ կյանք է տվել, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին պիտի ընծայեմ: Այսօր մենք պետք է ունենանք արժեցնելու դասավորում՝ առաքնահերթություն, երկրորդահերթություն, երրորդահերթություն, չորրորդահերթություն և այլն: Առաջինն է մեր այսօրվա ունեցած ապատ և անկախ Հանրապետությունն ամեն բանից վեր նկատելը, որովհետև առանց այդ Հայրենիքի, մենք կդառնանք հացի կտորտանքներ՝ աշխարհի չորս կողմերում թափթփված և երկրորդ՝ մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մեր Հայոց Առաքելական Եկեղեցին, որ մեր ինքնության հետ է շաղախված:

Այստեղ պարոն Ավետիսյանը աքանչելի կերպով ասաց. «Հայ Առաքելական Եկեղեցին եղել է հայկական մշակույթի ավանդապահը»: Ես այդ խոսքերին կավելացնեի՝ «Ավելին քան ավանդապահը, Հայ Եկեղեցին հայկական մշակույթի կերտման ակունքը, աղբյուրն է»: Եվ ուրեմն, եկեք այսօր ձեռք-ձեռքի տանք, Ամերիկայի, Եվրոպայի բոլոր եղբայրական ազգերին և մանավանդ մեր թշնամիներին ցույց տանք, որ մենք արժանի ենք, տերն ենք մեր ապատության: Մեր բարեկամների ուրախությունը և մեր թշնամիների տխրությունը մեկ բանից՝ մեր միությունից, կախում ունի, երբ տեսնեն մեկ միացած՝ թշնամիները կկոտրվեն, բարեկամները կհրճվեն: Ինչպես 18-րդ դարում ասել է Կոստանդնուպոլսի մեր իմաստնագույն Պատրիարքներից Հակոբ Նալյան Պատրիարքը, անմիաբանությամբ մեծերը կփոքրանան և միաբանությամբ փոքրերը կմեծանան: Մենք պիտի մեծանանք այդ կերպ: Մեր հոգևոր տունը և մեր հայրենի աշխարհը պիտի գործակցեն:

Հույսով, լույսով, հավատքով նայենք ապագային: Մեր Եկեղեցին Ամերիկայում թող դառնա մի այնպիսի գործող ուժ, որ պայծառակերպի իր ժողովրդին իր արժանի Հայրենիքի համար և այդ Հայրենիքի ու պատմության մեջ մեր ճակատը բարձր պահելու համար և հպարտորեն ասելու. «Աստված մեզ հայ ստեղծեց, և այլևս մենք չենք կարող մեռնել իբրև հայ, այլ որոշել ենք ապրե՛լ իբրև հայ»:

Այսօր կամենում եմ հիշեցնել, որ այս օրը Շուշիի ապատագրության օրն է:

Նորին Սրբությունը հիշեցրեց նաև, որ նախորդ օրը քաղաքապետ Ջուլիանիի հետ հանդիպման ընթացքում վստահեցրել է նրան, թե արևն ամպերի տակից անպայման դուրս պիտի գա, երբ ինքը Էլիս Այլընդ մեկնի, ապա շարունակեց. «Այսօր հարցուցի քաղաքապետ Ճուլիանիի, թէ արեւը տեսա՞ւ. ան «ոչ» պատասխանեց: Այն ատեն ըսի, որ ուշադրութեամբ նայի ներկայ հայ պատանիներու եւ հայ ժողովուրդին աչքերուն մէջ, եւ այն ատեն արեւը պիտի տեսնէ»:

Էլիս Այլընդում կազմակերպված գրական-գեղարվեստական հայտագիրն ավարտվեց «Հայր մերի» երգեցողությամբ և Վեհափառ Հոր «Պահպանիչ»-ով:

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ ՈՒՈԼԴՈՐՖ ԱՍԹՈՐԻԱ ՊԱՆԴՈԿՈՒՄ

Արևելյան թեմի տարբեր շրջաններից ավելի քան 700 հայորդիներ էին ժամանել Նյու Յորք՝ մասնակցելու Ուոլդորֆ Ասթորիա պանդոկում կազմակերպված հարյուրամյակի ճաշկերույթին, որը նախագահում էր Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Պատվավոր հյուրերի թվում էին թեմական առաջնորդներ, բարձրաստիճան հոգևորականներ, ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ռուբեն Շուգարյանը, ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ Մովսես Աբելյանը, կոնգրեսմեն Ֆրանկ Փալոն, «Carnegie Corporation»-ի նախագահ դոկտոր Վարդան Կրեկորյանը, բարձրաստիճան այլ այրեր, քույր եկեղեցիների ներկայացուցիչներ:

Ճաշկերույթը բացվեց Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության մաղթերգերով, որ կատարեցին Անուշ Պարգլին և Վաղարշակ Օսկանյանը:

Իր խոսքում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ռուբեն Շուգարյանն ասաց. «Ես հպարտ եմ, որ պատկանում եմ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի կողմից ղեկավարվող գաղութին»: Ապա խոսելով Հայաստանի մասին, ավելացրեց. «Հայաստանը որպես մարմին Էջմիածնի կարիքն ունի՝ որպես իր հոգու»:

Այնուհետև, ներկաների ծափողջույնների ուղեկցությամբ, Թեմական խորհրդի ատենապետ Հայկ Տատուրյանը «Հայ Եկեղեցու տարվա անդամի» մրցանակը հանձնեց ազգային բարերար, ՀԲԸՄ փոխնախագահ ու գանձապահ, Նյու Ջերսիի Սուրբ Թովմաս եկեղեցու բարերար, Սուրբ Ներսես Ընծայարանի կենտրոնական վարչության անդամ Նազար Նազարյանին:

Շնորհակալություն հայտնելով նման բարձր պատվի արժանանալու համար, տիար Նազարյանը նաև ասաց, որ ինքը խորապես տպավորված է այն ազգայիններից, ովքեր շատ դժվարին պայմաններում ամեն ջանք ի գործ դրեցին՝ ի շահ Հայ Եկեղեցու պայծառության ու բարգավաճման, և որ ինքը վստահ է, թե իրենց զավակները պիտի շարունակեն այս գեղեցիկ ավանդույթը:

Ապա Ամենայն Հայոց Հայրապետը Հայաստանյայց Եկեղեցու բարձրագույն պարգևով՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրեց ազգային բարերար Նազար Նազարյանին, ինչպես նաև

Ֆիլադելֆիայի բնակիչ Սարգիս Հակոբյանին՝ ի գնահատություն «Հարյուրամյակի Հիմնադրամին» վերջինիս կատարած մեծագույն նվիրատվության:

«Հայերի բարեկամ» մրցանակին արժանացավ կոնգրեսմեն Ֆրանկ Փալոն Կրտսերը, որ, ի նպաստ Հայության, մեծ աշխատանք է կատարել և շարունակաբար պայքարել է, որպեսզի Հայոց ցեղասպանությունը ճանաչման արժանանա Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից:

Իր հերթին խորին շնորհակալության խոսքեր ուղղելով ներկաներին, կոնգրեսմեն Ֆրանկ Փալոնն ասաց, որ ինքն այս մրցանակն ընդունում է ոչ թե անցյալում իր արածների, այլ ապագայում անելիքների համար, որոնք ծրագրում է այժմ: «Գիտեմ, թե որքան մեծ կարևորություն ունի Եկեղեցին հայ ժողովրդի համար,- ասաց նա:- Լաչինի շրջան կատարած իմ առաջին այցելության ընթացքում եկեղեցի չկար, իսկ վերջին այցելությանս ժամանակ արդեն տեսա նորակառույց մի եկեղեցի»:

Խոսելով Հայ Եկեղեցու անցած պատմական ուղու մասին, դոկտոր Վարդան Գրիգորյանն ասաց. «Որոշենք ըլլալ մէկ ազգ, ներառեալ բոլոր եկեղեցիներն ու քաղաքական կուսակցությունները: Մէկ մարմին, մէկ Եկեղեցի՝ առանց վարչական բաժանումի...»:

Հընթացս արարողության, Սուրբ Վարդան եկեղեցու դպրաց դասը, Խորեն Մելիքանեջյանի ղեկավարությամբ, ներկայացրեց մի շարք երգեր:

Ներկաներին սրտի խոսք ասաց նաև թեմի առաջնորդ դերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը և, հավարտ իր խոսքի, հրավիրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ իր հայրապետական պատգամը տալու ճաշկերույթի մասնակիցներին:

Նորին Սուրբ Օծությունը, խոսելով Առաջնորդական թեմի հարյուրամյակի, ինչպես նաև հայ ժողովրդի հոգևոր, կրթական ու նյութական հարստությունները լավագույնս օգտագործելու կարելիության մասին, դարձյալ կոչ ուղղեց երիտասարդությանը, որպեսզի վերջիններս գործուն դեր ստանձնեն համայնքային կյանքում՝ մեր ապագան ապահով ուղու մեջ դնելու համար: Իրեն հատուկ պերճախոսությամբ Հայոց Հայրապետը, միտքը շարադրելով թե՛ հայերեն և թե՛ անգլերեն լեզուներով, հյուրասիրությունն անվանեց «մեր նախահայրերի 100 տարվա վկայության և ծառայության բացառիկ շնորհակալական ճաշ: Մենք այլակերպված, այսինքն պայծառակերպված ազգ ենք»,- ընդգծեց նա, նշելով, որ ինքն Ամենայն Հայոց առաջին Կաթողիկոսն է, որ գալիս է ազատ և անկախ Հայաստանից:

«Սակայն ո՞վ ենք մենք և որտե՞ղ ենք մենք»,- հարցն ուղղելով ներկաներին, Նորին Սրբությունն այն միտքը հայտնեց, թե «Մենք երբեք չենք ունեցել հոգևոր, կրթական և նյութական հարստության նման ներուժ: Ինչպե՞ս ենք մենք համակարգում այս ներուժը և մեր երկիրը դարձնում ուժեղ: Ազատությունն առանց պատասխանատվության ազատություն չէ»:

Անդրադառնալով Միացյալ Նահանգներում Եկեղեցու դերին, Վեհափառ Տերը շեշտեց, որ ազգի առաքելությունը «ոչ միայն իր հետաքրքրությունները բավարարելն է, այլև իր արժեքների խլախուսելը: Սպագայի մարտահրավերները կարող են լինել բարոյական, այլ ոչ թե նյութական, ինչպես Ամերիկան վորեղ է իր սկզբունքների շնորհիվ»:

Կրկին անգամ ընդգծելով ապագային Հայացքը հառելու կարևորությունը և ոչ թե միայն անցյալին կառչելու, Հայոց Հայրապետը կոչ արեց երիտասարդ սերնդին՝ ծառայել Եկեղեցուն, իսկ ներկա առաջնորդներին՝ «խրախուսել նրանց այդ գործում: Քաղաքակրթությունը ճամփորդություն է և ոչ թե ապաստարան»,- ասաց Նորին Սրբությունը՝ իր խոսքն հաստատելով պատմաբան Արնոլդ Թոյնբիից արած մեջբերումով: Խոսքը շարունակելով անգլերենով՝ Հայոց Հայրապետն ասաց.

«Սիրելի՛ եղբայրնե՛ր և քույրե՛ր.

Այս երեկոյան հավաքույթը յուրահատուկ, առանձնահատուկ նկարագիր ունի և չի նմանվում որևէ ուրիշ հավաքույթի, որ մենք կարող ենք կազմակերպել, կազմակերպել ենք և դեռ կազմակերպելու ենք արանից հետո: Ես կուզենայի անվանել այս ճաշկերույթը գոհաբանական մաղթանքի ճաշկերույթ: Սա մեկ համար մի առիթ է՝ շնորհակալություն հայտնելու և փառք տալու մեր Երկնավոր Հորը վերջին 100 տարիների ընթացքում մեր կյանքի, վկայության և ծառայության համար, որ մենք իրագործել ենք ամերիկյան այս հզոր երկրում: Մենք եկանք այստեղ հինավուրց մի երկրից՝ Հայաստանից, որը տարածվում է Արարատ լեռան չորս բոլորը: Ըստ Աստվածաշնչյան վկայության և ըստ պատմության, Արարատն այն լեռնագագաթն է, որտեղ փրկություն գտավ մարդկությունը: Այսօր մենք հարգանքի տուրք ենք մատուցում մեր հայրերի հիշատակին, ովքեր 100 տարի առաջ Էլիս կղզում ոտք դրեցին այս երկիր:

Այսօր ինչքա՜ն հուսատու էր օրը սկսել մեր առաջնորդ Սրբազանի և թեմական խորհրդի կողմից կազմակերպված բեմադրությամբ՝ փոքրիկների մասնակցությամբ:Ես խիստ հուզվեցի՝ տեսնելով այդ փոքրիկներին, նրանց պայծառ աչքերի նման՝ լի ապագայի երազանքներով, այլ ոչ թե մեր նախատատերի և նախապապերի աչքերի նման, ովքեր այստեղ եկան մի թշվառ երկրից, որը պատկերվում էր որպես ողբի, դժբախտության և մահվան հովիտ: Սա ինչպիսին էր նրանց երկրի վիճակը, երբ նրանք եկան այստեղ: Մենք եկանք որպես փախստականներ՝ փնտրելով ազատություն և գտանք այդ ազատությունն այստեղ:

ԱՄՆ-ում մենք տուն, օթևան գտանք այն ժամանակ, երբ մեր Հայրենիք Հայաստանում չէինք կարող ապրել պատշաճ կերպով: Գոհություն Աստծուն, որ այսօր մեր երազանքները, որոնց հույսն էինք փայփայում, իրականություն դարձան: 100 տարի առաջ այստեղ եկող բոլոր հայերն այն հույսն ունեին, որ օրերից մի օր կտեսնեն Հայաստանը՝ դարձած ազատ ու անկախ երկիր:

Փառք Աստուծո, որ նրանց երազանքն իրականացավ: Նրանք եկան այս երկիրը՝ աշտապես խոսելով, երգելով, գրելով իրենց երկրի մասին: Նրանցից շատերը չտեսան իրենց հայրենիքն ազատ ու անկախ: Էլիս կղզում մենք բոլորս միասին գոհություն տվեցինք Աստծուն և հոգեհանգստյան արարողության ժամանակ օրհնեցինք նրանց և խնդրեցինք Աստծուն՝ Իր օրհնությունը տալ մեր նախահայրերին, ովքեր հաստատուն մնացին իրենց ինքնության և արժանապատվության ըմբռնման մեջ: Ես ձեզ կպատմեմ մի պատմություն, որը լսել եմ Բոստոնում, մի տիկնոջից՝ Լիրա Կարագյոզյանից: Մի անգամ, շատ տարիներ առաջ, հայերը հավաքվել էին այսպիսի մի ճաշկերույթի առիթով: Հրավիրյալների թվում էր նաև քաղաքի ոստիկանության պետը, որն ասաց հավաքվածներին. «Մինչև հիմա ես չգիտեի, թե այստեղ այսքան շատ հայեր են ապրում, որովհետև ոստիկանության արձանագրությունների մեջ կամ հանցագործների ցուցակներում ես դեռ չեմ հանդիպել -յան վերջավորությամբ ազգանվան»:

Ինձ պատմել են, որ երբ մեր հայրերը ոտք դրեցին Էլիս կղզուց, ամերիկյան առաջին քաղաքներից մեկը, ես կարծում եմ, Նյու Յորք, նրանք հարցնում էին. «Ինչպե՞ս Ամերիկա երթանք»: Երբ նրանց պատասխանեցին, որ իրենք արդեն Ամերիկայում են, նրանք ասացին, որ իրենք Ուստրն էին ուզում: Այդ մարդիկ Ամերիկայի մասին Ուստրից բացի ուրիշ ոչինչ չգիտեին, որովհետև այնտեղից էին նրանք ստանում նամակներ, չեկեր և որոշակի օգնություն:

Այսօր այդ սերնդին փոխարինել է մի նոր սերունդ, որը դուրս եկավ փախստականի կարգավիճակից: Հայերը դարձան այս երկրի արժանապատիվ քաղաքացիները: Ուր էլ որ ես եղել եմ այս երկրում, ոչ միայն այս այցելությանս ժամանակ, այլ շատ ուրիշ առիթներով, ամենուրեք հանդիպել եմ հայկական ծագում ունեցող և աչքի ընկնող ամերիկյան քաղաքացիների, այդ թվում՝ քաղաքապետերի, նահանգապետերի և բարձր պատասխանատվություն ստանձնած ականավոր անձանց: Մենք այդ կերպարանափոխության միջով անցանք: Այսօր ես եկել եմ շնորհավորելու ձեր 100-ամյակը և եկել եմ ազատ ու անկախ երկրից:. Այս գոհաբանական մաղթանքի ճաշկերույթի ժամանակ ես կուզենայի ձեզ առաջարկել մի ճաշատեսակ, որն այստեղ շատ ավելի պատշաճ կլիներ: Ամեն տարի, նոյեմբերի վերջին հինգշաբթի օրը, Ամերիկայում նշվում է որպես Աստծուն գոհաբանական մաղթանքի օրը, և մարդիկ ճաշակում են հնդկահավով պատրաստված մի ճաշատեսակ: Այսօր կուզենայի, որ մենք ճաշակեինք հարիսա՝ արտահայտելու մեր երախտագիտությունն առ Աստված: Գոհաբանական մաղթանքի պահն այն պահն է, երբ մենք պիտի խորհենք հետևյալ երեք հարցերի շուրջ.

1. Ովքե՞ր էինք մենք և որտեղի՞ց եկանք:

2. Ովքե՞ր ենք մենք այսօր, որ ապրում ենք այստեղ, և

3. Ովքե՞ր ենք լինելու և դառնալու ապագայում:

Սիա այս երեք հարցերը պիտի մենք տանք ինքներս մեզ այսօր և դրանցից առաջինին էր, որ ես փորձում էի պատասխանել քիչ առաջ: Ովքե՞ր ենք մենք այսօր այստեղ՝ Ամերիկայում: Եկեք փորձենք գնահատել ինքներս մեզ: Իմ գնահատմամբ և ելնելով մեր պատմական նախադրյալներից, հայ ժողովրդի ներկայիս կյանքին ծանոթ լինելով թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում, ես գտնում եմ, որ մենք չենք ունեցել այնպիսի ժողովուրդ, այնպիսի իրավիճակ և այնպիսի ապագային ներուժ, լինի դա մտավոր, հոգևոր թե նյութական, ինչպիսին որ մենք ունենք այժմ: Շատ տարիներ առաջ, ավելի քան 25 տարի առաջ, ես տեսա Ամերիկայում հրատարակված մի գիրք, որում կար Ամերիկյան տարբեր համալսարանների 1500 հայազգի պրոֆեսորների ցուցակ: Այսօր մենք ունենք Է՛լ ավելի հզոր ներուժ, քան շարունակ շատ ու շատ դարեր: Այսօր, իմ կարծիքով, խնդիրն այն է, թե ինչպես ենք համակարգելու այն ամբողջ ներուժը, որ առկա է Ամերիկայում, Եվրոպայում կամ էլ Միջին Արևելքում, ինչպես ենք կիրառելու այդ ներուժը:

Իմ սիրելի բարեկամ ու նախկին ուսանող Վարդան Գրիգորյանը խոսեց Հայ Առաքելական Եկեղեցու մասին: Թերթեցեք մեր պատմության տարեգրությունը: Եկեղեցին միշտ եղել է ստեղծագործության աղբյուր: Ի՞նչ կունենանք, եթե մեր պատմությունից դուրս թողնենք մեր Եկեղեցին: Ասացեք խնդրեմ, ո՞ւր են մեր հզոր բարեկամները կամ խոշոր հաղթանակները, նվաճումները, կամ էլ քաղաքական տիրապետությունները, ո՞ր դարում են եղել դրանք, բացի Տիգրան Մեծի գահակալության շրջանից: Ե՞րբ ենք մենք ունեցել հզոր տնտեսական ներուժ: Մենք շատ հաճախ ենք ենթարկվել օտարերկրյա ներխուժումների: Խրիմյան Հայրիկ Կաթողիկոսը, որ գրեց և ստորագրեց այն պատմական կոնդակը, որով էլ հիմնեց ամերիկահայ թեմը, ապրում էր ցարական Ռուսաստանի տիրապետության տակ, երբ փակվում էին հայկական դպրոցները, բռնագրավվում հայերի կալվածքները, ունեցվածքը, իսկ Կաթողիկոսի հոտի մի մասն ապրում էր Արևմտյան Հայաստանում:

Այսօր մեր երկիրը պետք է վերադառնա այն գիտակցության, որ հանդիսանում է ազգերի համաշխարհային ընտանիքի անդամ և ունի իր տեղը ՄԱԿ-ի կենտրոնակայանում: Կերպարանափոխությունը ստիպեց մեզ Է՛լ ավելի պատրաստակամ դառնալ և նպաստել, որ մեր ներուժը կարկ տա մեր ազգի կարգացմանն ապագայում: Սիա սա է, իմ ըմբռնմամբ, մեր ժողովրդի այսօրվա խնդիրն այստեղ՝ Ամերիկայում: Վերջերս, 3-4 շաբաթ առաջ, ես կարդում էի «Թայմ» հանդեսը, որի խմբագիրը նկարագրում է այս երկրորդ հազարամյակի վերջը, 20-րդ դարի վերջը և նշում, որ 20-րդ դարը եղել է, ես մեջբերում եմ կատարում, «ազատության, կապիտալիզմի, էլեկտրոնիկայի, շուկայական հարաբերությունների, կոտորածների, Ամերիկայի դար, գլոբալ դար»: «Կոտորածների դար» խորագրի տակ նա թվարկում է Ստալինի համատարած

ՄԻ ՊԱՀ «ՈՒՆԿՈՐՆ ՖԻՆԼԱՆԴԻԱ» ԱՄԱԲՈՒՄ ԿԱՑՈՒՄԿԵՐՈՎԱՑ ՀԱՎԱՔԻՑ

կոլեկտիվացումը, Հիտլերի սպանդը, Մաո Յզե Դունի մշակութային հեղափոխությունը, բայց ոչ մի խոսք չի ասում հայոց ցեղասպանության մասին:

Որտե՞ղ ենք մենք այժմ՝ այսպիսի մտավոր ներուժ, այդքան բազմաթիվ գիտնականներ, մտավորականներ, արվեստագետներ, գրողներ, գործարարներ ունենալով հանդերձ: Ինչպե՞ս մենք պիտի կգացնել տանք մեր ներկայությունը, գոյությունը աշխարհում: Ահա սա է Ամերիկայում մեր Եկեղեցու մեկդարյա պատմության առաքելությունը և ուղերձը: Եթե մենք չենք կարող մեր գնալուց հետո մեր տեղը կգացնել տալ, ապա մենք դավաճանած կլինենք մեր հայրերի ժառանգությանը:

Այսօր, սիրելի՛ բարեկամներ, երբ ես տեսնում և հասկանում եմ մեր ժամանակվա խորհրդանիշները, երբ մայրամուտին է մոտենում 20-րդ դարը, և մենք թնակոխում ենք 21-րդ դար, երրորդ հազարամյակը, ես խորհում եմ, թե ինչպիսի՞ն կլինի մեր ազգը, մեր երկիրը և ինչի՞ կհասնեն մեր Եկեղեցին ու մշակույթը ապագայում:

Սա մեկ համար գիտակցության գալու պահ է, հայության կարգացման և կյանքի առաջընթացի պահ ոչ միայն այս երկրում՝ Ամերիկայում, այլև մեր Հայրենիքում՝ Հայաստանում, հատկապես վերջին յոթ տարիների ընթացքում, երբ մենք անկախություն ենք ձեռք բերել: Մենք դարասկզբին ունեցանք անկախություն, երկու տարի տևեց այդ անկախությունը, և մենք կորցրեցինք այն՝ մեկ շրջապատող տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունների պատճառով: Այսօր մենք այս նոր գիտակցությանն ենք եկել, և դուք՝ ամերիկահայերդ, շատ ավելի լավ եք հասկանում ապատության նշանակությունը, քան որևէ այլ ազգ: Մի խորհրդաստ ասույթ կա, որ ինձ խորապես հուզել է և մեծ դեր կատարել իմ կյանքում: Դա հետևյալն է. «Ապատությունն առանց պատասխանատվության ապատություն չէ»: Այժմ, երբ մենք ձեռք ենք բերել ապատություն, բոլորս էլ պիտի պատասխանատու լինենք մեր պատմության այս նոր դարաշրջանի, առաջադիմության և կարգացման համար: Ուզում եմ ավարտել իմ ելույթի այս առաջին մասը, մեջբերելով Կ. Պոլսի 18-րդ դարի մեր Պատրիարքներից մեկի խոսքը. «Անմիաբանությամբ մեծ ազգերը փոքրանում են, միաբանությամբ՝ մեծանում»: Որքա՜ն խորհրդաստ խոսքեր են:

Ուզում եմ եզրափակել ելույթս՝ հարց տալով, թե ո՞րն է Եկեղեցու դերը: Մենք տոնում ենք Ամերիկայում մեր Հայ Եկեղեցու կազմակերպված կյանքի 100-ամյակը: Վերջերս ես շատ եմ կարդում այն մասին, թե ինչպիսին է աշխարհի իրավիճակը մեծ մտածողների, փիլիսոփաների, սոցիոլոգների և այլ նշանավոր անձանց կարծիքով, գնահատմամբ, և վերը հիշված նույն հոդվածում ես մի միտք ընթերցեցի, որն խորապես հուզեց: Դրանում ասվում է. «Ամերիկայի առաքելությունն է կարկ տալ ոչ միայն իր շահերին, այլ նաև արժեքներին»: Իմ կարծիքով, այս խոսքերը հեգնական հնչերանգ ունեն: Ես կփոխեի այդ նախադասությունը հետևյալ կերպ. «Ամերիկայի առաքելությունն է կարկ տալ իր արժեքներին՝ առանց անտեսելու շահերը»: Արժեքն է ավելի կարևոր, և ես տեսնում եմ, որ հաջորդ դարում մարդկության

մարտահրավերները կլինեն ոչ թե գիտական բնույթի, այլ՝ բարոյական: Այն, ինչի կարիքն այսօր աշխարհն զգում է, հենց հոգևոր և բարոյական հիմքերն են:

Մենք միայն դրամով ու զենքով չենք կարող ապրել, հոգեկան աշխարհով է, որ մենք պիտի տիրապետենք, ինչպես մեր հայրերը տիրապետեցին: Այսօր ի՞նչն է մեր հպարտության ակունքը: Իհարկե, Աստվածաշնչի հոգևոր արժեքներն են, մի գիրք, որը մենք հայերեն թարգմանեցինք 5-րդ դարում: Եթե ձեր հայրենիքի եղբայրներից և քույրերից որևէ մեկն Ամերիկայում խնդրի ձեզ տալ մի քանի ականավոր հայերի անուններ, ո՞ւմ անուններն ենք թվարկելու: Անշուշտ, Սուրբ Գրիգոր Լուսավորչի, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի, Սուրբ Գրիգոր Նարեկացու և այլոց անունները, որոնք կերտեցին մեր պատմությունը, ովքեր լուսավորեցին և ուսուցանեցին մեր ժողովրդին՝ տալով նրան հավատի հզոր ու անպարտելի ուժը, հոգևոր և բարոյական արժեքները:

Թե՛ Եվրոպայում և թե՛ աշխարհի այլ մասերում ես տեսնում եմ կրոնական, հոգևոր արժեքների վերարթնության նշանները: Կրոնը ներշնչանքի, շարժառիթների, խաղաղության, արդարության, միաբանության և համերաշխության աղբյուր է: Սիա թե ինչպիսին պիտի լինի Եկեղեցին այսօր: Մեր Եկեղեցին, մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը երբեք չպետք է համարվի մեր փառավոր անցյալի վերապրուկ, մնացուկ: Ո՛չ: Այն արբական է, նրա ամեն մի քարն ինքնին մի գիրք է, սակայն այսօր մենք ինքներս պիտի գրենք մեր սեփական գիրքը և ոչ թե սոսկ բավարարվենք մեր հայրերի ստեղծածով: Իսկ ի՞նչ ենք մենք գրելու, ինչի՞ն ենք մենք հավատալու: Ուրեմն, ես ձեզ եմ դիմում՝ կոչելով թնակոխել այս նոր դարաշրջանը, որը ես կկոչեի պարտականության, կառուցմանը մասնակցության, մեր Եկեղեցու և մեր ազգի վերանորոգման դարաշրջան: Մենք կարիք ունենք մարդկանց նոր սերնդի, որը ծառայի մեր ժողովրդին, սակայն նրանց պիտի աջակցել այդ գործում: Միայն կամքը, ցանկությունը չէ, որ դեր են խաղում, այլև մեր հոգածությանը հանձնված ժողովրդի կարիքներին և ձգտումներին, տենչերին արձագանքելու, դրանք կիսելու վճռականությունը: Ուստի, ես նայում եմ դեպի առաջ և ոչ միայն դեպի հետ՝ անցյալը:

Մենք հարուստ պատմություն ենք ունեցել, բայց մեր ազգը չպիտի սահմանափակվի պատմությամբ: Մենք միայն թանգարաններ ունեցող ազգ չենք, այլ՝ առաջ, դեպի ապագան ընթացող ազգ: Եվ որքա՜ն խորիմաստ ու ճշմարիտ են մեծ պատմաբանի և փիլիսոփայի հետևյալ խոսքերը. «Քաղաքակրթությունը ճամփորդություն է և ոչ թե նավահանգիստ»: Մեր պատմությունը նավահանգիստ չէ, այլ՝ շարժում, առաջ դեպի ապագան: Հետևաբար, եկեք միասնաբար, ձեռք-ձեռքի տալով և օգտվելով այս հարյուրամյակի տոնակատարության հնարավորությունից, ինքներս մեզ նախապատրաստենք մեր 1700-ամյա ժառանգության համար: Մեր 1700-ամյա քրիստոնեական վկայությունը պիտի հայտնի դառնա ողջ աշխարհին և ներշնչող ուժ, շարժում հանդիսանա մեր երիտասարդ սերնդի համար: Այն միայն հիշողություն չէ մեզ համար, այլ մարտահրավեր այսօրվան: Եթե մենք կարողացել ենք այդ

հավատքով ապրել շուրջ 17 հարյուրամյակ, ապա ինչպե՞ս ենք այսօր համաքայլ ընթանալու կյանքի նոր ուղու հետ, որը շատ ավելի հզոր և ուժեղ է, քան այն, ինչ մեր հայրերն են մեզ թողել: Դա հենց այն մարտահրավերն է, որը ես կանվանեի վերանորոգման մարտահրավեր, այսինքն՝ լիակատար հոգևոր, բարոյական, մշակութային, ազգային, քաղաքական, տնտեսական, սոցիալական կերպարանափոխություն: Սա է այս հարյուրամյակի առաքելությունը, և այն իր արձագանքը կգտնի, երբ մենք միավորվենք որպես մեկ Եկեղեցի և տոնենք քրիստոնեական լույսի և վկայության 17-րդ հարյուրամյակը:

Սա մի հրաշք է, մի մեծ իրագործում է, սրան համապատասխան մեր կյանքը պիտի դասավորենք: Մենք պիտի փոխենք մեր գործելակերպը, ապրելակերպը, կենցաղը համապատասխան այդ նվաճման, որը նման է մագնիսական ուժի՝ հայկական բոլոր համայնքների համար, ոչ միայն Հայաստանում կամ էլ Լեռնային Ղարաբաղում, այլև ամբողջ Սփյուռքում: Դա այն մագնիսական ուժն է, որը ձգում է մեզ: Յուր քաջ որդոց սուրբ արյունով պիտի լինի ապատված մեր երկիրը, յուր քաջ որդոց սուրբ քրտինքով պիտի շինվի Հայրենիքը: Այստեղ մեր ուսանողները երգեցին, բառերը Թումանյանից էին. «Ողբի հայրենիք, որբի հայրենիք»: Հետո ասացին սակայն. «Լույսի հայրենիք, հույսի հայրենիք»:

Այս կերպարանափոխությունը ողբից, որբից դեպի լույսը, հույսը, նոր սերնդի համար պիտի տեղի ունենա: Երբ այս առավոտյան տեսա փոքրիկներին եկեղեցում, ի՜նչ սքանչելի տեսարան էր: Եվ ես մտածեցի Հայաստանում, Հայաստանի դպրոցներում գտնվող հարյուր հազարավոր մանուկների մասին: Նրանց մեջ նկատելի է իրենց ազգային էության, ինքնության, արժանապատվության գիտակցությունը: Նրանք այլևս սերունդը չեն իրենց հայրերի, որոնք մեծացան մարտնչող աթեիզմի ճնշող, դժնդակ իշխանության օրոք: Նրանք ապատ, անկախ սերունդ են: Ո՞վ է նրանց ուսուցանելու, հաղորդակից դարձնելու այն ամենին, ինչ մենք ժառանգել ենք Քրիստոսից, Սուրբ Առաքյալներից, Ս. Գրիգորից, Ս. Մաշտոցից ավելի քան 17 դարերի ընթացքում: Մենք պիտի կորացնենք մեր Եկեղեցին:

Եկեղեցին մեր էությունը, մեր ուղն ու ծուծն է: Ես այս միտքն արտահայտել եմ ամենուրեք, Բոստոնում, Նյու Յորքում: Եթե հանեք մեր հայ ժողովրդի պատմությունից մեր Եկեղեցին, ասացեք տեսնեմ, ի՞նչ կմնա մեր պատմությունից: Իր խոսքում Կառնեգի հիմնադրամի ներկայիս տնօրեն և նախագահ, իմ նախկին ուսանող պարոն Վարդան Գրիգորյանը նշեց, որ կապվել է Հայ Եկեղեցու նվաճումների ցանկը, առանց որոնց մենք այժմ պարզերես չէինք կանգնի այլ ազգերին դեմ հանդիման, չէինք հպարտանա ինքներս մեզանով: Դուրս թողեք մեր պատմությունից այն փաստը, որ մենք եղել ենք առաջին ազգը, որը պաշտոնապես ընդունել է Քրիստոնեությունը որպես իր կրոն: Կամ էլ այն փաստը, որ հենց Եկեղեցին էր, որ ստեղծեց հայոց այբուբենը: Այբուբենը մեր կերպարանքն է, մեր ինքնության խորհրդանիշը: Կամ էլ այն փաստը, որ առաջին նախադասությունը, որ գրվել է հայերեն լեզվով, եղել է Աստվածաշունչը՝ 5-րդ դարում:

Հանեք մեր պատմությունից այն փաստը, որ ամբողջ մեր գրականությունը ներշնչվել է քրիստոնեական ապրելակերպից, մտածելակերպից: Հանեք պատմությունից Հայաստանում տարբեր դարերում կառուցված եկեղեցիները՝ Էջմիածինը, Վարագավանքը, Գեղարդավանքը, Սանահինը, Հաղպատը, Մարմաշենը, Հառիճավանքը, Տաթևը, Հռիփսիմեն, Գայանեն և տակավին ուրիշ բազմաթիվ վանքեր: Ի՞նչ կմնա մեր մշակույթից: Կամ էլ վերցրեք մեր ճարտարապետությունը, կատարվող մեր պատարագը, ձեռագրերը, մանրանկարները, խաչքարերը, և ասացեք տեսնեմ, թե ի՞նչ կունենանք՝ ներկայացնելու աշխարհին: Մեր բանակնե՞րը, նվաճումնե՞րը, հաղթանակները՞, ե՞րբ և որտե՞ղ են եղել դրանք, տնտեսական ո՞ւժը:

Մեր փոքրիկ երկիրը լեռնային երկիր է, քարն ավելի շատ է, քան հողը: Եթե չլիներ քրիստոնեական հավատքը, որ դրել է իր դրոշմը մեր կյանքի վրա և դարձրել մեզ այն, ինչ մենք այսօր ներկայացնում ենք մեզանից, ապա ինչը՞ կդառնար մեր պատկերն աշխարհում: Ուստի, այսօր մենք կարիք ունենք վերակենդանացնել, վերածնել մեր Եկեղեցին: Սիա այստեղ է, որ ես լիովին համամիտ եմ մեր սիրելի Սրբազանի հետ, թե՝ այսպիսի տոնակատարությունները կկորցնեն իրենց նշանակությունը մեկ համար: Դրանք կմնան մեր հիշողության մեջ, եթե դառնան այնպիսի մի ուժ, որը լիցքավորում է մեկ ապագայի համար:

100-ամյա հոբելյանը տոնելու լավագույն ձևը մնայուն եկամտաբեր մի հիմնադրամի ստեղծումը, հիմնումը, քաջալերումը և մեծացումն է, որը կկոչվի «հարյուրամյակի հիմնադրամ»: Չկարծեք, որ ես չեմ հասկանում տնտեսական հարցերը: Երբ ես առաջին անգամ եկա այս երկիրը, ես տնտեսական հարցերի շուրջ այնքան անտեղյակ էի, որ չգիտեի անգամ ընթացիկ և հաշվարկային հաշիվների միջև եղած տարբերությունը: Սակայն այժմ ես գիտեմ նույնիսկ, թե ի՞նչ է դիվիդենտը: Ուզում եմ ասել, որ մենք պետք է ուղիներ և միջոցներ գտնենք՝ բարելավելու մեր կյանքը Հայաստանում, մասնավորապես Եկեղեցու դերը կրթության, դաստիարակության ասպարեզում: Հետևաբար, ես բարձր եմ գնահատում մեր բարերարներին և շնորհել եմ նրանց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրագույն պարգևներ՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշաններ, որոնք պատշաճ կերպով և եկեղեցական արարողությամբ կհանձնվեն իրենց:

Սակայն շատ կարևոր է այն հանգամանքը, որ մենք չպետք է ակնկալենք մեծ գումարներ: Ես ռեալիստ եմ: Յուրաքանչյուր ոք պետք է ինչ-որ ձևով մասնակցի այդ հիմնադրամին: Դա կնպաստի, որ Եկեղեցին, ես ինքս և իմ գործակիցներն ու օգնականները Ս. Էջմիածնում ամեն օր չմտահոգվենք բյուջեի մասին: Մենք պետք է մեր կյանքը, էներգիան, եռանդը, կորովը, գիտելիքներն ուղղենք մշակութային, հոգևոր, կրոնական, բարոյական գործունեությանը, այլ ոչ թե տարվենք առօրյա հոգսերով, ֆինանսական խնդիրներով: Մայր Աթոռ Ս. Էջմիածինն այժմ չունի կարգացման հիմնադրամ: Այն ամենը, ինչ ունեցել է Ս. Էջմիածինը, բռնագրավվել է խորհրդային իշխանության կողմից. թե՛ կառույցները, շենքերը և թե՛ կալվածքները:

Այժմ, երբ ներկա կառավարությունը հետ է վերադարձնում Եկեղեցուն հինավուրց հուշարձանները, Եկեղեցին ժառանգում է այդ եկեղեցիների և կալվածքների վերանորոգման հոգսը: Մարդիկ են ապրում այդ կալվածքներում, և Եկեղեցու համար բարոյապես անընդունելի է մարդկանց դուրս մղելն այդ տարածքներից և դրանք որպես ֆինանսական աղբյուրներ օգտագործելը: Ո՛չ, մենք դա չենք կարող անել: Մենք պետք է գտնենք այլ աղբյուրներ: Համաշխարհային համբավ վայելող մեծ գրող, դրամատուրգ Ուիլյամ Շեքսպիրն ասել է. «Երբ կա կամք, ցանկություն, կա միջոց, ուղի»: Ես դրանց կավելացնեմ իմ խոսքերը. «Երբ կա սեր, կան կյանքի հարյուրավոր ուղիներ»: Ուստի, կոչ եմ անում՝ դարձնել այս հարյուրամյակը շարժում, որով մենք կնայենք ապագային, մեր Եկեղեցու 17-րդ հարյուրամյակին և Ամերիկայի թեմին խոստումնալից, հույսեր տվող հայացքով:

Եկեղեցին և մշակույթն այն միջոցներն են, որ այսօր խթանելու են հոգևոր կյանքը Հայաստանում: Այդ քայլը բացարձակ անհրաժեշտություն է, պետք է նշեմ, որ մեր ազգի և մեր պետության հրատապ խնդիրն է: Ապրիլի 9-ին, մեր նորընտիր նախագահի երդման արարողության օրը, ես խոսք ասացի և օրհնությունս տվեցի նախագահին: Ես ներկայացրեցի նրան Հայաստանի այսօրվա կարիքները. նոր մարդիկ՝ նոր մտապատկերով, նոր երազանքներով, նոր անուրջներով: Եթե Հայաստանում տեղի է ունենալու այն, ինչ տեղի էր ունենում խորհրդային մտայնության օրոք, մենք նվաճումներ չենք ունենա: Մենք քաղաքացիական, դպրոցական, կրոնական դաստիարակության կարիքն ունենք, քանի որ մարդկային ռեսուրսներն ամենահիմնական են, և հենց մարդիկ են, որ իմաստավորում են աշխարհի ստեղծումը: Աշխարհն առանց մարդ արարածի կուտ կույր կյանք, գոյություն է: Եվ ինչպես կարդում ենք Աստվածաշնչում՝ մարդն է, որ Աստծո Արարչագործության հիմքն է:

Հետևաբար, եկեք բոլորս այս առիթով այն գեղեցիկ մտածումով առաջնորդվենք, որ գալիք հարյուրամյակի համար անենք մեր կոհողությունը: Մեր առաջ կա մի գեղեցիկ շրջան, մենք նոր ժողովուրդ ենք՝ նոր հոգեբանությամբ, և մենք տալով ենք մեծանում, մեր Եկեղեցին կորացնելով ենք կորանում:

Սիրելի բարեկամներ, ես թողնում եմ բեմը՝ շնորհակալություն հայտնելով բոլոր նրանց, ովքեր նպաստեցին թեմի կարգացման հիմնադրամի ստեղծմանը: Այն կդառնա խրախուսման, քաջալերման աղբյուր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Ամերիկայում մեր Եկեղեցու կրթական, հոգևոր ու մշակութային վերանորոգման աղբյուր: Այսպիսի հավատքով էլ ես ձեզ համար պիտի արտասանեմ այն բանաստեղծության մի քանի տողը, որ Թումանյանն է գրել.

Ով անմեղ է, լիքը սիրով
Ու հավատով անսասան,
Ով նայում է վառ հույսերով
Դեպի հայոց ապագան,-

Նա կրտեսնի էն մրշտավառ
Ջահը կախված երկրնքից,
Սեռ Աստծո աչքը պայծառ
Հրսկում է ցած երկրնքից:

Լուսավորչի աստղը՝ պայծառ լույսի պես: Թող կյանքս յուղ լինի այդ յուղի մեջ: Լուսավորչի անմար կանթեղն անմար չի մնա, եթե յուղ չլցնենք: Մենք ենք յուղը Լուսավորչի կանթեղի մեջ, թող վառ մնա, անմար մնա, պայծառ մնա այդ կանթեղը ողջ հայ ժողովրդի վրա ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Մեր առջև ծառացած է հոգևոր, բարոյական, հասարակական, քաղաքական և տնտեսական վերածննդի խնդիրը: Բարոյական արժեքներն են, որ մեզ պիտի մեծացնեն, դրանով ենք մենք մեծ եղել, ոչ մեր տնտեսությամբ և ոչ էլ մեր քաղաքական թագավորություններով ենք իշխել: Ինչ որ եղել ենք, մեր հոգեկան արժեքներով, մեր մշակույթով ենք եղել: Եկեղեցին միշտ եղել է մեր ազգի հոգին խնամող, մեծացնող, կորացնող եւ կյանքում հաղթանակի առաջնորդող ուժ: Այս բառերը ես քաղեցի իմ ու մեր հավատքն ունեցող, իմ ու մեր արյունը կրող և Վարդանանց պատմությունը գրող 5-րդ դարի աստվածաբան, պատմաբան Եղիշեից:

Խոսելով Եկեղեցու մասին և պաշտպան կանգնելով քրիստոնեական հավատքին՝ ընդդեմ այն ժամանակվա մազդեական պարսիկների, Եղիշեն մեջբերում է կատարում Հայկերտին ուղղված այն պատասխան թղթից, որը մեր հայրերը՝ այն ժամանակների մեր մեծ հոգևորականները մեր բանակի ղեկավարի հետ միասին հրապարակեցին, և որը Հայաստանի համար մի նոր էջ բացեց: Ես ընթերցում եմ այդ հատվածը. «Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որևէ այլ դառն հարված» : Եղիշեն այսպես է ասում, քանզի Եկեղեցին մարդու արարչությունը, ստեղծագործությունը չէ, ոչ էլ արքաների ընծան է, կամ էլ կարող, հմուտ վարպետների գյուտարարությունը կամ իմաստունների հայտնագործությունն է: Այն ամենակարող ու հզոր Աստծո պարգևն ու շնորհն է ոչ թե որոշ անհատների, այլ՝ բոլոր բանական մարդկանց: Վերևից կամ ներքևից ուժերը չեն կարող թուլացնել կամ խարխլել մեր հավատքը»:

Ի՞նչ խորհուրդ կա այդտեղ: Եկեղեցին Աստծո ներկայությունն է մեր մեջ, Հայոց Եկեղեցին Աստծո թարգմանությունն է հայի կյանքում: Եթե այս գիտակցությունը տկարանա մեր մեջ, հավատացեք, արյունը կգնա մեր մարմնից: Հավատքը հոգու համար այն է, ինչ որ արյունը՝ մարմնի համար: Եկեղեցին Աստծո ձեռքի ներկայությունը, գործունեությունն է մեր կյանքում: Այս երկրում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Եկեղեցին եղավ այն ուժը, որն անսասան պահեց մեզ մեր հավատքի մեջ, հավատարիմ՝ մեր ինքնությանը, պահպանեց մեր քրիստոնեական արժանապատվությունը: Ուստի, եկեք մի անգամ ևս գիտակցենք, որ այսօր մենք չենք կարող հրաժարվել մեր հոգևոր և բարոյական չափանիշներից և դառնալ կոհերն այնպիսի մի հասարակության, որտեղ

սպառողական ոգին դառնում է երկրորդ կուռք, պաշտամունք կամ երկրորդ Աստված:

Արթնացե՛ք, ձեր ուժը հոգու մեջ է, մարդն է, որ ստեղծում է և՛ նյութական, և՛ մշակութային բարիքները, մարդն է կարևորը, և Եկեղեցին է այդ մարդուն հոգեկան սնունդ տվողը: Կառչած մնացեք այդ Եկեղեցուն:

Ձերդ Սրբազնություն, ես խիստ ապշվեցի՝ լսելով ձեր պատմածը, ես կուլենայի մի քանի խոսք ասել, որպեսզի դուք կարողանաք պատկերացում կազմել Հայաստանի մասին մինչև ձեր գալը և այցելելը մեր երկիր:

Խնդրում եմ ընդունեք իմ խոսքերը որպես պաշտոնական հրավերի արտահայտություն: Այս բառերը քաղված են Անգլիացի մեծ բանաստեղծներից մեկից՝ Ս. Թ. Էդմոնից, և կարծեք ճիշտ Հայաստանի համար գրված լինեն. «Ուր էլ որ ապրած լինի որևէ սուրբ, ուր էլ որ որևէ նահատակ իր արյունը տված լինի Քրիստոսի համար, այդ տեղերը սրբավայրեր, սուրբ տեղեր են, և դրանց սրբությունը չի անցնում»: Քրիստոնեության պատմության վերջին 17 դարերի և դրանից էլ ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում ոչ մի երկիր հագեցած չի եղել այդքան շատ սերունդների սուրբ կյանքով: Ուրեմն, եկեք ճանաչենք ինքներս մեզ, հասկանանք, թե ով ենք մենք թե՛ Հայաստանում, թե՛ ամենուրեք՝ աշխարհում:

Կուլենայի ավարտել ելույթս մի քանի բառերով՝ ուղղված ապագային: Մենք այլևս այն ազգը կամ այն Եկեղեցին չենք, որը լոկ մխիթարվի, սփոփվի իր անցյալ պատմությամբ: Մեր առջև աշխարհում մի նոր հորիզոն է բացվում, նախապատրաստվում ենք դիմավորել 2001 թվականը, երբ բոլոր հայերն անխտիր Հայաստանի մայրաքաղաք Երևանում, և մեր Եկեղեցու հոգևոր մայրաքաղաք, կենտրոն Ս. Էջմիածնում, ամբողջ աշխարհի քրիստոնյա մեր հոգևոր եղբայրների ներկայացուցիչների հետ միասին կտոնեն մեր ազգի 1700-ամյա բացառիկ հոբելյանը: Այդ առավելությունը, առանձնաշնորհը Աստված է տվել մեզ. այն շնորհը, որ մենք եղել ենք առաջին ազգը, որը 301 թվականին ընդունել է քրիստոնեությունը որպես իր ազգային կրոն:

Ինչպե՞ս ենք մենք նայում ապագային: Մենք պետք է վեր կանգնենք երկրորդական նշանակություն ունեցող չնչին նկատառումներից: Աշխարհը մեր մասին կիմանա, եթե մենք հանդես գանք որպես մեկ Եկեղեցի և մեկ ազգ: Հավատացած եմ, որ այսօր սա է Աստծո պատգամը, պատվիրանը մեզ: Այդ առումով ես կուլենայի ասել, որ Ս. Էջմիածինը բոլոր հայերի ծննդավայրն է, իմ ու ձեր, մեր հայրերի ծննդավայրն է ու կլինի նաև գալիք սերունդներինը: Ուստի, եկեք տեսնենք, թե ինչ են արել մեր հայրերը և թե ինչ ենք արել մենք մինչև այժմ: Եթե վաղն ավելի լավ չի լինելու, քան այսօրը, ապա ի՞նչ նկատի ուներ մեր Տերը, որ մեզ ասաց. «Նայեցեք առաջ, նայեցեք դեպի վեր և Աստված անկասկած ձեզ նշան կանի»: Արդյո՞ք մենք պատրաստ ենք նայել առաջ և դեպի վեր:

Սիրելի եղբայրներ և քույրեր, ես դեռ ձեզ հետ խոսելու ուրիշ առիթներ պիտի ունենամ, բայց ուզում եմ, որ այս առաջին վայրկյանից բոլորդ էլ կգաք, որ գտնվում եք պատմական, շրջադարձային նշանակություն ունեցող ժամանակաշրջանում:

Ես ձեզ մեջբերեցի 5-րդ դարում գրվածը, իսկ ի՞նչ պիտի մեջբերեն գալիք սերունդները մեր արածների մասին: Մտածեք, թե մենք ի՞նչ պիտի անենք այսօր, որ վաղվա սերունդներն այնպես գրեն, որ մեզ էլ մի օր մեջբերեն շնորհակալության, երախտագիտության կգացումով, ինչպես որ մենք ենք այսօր մեջբերում մեր սուրբ հայրերից: Ուստի, եկեք Ամերիկայում մեր թեմի այս հարյուրամյակը դարձնենք հոգևոր վերանորոգման պահ: Անցյալը միայն մեր գովեստի համար չէ: Անցյալն անցյալ է, որ պատկանում է Աստծուն: Մենք կոչված ենք ապացուցելու, վկայելու Աստծուն, պատմությանը և մարդկությանը, որ այսօր թե՛ մեր Մայր Հայրենիք Հայաստանում, թե՛ ամբողջ Սփյուռքում և այս հարյուրամյա հոբելյանի միջոցով, թե՛ այստեղ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, մեր ազգի նկարագիրը ճիշտ այնպիսին է, ինչպիսի դրոշմ որ դրել է նրա վրա քրիստոնյա հայի 1700-ամյա պատմությունը:

Թող Աստված կորացնի մեզ բոլորիս, և մենք կարողանանք այս կգացումների մեջ տեսնել, որ վաղվա տեսիլքը պիտի ավելի պայծառ լինի: Թող արև շողա ինչպես մեր Մայր Հայրենիքի վրա, այնպես էլ այս մեր սիրեցյալ ամբողջ ամերիկահայության վրա, բոլոր հայկական համայնքների վրա՝ առանց որևէ կարգի՝ իրավաբանական, քաղաքական կամ սոցիալական խտրության, որովհետև Աստծո աչքում որևէ տարբերակում, խտրություն չկա: Հյուսիսում թե հարավում, արևելքում թե արևմուտքում՝ թող ամբողջ ամերիկահայությունը գալիք դարում էլ ավելի հզորանա, քան եղել է մինչև այս առաջին հարյուրամյակի վերջը:

Սիրելի հոգևոր եղբայրներ, մենք վաղը կսկսենք այս տոնակատարությունը հոգևոր մթնոլորտում և պիտի այնպես անենք, որ դառնանք այս ժողովրդի համար այն, ինչ որ Տերն ասաց մեզ՝ աղ, լույս և հույս:

1700-ամյակը մեր բոլորի համար պիտի դառնա նշանաբան, որպեսզի աշխարհում կարողանանք հաղթել և ապացուցել, որ մենք ոչ միայն առաջինն ենք եղել պատմության մեջ, այլ առաջիններից ենք նաև այսօր և պիտի լինենք նաև վաղը՝ Աստծո կամքի համաձայն, Աստծո փառքի համար և մեր ժողովրդի պատվի համար:

Եկեք ձեռք-ձեռքի տանք և պատրաստվենք 1700-ամյակի տոնակատարությանը որպես ՄԵԿ ԵԿԵՂԵՑԻ: Եվ թող Սուրբ Գրիգորի կանթեղը շողա ձեզ վրա, հովանի, պահապան լինի, դառնա նոր իրագործումների մղիչ ուժ դեպի Աստծու կամքը և մեր ազգի պատիվը այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»,- եզրափակեց իր խոսքը Հայոց Հայրապետը:

Պաշտոնական ճաշկերույթն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և ներկաների կողմից երգված «Հայր մեր»-ով:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ Ս. ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 10-ի կիրակի օրը, վաղ առավոտյան, մոտ 2000 հավատավոր հայորդիներ էին ի մի եկել Նյու Յորքի Սուրբ Վարդան Մայր եկեղեցում՝ ներկա գտնվելու եպիսկոպոսական Սուրբ Պատարագին և մխիթարվելու Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Բանին կենաց» քարոզով:

Օրվա պատարագիչն էր Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը:

Սուրբ և անմահ Պատարագին ներկա էին Հյուսիսային և Հարավային Ամերիկաների թեմական առաջնորդները, բարձրաստիճան պաշտոնյաներ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, ինչպես նաև Նյու Յորքի, Նյու Ջերսիի և Քենեթիքեթի հոգևոր հովիվները:

Առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի թելադրանքով, նույն օրը Ս. Պատարագ չմատուցվեց վերոհիշյալ շրջանների եկեղեցիներում, որպեսզի թե՛ հոգևոր հովիվները և թե՛ հավատացյալները կարողանան մասնակցել Ս. Վարդան Մայր եկեղեցում մատուցվելիք Ս. Պատարագին:

Ս. Պատարագի երգեցողությունը կատարեց միացյալ դպրաց դասը՝ Խորեն Մելխանեթյանի ղեկավարությամբ:

Հընթացս Ս. Պատարագի, «Հայր մեր»-ից առաջ, առաջնորդ Սրբազան Հոր հրավերով, Խորան բարձրացավ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ներկաներին բաշխելու իր հայրապետական պատգամը.

«Սիրեցյալ և հավատացյալ ժողովուրդ Աստուծո և կավակներ ազգիս հայոց.

Այսօրվան համար ես իմ խոսքին որպես հատուկ բնաբան, ինչպես կըսեն մեր հայերեն լեզվով, ընտրեցի շարականեն այն տողերը, որոնք մենք հաճախ կընթերցենք և կհնչեցնենք այս տաճարին մեջ կամ Հայաստանյայց Եկեղեցվո բոլոր տաճարներին մեջ՝ Հայաստանեն մինչև Սփյուռքի բոլոր ծագերը՝ «Էջ Միածին ի Հօրէ» շարականեն: «Եկայք, շինեսցուք սուրբ կխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»: Եկեք շինենք, կառուցենք լույսի Սուրբ Խորանը, որովհետև այդ խորանին մեջ մեզի հայտնվեցավ լույսը:

Միավասիկ, հավատացյալ եղբայրներ և քույրեր, շարաթներ ի վեր մենք բոլորս այս թեմի սահմաններուն մեջ կգտնվինք հարյուրամյակի դպրոցին մեջ: Ի՞նչ սորվեցանք հարյուրամյա այս ուսուցումեն, այս դպրոցեն: Ի՞նչ տեղ ունեցավ հարյուր տարվա քարոզչությունը մեր Եկեղեցվո այս հողին վրա և անոր ներկայությունը ապրված ըլլալու այն պայծառ երևույթին, որ կպանծացնենք այսօր հարյուրամյակի տոնակատարություններով: Ես այս դպրոցի աշակերտներեն մեկն եմ այսօր, ինչպես այդ դպրոցի առաջին աշակերտը եղավ հարյուր

տարիներ առաջ իմ երջանկահիշատակ նախորդներեն Խրիմյան Հայրիկը, երբ դրեց առաջին քարը այս հարյուրամյակի և իր հոչակավոր կոնդակովը հաստատեց այն 1898 թվականին: Այս դպրոցի ուսուցիչները եղան բոլոր այն առաջնորդները, որոնցից շատերն այսօր երկնքին մեջն են Մովսես եպիսկոպոսեն սկսյալ մինչև այսօրվան մեր թորգոմաշունչ, եռանդագին աշխատանքով լծված իր գործին առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը:

Այս դպրոցի ուսուցիչները եղան բոլոր այն հոգևորականները՝ եպոսկոպոսները, վարդապետները, քահանաները, սարկավագները, երգչախմբի անդամները, որոնք քրիստոնեության և հայ հոգիին թարգմանները եղան այս դպրոցի բեմեն հարյուր տարիներու ընթացքին՝ նոր աշխարհի լեկվով: Այս դպրոցի ուսուցիչները եղան այն պարզ անձերը աշխարհական, որոնք իրենց քրիստոնեական հավատքը և ազգային ինքնությունը, ազգային արժանապատվությունը ներդաշնակելով, իբրև հարապատ անդամներ թեմական ժողովի մակարդակեն սկսյալ, պատգամավորական ժողովեն, իբրև թեմական խորհուրդ մինչև բազմաթիվ խորհուրդներ, իրենց ժամանակը, կարողությունը, սերը, նվիրումը ընծայեցին: Այս դպրոցի ուսուցիչները եղան նաև մեր այն բարերարները, որոնք իրենց նյութական աշխատանքի վաստակեն բաժին հանել գիտցան, քաջությունը ունեցան իրենց ունեցածը ազգեն ներս արժևորելու: Այս վաստակին մեջ իրենց դերը ունեցան բոլորը: Ի՞նչ սորվեցանք այս ամբողջ հարյուրամյա դպրոցեն: Ի՞նչ կքաղենք այսօր այս Պատարագեն մանավանդ, որ պաշտոնական ձեռնարկներեն վերջինն է Նյու Յորքի շրջանին մեջ:

Սիա թե ինչպես ես կմեկնաբանեմ մեր սորված դասը: Հետևյալ հիմնական գաղափարներու մեջ կդասավորեմ այն: Առաջին՝ Եկեղեցին պահել կենտրոնը մեր ազգին կյանքին Սփյուռքի այս տարածքին: Եկեղեցին ընդունել որպես Աստծու և հայուն հանդիպման վայր և անկե ավելի գեղեցիկ, անկե ավելի խորիմաստ խորհուրդ և ներքրիստոնեական ուժ չի կրնար ըլլալ: Եկեղեցին ծննդավայրն է մեր հոգվույն և ծննդավայրը մարդուն ամենեն քաղցր վայրն է իր կյանքին մեջ: Եկեղեցին ընկերային կյանքի հատուկ երևույթ մը չէ: Եկեղեցին հաղորդության տուն է: Այստեղ, այս խորանին վրա և Հայ Եկեղեցվո բոլոր խորաններեն կբարբառեն, մշտնջենական անլռելի կանգակատան պես կդողանջեն մեր Եկեղեցվո հայրերը, մեր սուրբերը, որոնք հասել են հոգեկան անմահության իրենց ապրումներով: Մենք պետք է կորանանք, Աստուծո անմահական ուժը կգանք մեր մեջ: Ի՞նչ է քրիստոնեությունը ամբողջ աշխարհի մեջ, եթե ոչ Աստուծո ներկայությունը մարդու կյանքին մեջ, Աստուծո ճշմարտության գործնականացումը մեր կյանքի երջանկության համար:

Հայոց Եկեղեցին ամեն բանեն առաջ և ամեն բանե վեր Աստուծո և հայության հանդիպումն է, հանդիպումը երկնքին և երկրին՝ հայերիս կյանքին մեջ: Եկեղեցին նաև մեր ազգայինն է, որովհետև այդ քրիստոնեական հավատքը ամեն մեկ ազգ աշխարհին մեջ իրեն ընկալելու եղանակովն է ինքը ազգ: Հոմայեցին տարբեր ձևով է

Սուրբ Աստուածածին՝ «Սիրելի»

ՌԱՖԱԷԼՅԱՆ ՀԵՂԻՆ ՂՈՒԿԱՄԻ Ա.ԺՈ
ԿԱՐՄԱԾ ՀԱՅԵՐԷՆ ԵՌԱՄՈՏՈՒԹԻՒՆ ՂՈՒԿՈՄԱՍԱՍԻՈՎՔԻՑ

ընդունած, հույնը տարբեր ձևով է ընդունած, ասորին տարբեր, արևելքցին՝ տարբեր, արևմուտքցին՝ տարբեր: Այլապանություն և մոպային մը է քրիստոնեությունը միջակգային աշխարհին մեջ: Լույսը ինքը մեկ է, բայց մարդկության մեջ երբ կճառագայթե, տարբեր գույներ կկգենու, և մեր գույնը հայկական գույնն է: Ատոր համար մեր Եկեղեցին մեր ազգային ինքնության հոգևոր արտահայտությունն է, որ ավելի քան 1700 տարիներեն ի վեր մեր ազգին ներշնչարանը եղած է, որովհետև քրիստոնեությունը ազգերու, ինչպես մեր ազգի, նաև ուրիշ ազգերու կորության աղբյուրն է եղած:

Երբեմն ես կլսեմ և կկարդամ մակերեսային հոդվածներ, անպատասխանատու խոսքեր, ըստ որոնց Եկեղեցին տկարացրած է մեր ազգը: Նույնիսկ կարդացի վերջերս հոդված մը, որուն մեջ կրսվեր, թե քրիստոնեությունը սեր քարոզելով, տկարացուց մեր ժողովուրդը: Ասկե ավելի սխալ մեկնաբանություն չի կրնար ըլլալ քրիստոնեության համար: Սերը քաջություն կծնցնե, ոչ թե տկարություն, սերը խաչով կարտահայտվի: Ո՞վ էր հապա, եթե ոչ Եկեղեցին, որ Ավարայրի ճակատամարտը ղրկեց մեր քաջ նախարարները և Վարդանանց զորավարներն ու կինվորները, ո՞վ կանգնեց հերոս սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի կողքին, եթե ոչ Ներսես Պարթև Հայրապետը, ո՞վ էր կանգնած Վահան Մամիկոնյանի կողքին, եթե ոչ Հովհան Մանդակունի Կաթողիկոսը: Եվ եթե երբեք երկարեմ շարքը մինչև այսօր, մինչև Սարդարապատ, դուք կտեսնեք Եկեղեցին ներշնչման աղբյուր, այլ ոչ թե հուսահատության, հուսալքումի, տկարության աղբյուր, ինչը և երբեմն մարդիկ կփորձեն մեկնաբանել ածան և մակերեսային կերպով:

Մեր Եկեղեցին ներշնչարանն է մեր հայոց մշակույթին: Մշակույթը, քաղաքակրթությունն այն է, որ մարդուն արտահայտությունն է իր գերագույն գեղեցիկ ճանապարհին վրա: Քաղաքակրթությունը մարդուն սահմանումին մեջ կիյնա: Մարդը բանավոր էակ է, ոչ թե անբան կենդանի: Մարդը կարգացում ունի: Քաղաքակրթությունը շարունակական ընթացքն է դեպի հոգեկան ճառագայթում: Եկեղեցին նաև մեր մշակույթի աղբյուրն է, որից բխեց այբուբենը: Հոգեկան ճիգը, առաջին ճիգը, որ հայությունը կարտահայտի հայերեն լեզվով՝ Աստուծո Մատյանն է, Աստվածաշունչը, Աստուծմե ներշնչված ու մեզի փոխանցված այդ գիրքը, որուն համար ըսեցին մեր հայրերը՝ մի մոռնաք այդ մեծ խոսքերը, որոնք քարերու պես կփայլին. «Քանզի հայր մեր զսուրբ Աւետարանը գիտեմք եւ մայր զԱռաքելական Եկեղեցին Կաթողիկէ»: Այս նշանաբանն էր մեր հայրերու նշանաբանը և մեր Եկեղեցին ամերիկյան հողին վրա այս ճշմարտության թարգմանը հանդիսացավ իր 100-ամյա պատմության ընթացքին: Եկեղեցին է, որ հաստատուն է: Երբ մենք լույսի խորան ենք կառուցում, այդ մենք ենք, որ կառուցվում ենք:

Ի՞նչ սորվեցուց մեզ Եկեղեցին հայոց անցնող 100 տարիներու ընթացքին: Բանաստեղծին բառերով ըսած՝ հարդը գնում է, ցորենն է մնում: Մեր հարյուրամյա պատմությունը եթե կարդաք, այնտեղ պիտի տեսնեք լույսի ու խավարի խաղը, պիտի տեսնեք դրական

հոգագործումներ: Եղան ստվերոտ կողմեր, եղան լուսավոր կողմեր: Ի՞նչ սորվեցանք այս 100 տարվան ընթացքին: Ինչ որ ճղճիմ-ճղճիմ հարցեր են, կերթան հարդի պես. ինչ որ կմնա, այս տաճարներն են, այս փոքրիկներն են. այս շարականներն են, հոգին է կենդանարար: Եթե մենք չկարենանք ընդհանրական շահը, հավիտենական, անանց արժեքները գերադասել, մենք կդատապարտվենք կորստյան: Անցավորը անցավորին հետ կերթա, մնայունը կմնա: Ինչպես մեծ բանաստեղծ, արևմտյան մեր գրականության անմահանուն Վահան Թեքեյանն ըսել է. «Ի՞նչ մնաց, կյանքեն ինձի ինչ մնաց, ինչ որ տվի ուրիշի, տարօրինակ, այդ մնաց»: Իրը կերթա, հոգին է արժեքավոր: Այսօր մենք հարյուրամյա հեռվից կտոնենք այն, ինչ որ գոյություն ունի, այսինքն մեր հավերժական արժեքները: Եվ այսօր ատորով է, որ մենք կհպարտանանք: Ուրեմն գիտնանք, եղբայրներ և քույրեր, հարյուրամյակի այս դասը սորվիլ, թե մեր նվիրումը եկեղեցիին, մեր մասնակցությունը եկեղեցիին, այս եկեղեցին չէ, որ մեկնով պետք է հարստանա, մենք է, որ պիտի եկեղեցիով հարստանանք:

Երկու տարի ետքը մենք պիտի մտնենք երրորդ հազարամյակը մարդկային պատմության: Հարյուրամյակի տարբերությունը գիտցեք, հազարամյակինը ևս: Հարյուրամյակը հաջորդ տարի ի՞նչ տարբերություն պիտի ունենա մեկի համար: Եթե ես, ձեր Առաջնորդ Սրբազանը, մյուս Առաջնորդ Սրբազանները, հոգևորականները և աշխարհականները պիտի մնանք այն, ինչ որ էինք երեկ, ի՞նչ խորհուրդ ունի հարյուրամյակը: Այսօր մենք պետք ունենք հոգեկան նայվածքով և պատմությունը կարդալու մեր եղանակով տեսնելու, որ գալիք ժամանակները աշխարհի մեջ կրոնական վերակարթոնք պիտի արձանագրեն:

Մտիկ ըրեք ինձի, եղբայրներ և քույրեր, աշխարհի ամբողջ քրիստոնեության և բոլոր ժողովուրդներուն կհետևիմ, բոլոր եկեղեցական թեմերը կտեսնեմ, օտար Եկեղեցիներու ժողովներուն կերթամ, վերլուծական գիրքեր և հոդվածներ կկարդամ, աշխարհը պիտի սորվի հոգևոր և բարոյական վերակարթոնքը կգալ հառաջիկա հազարամյակին: Ես կհավատամ, որ մենք ամեն բան պիտի ընենք, այս հոգեկան վերակարթոնքը ապրելու և մեր ազգը նորովի արժեցնելու ամբողջ աշխարհի մեջ, որովհետև աշխարհի մեջ հայու ներկայությամբ մենք կծաղկեցնենք Մայր Հայրենիքը, Հայաստան աշխարհը ապատության լույսով: Եվ այն ատեն մենք արժանի կըլլանք մեր այդ կյանքը արժեցնելու: Եվ եթե մենք այդ ժամանակին հոգեկանորեն չնորոգվինք, մեր ազգը կաղքատանա:

Ես իմ այսօրվան խոսքը կեզրափակեմ այս խոսքով. եկեք շինենք Սուրբ Խորանը լույսի, որովհետև այստեղ ծագեցավ մեկ համար Աստուծո լույսը: Եկեք միասնաբար այնպես ընենք, որ հարյուրամյակը ըլլա մեկի համար դպրոց մը, որուն դասերովը երկրորդ հազարամյակին պայծառացնենք կյանքը մեր երեխաներուն և թող ասիկա ըլլա, սիրելի Սրբազան, ձեր առաջնորդության օրով և, հարգելի սրբազան եղբայրներ, ձեր թեմերուն մեջ նախապատրաստություն մը այն մեծ տոնակատարության, համահայկական, ամբողջ Հայ Եկեղեցիին համար հայ

ժողովուրդի 1700-ամյակի տոնակատարության նախաբան ըլլա, որպեսզի մենք աշխարհին ներկայանանք Աստծո մեր վրա դրած կնիքովը և հայ քրիստոնյայի կնիքը արժեցնենք և փառավորենք Աստծու անունը հավիտյանս հավիտենից. ամեն»:

Հավարտ Ս. Պատրագի, կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ մահացած բոլոր առաջնորդների և պատգամավորների հոգիների խաղաղության համար:

Մինչ հոգեհանգստյան արարողությունը, կիրակնօրյա վարժարանների սաները համբուրեցին Նորին Սրբության աջը և ապա վառեցին իրենց մոմերը:

Վերջում տեղի ունեցավ մատաղի օրհնություն և բաժանվեց ներկա հավատացյալ ժողովրդին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ «ՅՈՒՆԻՈՆ ԼԻՔ ՔԼԱԲ»-ՈՒՄ

Նույն օրը, հետմիջօրեին, «Յունիոն Լիք Քլաբ»-ում կազմակերպվեց պաշտոնական ճաշկերույթ՝ ի պատիվ բոլոր նրանց, ովքեր իրենց հայրենանվեր մասնակցությունն էին բերել «Հարյուրամյակի Հիմնադրամին»:

Պաշտոնական ճաշկերույթին ներկա էին տեղական իշխանությունների և քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, թեմական առաջնորդներ, բարձրաստիճան հոգևորականներ, ազգային բարերարներ, մեծաթիվ հավատացյալ հայորդիներ: Այն նախագահում էր Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ճաշկերույթի ընթացքում հնչեցին շնորհակալության ու երախտիքի ջերմ խոսքեր: Իր ելույթում ևս Ամենայն Հայոց Հայրապետը նախ շնորհակալություն հայտնեց բոլորին՝ հայապահպանության գործին ցուցաբերած իրենց նվիրվածության համար, և ապա յուրաքանչյուրին նվիրեց մեկական «Հարյուրամյակի հուշամեդալ»:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ԻԼԻԱ Բ-Ի ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ

Մայիսի 15-ի ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10.45-ին, իր շքախմբով Սուրբ Վարգան Մայր Տաճար ժամանեց Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուր Նորին Սրբությանը դիմավորեցին ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, հոգևորականաց դասը, ինչպես նաև ներկա հավատացյալների՝ հոծ բազմությունը:

Ճիշտ ժամը 11.00-ին իր շքախմբով Մայր Տաճար ժամանեց Վրաստանի Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Իլիա Բ Պատրիարքը: Տաճարի մուտքի մոտ երկու հոգևոր առաջնորդները ողջագուրվեցին, ապա «Ուրախ լեր» շարականի երգեցողությամբ առաջնորդվեցին դեպի տաճարի Մայր Խորան և տեղ գրավեցին աջակողմյան ու ձախակողմյան դասերում:

Հանդիպմանը ներկա էին նաև Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Հույն Ուղղափառ Եկեղեցու Ամերիկայի միտրոպոլիտ Ամենապատիվ Տ. Թեոդոսիոս արքեպիսկոպոսը, Հայ և Վրաց Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, Միացյալ Նահանգներում Հայաստանի և Վրաստանի Հանրապետությունների արտակարգ և լիազոր դեսպանները, երկու Եկեղեցիների հավատացյալներ:

Նորին Սուրբ Օծության գոհաբանական աղոթքից հետո, Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը բարիգալստյան խոսք ուղղեց հոգևոր բարձրաստիճան հյուրերին՝ ուրախությամբ նշելով, որ Սուրբ Վարդան Մայր Տաճարում հանդիպեցին երկու դրացի ժողովուրդների հոգևոր պետերը: Սրբազան Հայրը մանրամասնեց Նորին Սուրբ Օծության Միացյալ Նահանգներ այցելության նպատակը և ավելացրեց, որ մեկ կամ երկու դար առաջ ո՞վ կարող էր երևակայել, թե Հայ և Վրաց Եկեղեցիների Պետերը միմյանց հետ կհանդիպեն Միացյալ Նահանգներում:

Իր հերթին Վրաց Եկեղեցու հոգևոր Առաջնորդ Իլիա Բ Պատրիարքը, ողջունելով Հայոց Հայրապետին և բոլոր ներկաներին, խոսեց Կովկասյան տարածաշրջանում երկու քրիստոնյա օջախների, նրանց անցյալի ու ներկայի բարեկամական փոխհարաբերությունների մասին: Ասաց, որ ինքն անձամբ այցելել է Ամենայն Հայոց Կաթողիկոսին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և վայելել նրա եղբայրական հյուրընկալությունը: Խոսքի վերջում Վրաց Եկեղեցու Պատրիարքը խնդրեց Ամենակարող Աստծուց՝ օրհնել Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայաստանի ու Վրաստանի նորանկախացյալ Հանրապետությունները: Ապա, Հանուն Վրաց Ուղղափառ Եկեղեցու, առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանին հանձնեց հուշանվեր:

Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը, ողջունելով Վրաց Եկեղեցու հովվապետին, ասաց, որ իրենք տարբեր առիթներով հանդիպել են միմյանց հետ թե՛ Թբիլիսիում և թե՛ Սուրբ Էջմիածնում, սակայն այսօրվա հանդիպումը պարզ պատահականություն չէ, այլ Աստծու «կարգավորությունը»: Նորին Սրբությունը

փառք տվեց Բարձրյալին, որ Սուրբ Վարդան Մայր Տաճարում իրեն առիթ ընծայեց բարի գալուստ մաղթել քույր Եկեղեցու հոգևոր պետին և ողջունել նրան: Նորին Սրբությունը խոսեց նաև Ամերիկայի Առաջնորդական թեմի հաստատման հարյուրամյակի մասին՝ նշելով, որ հարյուր տարի առաջ միայն մեկ եկեղեցիով հաստատված Հայ Եկեղեցին այսօր ունի ավելի քան հարյուր եկեղեցիներ: Ապա բարձր գնահատեց գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի կատարած անխոնջ ու նվիրված աշխատանքը և առավել հաջողություն մաղթեց նրան: Հայոց Հայրապետն անդրադարձավ Հայ և Վրաց Եկեղեցիների Սրբերին, հատկապես Սուրբ Վարդանի դստերը՝ Սուրբ Շուշանիկին, ում երկու Եկեղեցիներն էլ դասել են իրենց Սրբերի շարքը: Գարեգին Ա. Կաթողիկոսը նշեց, որ Ինքն այցելել է Վրաստանում գտնվող Սրբուհու մատուռը և աղոթել այնտեղ: Հայոց Հայրապետը չմոռացավ հիշեցնել նաև հանդիսավոր սրտամոտ հետևյալ խոսքերը. «Սուրբերը մեր Եկեղեցիները կը միացնեն, եւ աշխարհի մարդիկ թող չբաժանեն զանոնք իրարմէ».

«Թող ընդմիշտ և առհավետ օրհնյալ լինի Աստծո անունը, որ շնորհեց մեկ այս վեհ պահը Վրաց Ուղղափառ Եկեղեցու և Հայ Առաքելական Եկեղեցու փոխհարաբերությունների պատմության մեջ՝ հանդիպելու այս առավոտ Նյու Յորքում: Շատ առիթներ են եղել, որ մենք հանդիպենք միմյանց հետ թե՛ Թբիլիսիում, թե՛ Երևանում և թե՛ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Սակայն այստեղ՝ Սփյուռքում իրար հանդիպելը հեշտ չէ: Մենք ցույց ենք տալիս թե՛ ամերիկացիներին, թե՛ ամերիկահայությանը և թե՛ մեր ու ձեր երկրներին, որ եղբայրության, բարեկամության, ընկերության և միասնության գաղափարները չեն ընդունվի, եթե մենք միասին, միասնական չլինենք:

Պետք է ցույց տանք, որ մենք եղբայրներ ենք ոչ միայն Վրաստանում և Հայաստանում, այլև ամենուրեք աշխարհում, քանի որ այդ եղբայրությունը մեր քրիստոնեական ժառանգության մասն է, որ մեկ է հասել մեր Տեր Հիսուս Քրիստոսից: Եվ էկումենիզմը, էկումենիկ շարժումը, ոգին սկսվում են նրանից, որ եղբայրները կարող են միասին լինել, միավորվել քրիստոնեական հավատքով: Բառերը, գովեստը, գրավոր խոսքը այնքան էլ համոզիչ չեն դարձնի մեր միությունը աշխարհին այնպես, ինչպես դա կանեն մեր կապերը, մեր միասնությունը, համերաշխությունը: Մեր պատմությունն է ստիպել մեր երկու՝ վրաց և հայ ժողովուրդներին կորավիգ լինել ու հավատարիմ մնալ այդ հավատքին այդքան երկար դարեր՝ հակառակ այն բազում դժվարություններին, որոնց մենք դիմագրավել ենք դարերի ընթացքում:

Ոչ միայն հավատքն է մեզ իրար հետ կապում, այլև՝ հավատարմությունն այդ հավատքին, որ դրսևորվում է այնպիսի մի վեհ արարքով, ինչպիսին է նահատակությունը: Մեր սրբերն ու նահատակներն են մեզ կապում միմյանց հետ՝ շարունակելու և կորացնելու այդ հավատքը: Ուստի, այսօր այստեղ՝ Նյու Յորքում, իմ եղբայրների կողքին, ես խորին

երախտագիտություն եմ տածում առ Աստված՝ տալու համար ինձ այս հնարավորությունը՝ ողջունել Ձեզ այստեղ՝ Ս. Վարդան Տաճարում: Ս. Վարդանի դուստր Շուշանիկը Վրաց Ուղղափառ Եկեղեցու Սրբերից մեկն է, ես դա երբեք չեմ մոռանում և ուր էլ որ գնում եմ, հիշում եմ նրան իմ աղոթքներում:

Սիրեցյալ եղբայրնե՛ր, մեր երկրները՝ Հայաստանը և Վրաստանը, ներկայումս շատ դժվարին ժամանակներ են ապրում: Դուք՝ ինքներդ և մենք էլ լավ գիտենք, թե ինչպիսի ծանր պայմաններում ենք, և մեր համերաշխությունն է, որ պիտի փրկի մեզ: Այդ համերաշխության մասին պետք է իմանան ողջ աշխարհում, պետք է իմանան ամերիկացի ժողովուրդը և կառավարությունը, բոլոր նրանք, ովքեր մինչև այսօր պատասխանատու են այս մեծ երկրի համար: Նրանք պետք է իրենց աչքերով տեսնեն և համոզվեն, որ վրաց և հայ ժողովուրդները եղբայրներ ու քույրեր են: Սիա այդ իմիջի ու նաև ազգերի ընտանիքում միասին լինելու գործոնի հանդեպ է, որ մենք դրսևորում ենք հարգանք, մեծարանք, վստահություն: Եվ Հայ Առաքելական ու Վրաց Ուղղափառ Եկեղեցիներն են, որ է՛լ ավելի պիտի նպաստեն մեր երկրների, մեր ժողովուրդների և մեր ազգերի բարեկամության ու համերաշխության ամրապնդմանը:

Օգտվելով առիթից, ցանկանում եմ իմ ջերմ գնահատանքն ու խորին երախտագիտությունն արտահայտել Նորին Սրբությանը՝ իմ սիրեցյալ եղբայր Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքին: Ձեր Եկեղեցին Ամերիկայում ինձ ողջունեց: Ես շատ բարեկամներ ունեմ Ռուս Ուղղափառ Եկեղեցում, նրանցից ոմանք այստեղ են՝ Ամերիկայում: Սակայն հենց դուք էիք, որ այս նոր աշխարհում՝ Ամերիկայում, ուղղափառ հավատքի անվերջանալի հարատևության ձեր վկայությունը կյանքի կոչեցիք:

Հայ ժողովուրդն այս օրերին տոնում է Ամերիկայում Հայ Առաքելական Եկեղեցու Ամերիկայի թեմի հիմնադրման 100-ամյա հոբելյանը: Անցյալ կիրակի օրը տաճարում ես նշեցի, որ Ամերիկայում մենք սկիզբը դրեցինք 1898 թվականին մեկ եկեղեցիով, իսկ այսօր ունենք երեք թեմ՝ ավելի քան 100 եկեղեցիներով. մեկն՝ արևելյան ափին, մյուսն՝ արևմտյան ափին, Կալիֆորնիայում, իսկ երրորդը՝ Կանադայում և այլ վայրերում:

Ուղղափառ հավատքն այսօր աշխարհում կենդանի հավատք է, և դա հենց այն է, ինչին մենք պետք է միասին հաղորդակից լինենք: Ես իմ գնահատանքն եմ արտահայտում խաժակ արքեպս. Պարսամյանին իր էկումենիկ ոգու համար, և շնորհավորում ու խրախուսում եմ Ուղղափառ Եկեղեցիների միասնականությունն ընդհանրապես ու մեր Հայ ու Վրաց Եկեղեցիների միասնականությունը մասնավորապես:

Մաղթում եմ, որ գալիք տարիներին մեր եղբայրությունն ու ընկերությունն է՛լ ավելի խորանան: Եվ երբ որևէ մեկը հյուսիսից կամ հարավից գա Նորին Սրբություն Համայն Վրաց Կաթողիկոսի մոտ և չայցելի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ապա նա մեծ մեղք գործած կլինի, և եթե որևէ հայ գա Էջմիածին՝ առանց այցելելու Թբիլիսի, նույնպես մեղք գործած կլինի: Ուստի, մենք պետք է դրսևորենք Հայ և Վրաց

ՅՈՎՍԵՓՅԱՆՆԵՐԻ ՎԱՅԱՏՁԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՀԱՆ

Եկեղեցիների ընդհանրությունը ոչ միայն Հայաստանում և Վրաստանում, այլև ամբողջ աշխարհում:

Թող Աստծո անունը օրհնյալ լինի ընդմիշտ և առհավետ»:

Հանդիսավոր արարողությունն ավարտվեց Տ. Թեոդոսիոս միտրոպոլիտի աղոթքով: Վերջում երկու Եկեղեցիների Հովվապետերն իրենց շքախմբերով դեպի Սուրբ Վարդան Մայր Տաճարի ելքն առաջնորդվեցին «Հայրապետական մաղթերգ»-ի երգեցողությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ «ՈՒՈԼԳՈՐՖ ԱՍԹՈՐԻԱ» ՊԱՆԴՈԿՈՒՄ

Սուրբ Վարդան Մայր Տաճարից Հայ և Վրաց Եկեղեցիների պետերն իրենց շքախմբերով առաջնորդվեցին դեպի «Ուոլգորֆ Ասթորիա» պանդոկ, ուր, ի պատիվ Նորին Սրբություններին, Ամերիկայի Ուղղափառ Եկեղեցու կողմից տրվելու էր պաշտոնական ճաշ:

Ներկա էին ավելի քան ութսունհինգ հրավիրյալներ, այդ թվում պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, տարբեր հարանվանությունների ներկայացուցիչներ: Հրավիրյալների թվում էին Միացյալ Նահանգներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ռուբեն Շուգարյանը, ՄԱԿ-ի մոտ ՀՀ մշտական ներկայացուցիչ Մովսես Աբելյանը, Վաշինգտոն Թի Սիում Վրաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Տաթո Ջափարիձեն, Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Լավրովը, Վրաստանի Խորհրդարանի անդամ Գիվի Շուգարովը, Նյու Յորքի Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ կարդինալ Ջոն Օ'Քոնորը, Հույն Ուղղափառ Եկեղեցու նախկին առաջնորդ Յակովոս արքեպիսկոպոսը, ԱՄՆ-ի Եկեղեցիների Ազգային Խորհրդի ընդհանուր քարտուղար տիկին Ջոան Բրաուն Քեմբելը, «Խղճմտանքի կոչ» հիմնարկության նախագահ Ռարբի Արթուր Շնայերը, Ասորի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Սիրիլ Քարիմ արքեպիսկոպոսը, Ղպտի Եկեղեցու առաջնորդ Սուրիել եպիսկոպոսը, բարձաստիճան այլ հոգևորականներ և այլոք, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ:

Ճաշկերույթի ընթացքում Ամենապատիվ Տ. Թեոդոսիոս արքեպիսկոպոսը երկու Եկեղեցիների Հովվապետերին պարգևատրեց Ամերիկայի Ուղղափառ Եկեղեցու առաջին Սրբի շքանշանով, որն այս Եկեղեցու կողմից շնորհվող բարձրագույն պատիվն է: Բացի գեղեցիկ խաչից, որի վրա փորագրված է Սրբի նկարը, Թեոդոսիոս արքեպիսկոպոսը Գարեգին Ա Կաթողիկոսին նվիրեց նաև Սուրբ Իննոսենտի սրբապատկերը, որի վրա գտնվում է նաև Սրբի մասունքը:

Խորին շնորհակալություն ու գոհունակություն հայտնելով այդ

մեծ պատվին արժանանալու համար՝ Ամենայն Հայոց Հայրապետն ի մասնավորի ասաց.

«Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, բարեկամներ, եղբայրներ և քույրեր.

Իմ կյանքում այս պահն իրոք մեծ նշանակություն ունեցող իրադարձություն է, որովհետև ես շրջապատված եմ տարբեր քրիստոնեական համայնքների և դավանանքների պատկանող այսքան մեծաթիվ քրիստոնյաներով, որոնք, չնայած այդ տարբերություններին, կապված են միմյանց հետ միասնության, համերաշխության կապերով ու սիրով: Ես վերհիշում եմ այն հայտնի արտահայտությունը, որ երբեմն վերագրվում է Ս. Օգոստինոսին, թեև, իմ սիրեցյալ եղբայր, արքեպիսկոպոս Յակովոսն ինձ մի օր հայտնեց, որ այդ արտահայտությունը գալիս է Լերինս անունով մեկ այլ սրբից: Այնուամենայնիվ, խնդիրն այն չէ, թե ով է հեղինակը, այլ խնդիրն այն է, որ մենք ունենք «միութիւն ի կարեւորս, ապատութիւն յերկբայականս եւ սէր յամենայնի» բանաձևումը: Եվ ձեր այդ գործողության մեջ, սիրեցյալ իմ եղբայր Թեոդոսիոս, ես տեսնում եմ արտահայտությունն այն կարեկցության, բարեգործության և սիրո, որ միշտ կապում է մեկ միմյանց հետ, որտեղ էլ որ մենք լինենք: Ես կարծում եմ, որ որտեղ էլ մենք գտնվենք, ոչ մի աշխարհագրական, քաղաքական, տնտեսական կամ այլ կարգի սահմաններ չեն լինի, երբ մենք խոսում ենք մեր քրիստոնեական ինքնության մասին, որտեղ գերիշխում է սերն առ մեր Տեր Հիսուս Քրիստոս:

Այսօր իրոք ես ինձ զգում եմ արժանացած շատ մեծ պատվի, քանի որ այս շքանշանն ինձ է շնորհվում իմ սիրեցյալ եղբոր՝ Նորին Սրբություն Համայն Վրաց Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքի ներկայությամբ: Մի քանի րոպե առաջ, սեղանի շուրջ նստած, ես մտածում էի, թե ի՞նչ ուղիներով է առաջնորդում մեկ Աստված, ուղիներ, որոնք մեկ անհայտ ու անծանոթ են: Ո՞վ կպատկերացներ, թե հինավուրց Փոքր Ասիայի արևելյան մասում, կամ էլ Ռուսաստանի հարավային մասում՝ Կովկասում գտնվող միակ երկու քրիստոնյա երկրների հոգևոր առաջնորդները կհանդիպեն միմյանց Նյու Յորքում: Մենք առաջներում էլ ենք հանդիպել, ես այցելել եմ Նորին Սրբությանը Թբիլիսիում, նա էլ ինձ՝ Ս. Էջմիածնում: Բայց ո՞վ կարող էր պատկերացնել, որ մենք կհանդիպեինք այստեղ՝ Նյու Յորքում:

Ոգին շարժվում է, քամին փչում է, և մենք զգում ենք, որ հետևում ենք քամու ուղղությանը, և այդ ուղղությունը մեկ իրար մոտ բերեց Նյու Յորքում:

Եվ իրոք, մեր քրիստոնեական հանձնառությունը չի ճանաչում որևէ աշխարհագրական բաժանում կամ ազգային տարբերակում: Այն մեծ դասը, որ մենք յուրացրել ենք խորհրդային իշխանության 70 տարիների ընթացքում, այն է, որ քրիստոնեական ապդեցությունը, քրիստոնեական կնիքը, դրոշմը մեր երկու՝ հայ և վրաց ժողովուրդների սրտերում, մտքերում և կյանքում չեն ջնջվել և չեն էլ կարող ջնջվել, որովհետև այն

խոր արմատներ է նետել մեր ողջ գոյության մեջ: Եվ եթե կարելի է այստեղ կիրառել «ներմշակութայնացում» բառը, ապա դա հենց այն է, ինչ տեղի ունեցավ շատ դարեր առաջ և երբեք չվերացավ, քանի որ մենք գոյատևեցինք իբրև քրիստոնյաներ, կամ էլ ընդհանրապես չէինք գոյատևի:

Այստեղ ես կցանկանայի մեջբերում կատարել 5-րդ դարի մի հայ պատմիչից՝ Եղիշեից, որն ասել է. «Քրիստոնեությունը մեկ համար նման է մաշկի գույնին, այլ ոչ մեր հագի հագուստների գույնին»: Ուստի, այսօր այստեղ տեսնելով այսքան բազմաթիվ Եկեղեցիներ ներկայացնող իմ բարեկամներից շատերին, իմ հրեա ընկերներին, կուզենայի կոչ անել ձեզ՝ մոռացության չմատնել աշխարհի այդ մասի մեր երկրները: Ես բավական ակտիվ մասնակցություն եմ ունեցել էկումենիկ շարժմանը: Եղել են ժամանակաշրջաններ, երբ բոլոր ջանքերը կենտրոնացվել են Արևելյան Ասիայի, Աֆրիկայի կամ Միջին Ասիայի ուղղությամբ: Սակայն այժմ աշխարհի ուշադրությունն ուղղվել է դեպի մեկ՝ դեպի Արևելյան Եվրոպան:

Արևելյան Եվրոպան չի սահմանափակվում միայն Լեհաստանով կամ Ուկրաինայով, այլ ընդգրկում է նաև մեր երկու երկրները՝ Վրաստանը և Հայաստանը, որոնք հանդիսացել են եվրոպական մշակույթի ուղն ու ծուծը, և եղել են վկայությունն այն նույն ոգու, որ կերտել, ձևավորել է այն, ինչ մենք այսօր անվանում ենք եվրոպական քաղաքակրթություն: Եվ այժմ, երբ Եվրոպան նպատակադրում է իր բոլոր ջանքերը՝ իրականություն դարձնելու Եվրոպական միությունը, այս մշակութային բազմականությունը պիտի գտնի մի ընդհանուր հայտարար: Իմ կարծիքով, էկումենիկ շարժումը ոչ միայն լոկ միջեկեղեցական փոխհարաբերություն է, այլ նաև ոգու գիտակցություն, որը երբեք չի կարող խարսխված լինել միայն տնտեսական, ֆինանսական, քաղաքական կամ այլ հիմքերի վրա, եթե չլինի հոգևոր հիմքը:

Ուստի, հենց այդ նկատառումով էլ ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել ձեզ բոլորիդ՝ այսօր այստեղ գալու համար, ինչպես նաև իմ սիրեցյալ եղբայր Թեոդոսիոսին, ում ես ճանաչում եմ շատ վաղուց: Այս անգամ ես եկել եմ Հայաստանից ոչ թե հերթական հովվապետական այցելություն տալու, այլ նախագահելու Ամերիկայի այս օրինյալ երկրում հայկական թեմի հիմնադրման առաջին 100-ամյակի տոնակատարությունը: Ուստի, այժմ մեկ համար գոհաբանական մաղթանքի ժամանակն է՝ ԱՄՆ-ի բոլոր պետական-վարչական օղակներին, որոնք այստեղ գաղթած մեր հայորդիների համար կարելիություններ ստեղծեցին, և Աստծո կորությամբ մեր մարդիկ կարողացան ոտքի կանգնել, այլ ոչ թե մնալ փախստականների ակգ:

Մենք ոչ թե սոսկ վերապրողների ակգ ենք, այլ՝ մի ակգ, որը ստեղծագործաբար մասնակցում և անդադար իր լուման է ներդնում մարդկության ընտանիքի կարգացման գործին և աշխուժացնում այդ ընտանիքը, լինի դա Ամերիկայում թե Եվրոպայում, Միջին կամ Հեռավոր Արևելքում թե Կովկասում: Ուզում եմ ասել, եկեք այսօր տոնենք ոչ թե մեր Եկեղեցու հիմնադրման 100-ամյակը, այլ՝ մեր բոլորի հավատար-

մությունն այն ավանդույթին, որ մենք ժառանգել ենք և պիտի պահպանենք ու շարունակենք մեր ստեղծագործական վկայությամբ, և ոչ միայն անցյալի հիշողություններով ու հուշերով, կամ էլ սփոփվենք յոն մեր անցյալով:

Այժմ այնպիսի ժամանակներ են, երբ մենք դիմագրավում ենք նոր մարտահրավերներ: Մարդիկ խոսում են գլոբալիզմի մասին, որն աստվածաբանության, փիլիսոփայության և սոցիոլոգիայի բնագավառում ընդունված եզր է: Ես, սակայն, կարծում եմ, որ մենք յուրահատուկ, բացառիկ ազգ ենք, որտեղ էլ որ լինենք: Սակայն գլոբալիզմն այն երևույթն է, երբ մենք առանց ժխտելու մեր յուրահատկությունը, բացառիկությունը և կրելով Քրիստոսի դրոշմը որպես քրիստոնյա ազգ Հայաստանում կամ էլ աշխարհի որևէ այլ մասում, կարողանանք հարմարվել մարդկության ազգերի ընտանիքին:

Թող Աստված օրհնի ձեզ բոլորիդ. ամեն»:

Ապա Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, ի գնահատություն Ամերիկայի Ուղղափառ Եկեղեցու գործունեության և ուղղափառ հավատքի քարոզչական առաքելության, Ամենապատիվ Թեոդոսիոս արքեպիսկոպոսին հանձնեց Սուրբ Մարիամ Աստվածամոր պատկերի կրկնօրինակը, որ քանդակված է 10-րդ դարում կառուցված Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու վրա:

Հայտագիրն ավարտվեց Նյու Յորքի Կաթոլիկ եկեղեցու առաջնորդ կարդինալ Ջոն Օ'Քոնորի խոսքով: Կարդինալը նշեց, որ Ամերիկան կարիք ունի լսելու հավատքի այն վկայության ու հավատարմության մասին, որոնք դրսևորել են աշխարհի այս հին ժողովուրդները՝ Քրիստոսի ու Նրա Եկեղեցու հանդեպ, ինչպես նաև պատրաստակամություն հայտնեց նեցուկ կանգնել երկու հնադարյան եկեղեցիների առաքելական գործունեության շարունակական ընթացքին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՋՈՆ Ֆ. ՔԵՆԵԴԻԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԵՆԱՏՈՐ ԷԴՈՒԱՐԴ Մ. ՔԵՆԵԴՈՒ ՀԵՏ

Մայիսի 15-ի ուրբաթ օրը, երեկոյան, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Բոստոն կատարած այցելության ժամանակ, հյուրընկալվեց սենատոր Էդուարդ Մ. Քենեդու կողմից, Ջոն Ֆ. Քենեդու անվան պերճաշուք գրադարանում, որ գտնվում է Հարավային Բոստոնում:

Կեսօրին իր շքախմբով ժամանելով Բոստոն, Նորին Սրբությունը դիմավորվեց տեղական իշխանությունների ներկայացուցիչների, հոգևորականաց դասի և մեծաթիվ հավատացյալների կողմից:

Ապա Նորին Սրբությունն առաջնորդվեց Ջոն Ֆ. Քենեդու անունը կրող գրադարան: Մուտքի մոտ Հայոց Եկեղեցու հոգևոր պետին և

ԴՈՒՇԱՆԻՎԵՐՆԵՐԸ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՊՍԱԿՆ
ՏՑԻ ԿԻԵՎՈՒՄ ԷԴՈՒՄԸ ՔԵՆԵԴԻՒ ՀԵՏ.

նրան ուղեկցողներին դիմավորեց սենատոր Էդուարդ Մ. Քենեդին, կինը, բարձրաստիճան պաշտոնյաներ, գրադարանի աշխատակիցներ:

Ողջագուրանքից հետո, սենատորը լուսանկարվեց բարձրաստիճան հյուրի հետ, ապա փոխանակվեցին բարեողջույնի խոսքեր:

Իր խոսքում Նորին Սրբությունն այսպես մեկնեց Միացյալ Նահանգներ իր հերթական այցելության նպատակը. «Ես Միացյալ Նահանգներ եմ եկել՝ գոհություն հայտնելու Աստծուն՝ հայ ժողովրդի 100-ամյա հավատարիմ վկայության ու ծառայության համար: Եկել եմ այս մեծ երկիր, որ շնորհակալություն հայտնեմ իմ բոլոր հայ քույրերին ու եղբայրներին՝ ամենաբարձր քաղաքական իշխանության ներկայացուցչից մինչև ամենապարզ ու հասարակ մարդը»:

Ապա Հայոց Հայրապետը շրջվեց դեպի սենատորը և խնդրեց տալ Ամերիկայում ապրող մեկ ոճրագործ հայի անուն՝ ընդգծելով այն փաստը, որ հայերը միշտ եղել են և են օրինապահ քաղաքացիներն այս երկրի:

Նորին Սրբության խոսքից հետո երկուստեք փոխանակվեցին հուշանվերներ: Հանուն գրադարանի, սենատոր Քենեդին Հայոց Հայրապետին նվիրեց իր հանգուցյալ եղբոր՝ Ջոն Ֆ. Քենեդու պղնձյա կիսանդրին և, ի պատասխան, Նորին Սրբությունից ստացավ երկու հուշանվեր՝ մի խաչքար և մի ափսե, որի վրա պատկերված էր Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ՝ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ի պատիվ Նորին Սուրբ Օծության, սենատորը եղբոր անունը կրող գրադարանում կազմակերպել էր ճոխ ճաշկերույթ, որին մասնակցելու պատվին էին արժանացել նաև Նյու Ինգլանդի 300 նշանավոր հայ ազգայիններ:

Ասենք, որ Ամենայն Հայոց Հայրապետը գրադարանի երկրորդ հայ ակնառու պատվավոր հյուրն էր: Երկու տարի առաջ գրադարանը դարձյալ կազմակերպել էր «Ակնառու օտարերկրյա այցելուների ճաշ»՝ ի պատիվ Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի: Նմանատիպ ճաշկերույթների կազմակերպումն այս հանրահայտ հաստատության գեղեցիկ ծրագրերից մեկն է, որի ընթացքում ըստ արժանվույն են հյուրընկալվել աշխարհի այնպիսի նշանավոր դեմքեր և բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպիսիք են Ֆիլիպինների Հանրապետության նախագահ Կորազոն Ակվինոն, Պակիստանի վարչապետ Բենազիր Բհուտտոն, Վրաստանի Հանրապետության նախագահ Էդուարդ Շևարդնաձեն, Չեխոսլովակիայի Հանրապետության նախագահ Վացլավ Հավելը, Հույն

Ուղղափառ Եկեղեցու Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Բարդողիմեոս Առաջինը և շատ ու շատ ուրիշներ:

Ճաշկերույթի ընթացքում, որը հաջորդեց մեկժամյա կոկտեյլին, Ջոն Ֆ. Քենեդու անվան դրադարանի տնօրեն տիար Բրադլի Ս. Ջերրաթը ջերմ ողջույնի խոսքեր հղեց Նորին Սուրբ Օծությանը և ուրախություն հայտնեց այն առիթով, որ, չնայած առողջական վիճակի հետ առնչվող բարդություններին, Գարեգին Ա Կաթողիկոսը դրադարան էր այցելել բարձր տրամադրությամբ, ինչը վկայում է Հայ Եկեղեցու Հովվապետի առողջական բարվոք վիճակի մասին:

Երիտասարդ հայուհի Աննա Միքայելյանի դաշնամուրային գեղեցիկ կատարմանը հաջորդեց դրադարանի փոխտնօրեն Դոննա Ամերլասի բարիգալստյան խոսքը:

Ըստ ընդունված կարգի, թեմակալ առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, որ բոլոր այցերի ժամանակ ուղեկցում էր Նորին Սրբությանը, հակիրճ կերպով ներկայացրեց Հայոց Հայրապետին և ապա առանձնակի հիշեցրեց, որ հանգուցյալ նախագահ Ջոն Ֆ. Քենեդին դեռևս 35 տարի առաջ կանխատեսում էր աշխարհի մի նոր կարգ, ուր բացակայում է բռնակալությունը: Իսկ հայերի պարագային ոչ միայն վերացել է բռնակալությունը, այլև հիմնվել է ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետությունը, և Ամենայն Հայոց Հայրապետն էլ Միացյալ Նահանգներ է ժամանել նորանկախացյալ այդ երկրից:

Իր հերթին խոսելով Միացյալ Նահանգներում բնակվող հյուրասեր ու բարեկամ ժողովուրդների մասին, Վեհափառ Հայրապետը բարձրորեն գնահատեց հանգուցյալ նախագահ Ջ. Ֆ. Քենեդու քաղաքական գործունեությունը, անդրադարձավ նաև ներկայումս գործող դրադարանի աշխատակազմին, առանձնակի շնորհակալություն հայտնեց սենատոր Քենեդուց և ապա ավելացրեց, որ ինքն այս հյուրասիրությունը համարում է սիրո ճաշ կամ, քրիստոնյաների լեզվով ասած, ագապե: Հիշեցրեց, որ հարյուր-հազարավոր հայեր Միացյալ Նահանգներ են տեղափոխվել՝ մազապուրծ փախչելով բռնակալությունից ու տառապանքից, «որին հաջորդեց պայծառակերպությունը: Նրանք այստեղ գտան իրենց կյանքը բարելավելու համար ապատություն և հույս»: Ամենայն Հայոց Հայրապետը նաև ասաց, որ այս երկրում հայ համայնքը ոչ միայն դարձել է հարուստ, այլև հզոր, որովհետև նախկինում երբեք այսքան շատ հաջողություններ չեն գրանցվել՝ հօգուտ հայ ժողովրդի, և ավելացրեց. «Սա, անշուշտ, պայծառակերպության հրաշքն է»:

Անդրադառնալով Առաջնորդական թեմի 100-ամյա հոբելյանի տոնակատարմանը, Գարեգին Ա Կաթողիկոսը նկատեց, որ այն լավագույն պահն է՝ հարգանքի տուրք մատուցելու համար մեր

նախնիներին և բոլոր նրանց, ովքեր իրականացրին համայնքի՝ այս երկրում հիմնավորվելն ու առաջընթացը և նաև անհրաժեշտ է մի ակնթարթ կանգ առնել՝ որոնելու մեր վերընձյուղումն ու վերհառնումը:

«Ապատությունն ու անկախությունը,– ավելացրեց Ամենայն Հայոց Հայրապետը,– իրենց հետ բերում են մեծ պատասխանատվություն, որից մենք չպետք է խուսափենք: Պատասխանատվությունից էլ ծագում են պարտավորությունները, որոնք նույնքան կարևոր են»: Նորին Սրբությունը նշեց նաև, որ հայ ժողովուրդը, այս ափերը գալով, ավելի շատ բան է գտել, քան գոյատևելը: Նրանք ներգրավվել են «ազգի կերտման» գործընթացում: Նորին Սուրբ Օծությունն իր խոսքը եզրափակեց Միացյալ Նահանգներում բնակվող ժողովուրդներին ուղղված կոչով, որպեսզի նրանք շարունակեն իրենց օժանդակությունը բերել հայ ժողովրդի ու Հայաստանի բարգավաճման գործին՝ ասելով. «Առանց միասնության մենք փոքրանում ենք: Միասնությամբ փոքր ալգերը հզորանում են»:

Առավել մանրամասնելով իր երկրի սերը հայոց հինավուրց աշխարհի ու քաջարի ժողովրդի հանդեպ, սենատորն ավելացրեց. «Եղբայրս չափազանց հպարտ կլգար իրեն, եթե ողջ լիներ, որովհետև իր անունը կրող գրադարան է այցելել այսօր և հարգանքի տուրք է մատուցում հայ ժողովրդի մեծագույն առաջնորդներից մեկը»: Շարունակելով ասելիքը, սենատոր Քեննեդին, որ Կոնգրեսում հայ ժողովրդի և Հայկական հարցի հիմնական ջատագովներից ու օժանդակողներից է, նշեց, որ Միացյալ Նահանգների համար հատուկ տեղ ու արժեք ունեն հայերը և Հայաստանի Հանրապետությունը: Նա հիշեցրեց, որ իր հանգուցյալ եղբայրը՝ նախագահ Ջոն Ֆ. Քեննեդին, բարեկամական հատուկ զգացում էր տածում «քաջարի հայ ժողովրդի հանդեպ և օժանդակում էր նրանց՝ իրենց ազատության ու անկախության համար մղվող պայքարում հատկապես այն ժամանակ, երբ հայ ժողովրդի վրա ծանրացել էր Խորհրդային Միության ծանր ձեռքը»:

Պաշտոնական հյուրընկալությունն ավարտվեց երկուստեք փոխանակված նվերներով և Հայոց Հայրապետի «Պահպանիչ»–ով:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆԸ ՔԵՄԲՐԻՋԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՀԱՆԴԻՊԵՑ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԲՈՍՏՈՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԿԱՐԴԻՆԱԼ ԲԵՐՆԱՐԴ ԼՈՌԻ ՀԵՏ

Մայիսի 16–ի շաբաթ օրն առանձնակի շուք էր ստացել Քեմբրիջի Սուրբ Երրորդություն եկեղեցին: Երեկոյան տաճար ժամանեց

Ամենայն Հայոց Հայրապետն իր շքախմբով, ուր դիմավորվեց Կաթոլիկ Եկեղեցու Բոստոնի թեմի առաջնորդ կարդինալ Բերնարդ Լոուի կողմից: Նորին Սրբությանը դիմավորում էին նաև տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, երկու Եկեղեցիների հոգևորականներ, մեծաթիվ հավատացյալներ:

Սուրբ Երրորդություն Հայկական եկեղեցում Գարեգին Ա Ծայրագույն Պատրիարքի և Ամենայն Հայոց Հայրապետի, ինչպես նաև Կաթոլիկ եկեղեցու կարդինալ Լոուի եղբայրական հանդիպումը Հայ եկեղեցու Ամերիկայի թեմի 100-ամյակի տոնակատարության յուրահատուկ մասն էր կազմում:

Դուրս գալով երիցատնից, Նորին Սրբությունն ու կարդինալ Լոուն թափորով առաջնորդվեցին դեպի եկեղեցի՝ մասնակցելու երեկոյան ընդհանրական արարողությանը, որին ներկա էին քսանից ավելի այլ եկեղեցական հարանվանությունների ներկայացուցիչներ ու հոգևոր առաջնորդներ:

Երեկոյան ժամերգությունից հետո, ողջունելով Հայոց Հայրապետի օրհնաբեր այցը Միացյալ Նահանգներ, հատուկ ուղերձով դիմելով ներկաներին, Կաթոլիկ եկեղեցու կարդինալը նշեց քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի կարևորությունը հայ ժողովրդի և ընդհանրապես համայն քրիստոնյա աշխարհի համար և առաջարկեց կազմակերպել հատուկ ուխտագնացություններ, որոնք հնարավորություն կտան այլ եկեղեցիների հավատացյալների խմբերին ևս իրենց մասնակցությունը բերել տոնակատարության զանազան ծրագրերին:

Իր հերթին շնորհակալություն հայտնելով իրեն պատվելու, Հայոց եկեղեցում գտնվելու ուրախ առիթով և ապա անդրադառնալով կարդինալի առաջարկությանը, Նորին Սուրբ Օծությունն ասաց, որ ինքը Հայաստան այցելության բաց հրավեր է տալիս կարդինալ Լոուին՝ 1700-ամյակի տոնակատարություններին անձամբ մասնակցելու համար:

***

Հավարտ ընդհանրական աղոթքի, մեծաթիվ հավատացյալներ հավաքվեցին Ս. Երրորդություն եկեղեցու Թալանյան սրահում՝ ներկա գտնվելու Նորին Սրբության հետ հանդիպմանը:

Ողջունելով բարձրաստիճան հյուրերին ուրախաբեր այցելության առիթով, Բենթլի քոլեջի նախկին տնօրեն դոկտոր Գրեգորի Ադամյանը նաև անդրադարձավ Ամերիկայում Հայոց Եկեղեցու և Հայկական Համայնքի առաջընթացին՝ սկսյալ հիմնադրման օրվանից:

Գնահատելով մի շարք ազգային բարերարների հայապահպան ու նվիրյալ գործունեությունը, Հայոց Հայրապետը նրանց հանձնեց

պարգևներ: Հատուկ պատվի արժանացան Նյու Ինգլանդի երեք ակնառու անդամներ: Դոկտոր Գրեգորի Ադամյանը և պարոն Ջոն Պարոնյանը կրթության ու մշակույթի բնագավառում իրենց կատարած անմնացորդ ծառայության համար պարգևատրվեցին «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով: «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան շնորհվեց դոկտոր Միքայել Բոլիգյանին՝ Հայ Եկեղեցուն կատարած օժանդակության համար:

Վերջում ներկաներն արժանացան Հայոց Հայրապետի աջահամբույրին:

Հանդիպումն ավարտվեց Նորին Սրբության «Պահպանիչ»-ով:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՈՒՈՐՍԵՍԹԵՐ ՔԱՂԱՔԻ Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 17-ի կիրակի օրը, առավոտյան, Նորին Սուրբ Օծությունն իր շքախմբով մեկնեց Ուորսեսթեր՝ մասնակցելու Միացյալ Նահանգներում կառուցված անդրանիկ հայկական Սուրբ Փրկիչ եկեղեցում մատուցվելիք եպիսկոպոսական Սուրբ Պատարագին:

Օրվա պատարագիչն էր գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը: Ս. Պատարագին ներկա էին քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, հոգևոր առաջնորդներ, մեծաթիվ հավատացյալներ: Այդ կիրակի Նյու Ինգլանդի տարածքի ոչ մի եկեղեցում կիրակնօրյա Ս. Պատարագ չմատուցվեց առաջնորդ Սրբազանի հրահանգով, որպեսզի տվյալ ծխերի անդամները և հոգևոր հովիվները ևս կարողանան ներկա գտնվել Սուրբ Փրկիչ եկեղեցում մատուցվելիք Ս. Պատարագին:

Պատարագի դպրաց բաժինը երգում էր տեղի երգչախմբի անդամներից և Նյու Յորքից ժամանած երգիչներից կազմված միացյալ երգչախումբը, որը ղեկավարում էր Նյու Յորքի Ս. Վարդան եկեղեցու երգչախմբի ղեկավար Խորեն Մեյխանեջյանը:

Հընթացս մատուցվող Ս. Պատարագի, «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Նորին Սուրբ Օծությունը: Կրկին անգամ անդրադառնալով ամերիկահայության անցած ուղուն և հաստատմանը Հայրենիքից հեռու այդ երկրում, Ամենայն Հայոց Հայրապետն ի մասնավորի ասաց.

«Փառք և գոհություն Քեզ, Հայր Երկնավոր, որ շնորհ տվեցիր իմ տկար անձին և իմ հոգևոր եղբայրներին ու Հայաստանյան Եկեղեցու բոլոր կավակներին անխտիր՝ ապրելու աղոթքի այս պահը Քո ներկայության, Քո կորության և Քո սիրո մեջ: Փառք և գոհություն Քեզ, Ամենակալ Աստված, որ շնորհեցիր Քո կավակներին 100 տարվա քրիստոնեական կյանքի վկայության և ծառայության մի շրջան Ամերիկայի այս օրհնյալ հողի վրա:

Շնորհակալություն, սիրելի եղբայրներ և քույրեր, որ այսօր հարստացրեցիք իմ կյանքը ձեր հոգևոր միասնությամբ այս Մայր եկեղեցու կամարների տակ:

Սիրելի եղբայրներ և քույրեր, այս այցելությունը սովորական հովվական այցելության նկարագիր և տարողություն չունի, այն հատուկ այցելություն է հատուկ նպատակով, և ես ուզում եմ, որ բոլորս էլ զգանք այս պահին, որ այսօրը պատմական օր է, որ ապրում ենք մեր կյանքում:

Ես կարծում եմ, որ դուք բոլորդ էլ նույն զգացողությունն ունեք: Այսօր մենք պատմական կարևորություն, նշանակություն ունեցող պահ ենք ապրում: Այսօր մենք դառնում ենք վկաները պատմակերտ մի իրադարձության, շրջում ենք մեր մեկդարյա կյանքի և վկայության էջը և երկրորդ հազարամյակի մայրամուտին Ամերիկայի օրհնյալ այս հողի վրա հայության ներկայության և վկայության երկրորդ հարյուրամյակի նոր էջն ենք բացում:

Այսօր ես կուզենայի ձեզ հետ կիսվել երեք կարևորագույն զգացումների շուրջ, որոնք, իմ կարծիքով, ԱՄՆ-ում մեր պատմության այս շրջադարձային պահին ինքներդ ձեզ հասկանալու համար ձեր էության անբաժանելի մասն են կազմում: Այդ զգացումներն են գոհությունը, շնորհակալությունը Աստծուն, ինքնագիտակցությունը, մեր այսօրվա գոյության վերարժևորումը և ապագայի տեսիլքը:

Գոհաբանական մաղթանքն ամերիկյան բառապաշարի ամենագեղեցիկ բառերից մեկն է, որը ես երբեք չեմ դադարել կիրառել, ուր էլ որ եղել եմ այս աշխարհում: Մենք մեր ամբողջ կյանքի ընթացքում երախտապարտ ենք նրան, որ մեր կյանքի աղբյուրն է և ինչպիսի տեխնիկական և գիտական մեծ նվաճումներ էլ որ ունենանք, մեր գիտակցության մեջ երբեք չպիտի աղոտանա այն հանգամանքը, որ մենք մեր կյանքի համար պարտական ենք Աստծուն: Կյանքը Աստծու ճառագայթն է մեր մեջ: Աստված հողի մեջ կենդանի շունչ փչեց, և մարդը եղավ կենդանի հոգի: Մենք այս կյանքը ապրեցինք դարեր շարունակ գոհություն տալով Աստծուն, որ այս կյանքը մենք չունենք իբրև սեփականություն, այլ ունենք իբրև պարտականություն: Եվ այնքան ժամանակ, որքան մենք մեր կյանքն ապրենք՝ հավատարմորեն ծառայելով Աստծուն, այնքան ավելի ստեղծագործական և երջանկաբեր կդառնա այն: Ինչպես ջուրը երբ կտրվում է ակից, աղբյուրից, ցամաքում է, այնպես էլ մարդը երբ կտրվում է կյանքի աղբյուրից, ցամաքում է իբրև հոգևոր էակ:

Իմ խոսքի այս մասում ես ուզում եմ պարզապես հիշեցնել բոլորիդ, որ 19-րդ դարի վերջերին Մուշի, Տարոնի և Սասունի ջարդերից անմիջապես հետո, Խրիմյան Հայրիկը խորաթափանցությունն ունեցավ Ամերիկայում իր ժողովրդի հոգևոր բարօրության համար հիմնել այս թեմը: Մեր հայրերը եկան այստեղ իբրև փախստականներ, եկեք չմոռանանք, որ այստեղ եկան՝ փախչելով մահից, տանջանքից և ողբերգությունից: Նրանք այստեղ գտան նոր կյանք, և այդ կյանքի ամենամեծ արժանիքը ապաստությունն էր, որի միջոցով նրանք կարող էին բացահայտել իրենց ինքնությունը որպես մարդկային էակներ՝ հայ

մարդու նկարագրով: Ուստի ես այս պահին խոնարհաբար ծնկի եմ իջնում ձեզ հետ միասին Աստծու առջև և խոնարհվում իմ բոլոր նախորդների հավերժ հիշատակին՝ սկսած Խրիմյան Հայրիկից, որը հիմնեց այս թեմը,. մինչև իմ անմիջական նախորդ Վազգեն Ա երջանկահիշատակ Կաթողիկոսը: Նրանք հայրական հոգածություն դրսևորեցին Ամերիկայի հայկական համայնքի հանդեպ:

Ես հարգանքի տուրք եմ մատուցում նաև բոլոր թեմական առաջնորդներին, հոգևորականներին, արքեպիսկոպոսներին, եպիսկոպոսներին, վարդապետներին, քահանաներին, սարկավագներին, աշխարհական ծառայողներին, բարերարներին և բոլոր այն անձանց, ովքեր պատասխանատվություն ստանձնեցին վառ պահել Եկեղեցու լույսը, որոնք քաջություն ունեցան իրենց վրա վերցնել հասարակական պատասխանատվություն, թեմական խորհուրդներին և թեմական ժողովներին և մեր Եկեղեցու մյուս բոլոր կազմակերպություններին, որոնք այսօր մեզ հետ չեն: Թող Աստված ընդունի նրանց հոգիները երկնային երանության և հավերժական խաղաղության մեջ: Գոհություն, շնորհակալություն, որ Աստված տվեց մեր ժողովրդին բոլոր հնարավորությունները՝ դուրս գալու փախստականի վիճակից և դառնալու լիարժեք, արժանապատվության զգացում ունեցող, պատվաբեր քաղաքացիները այս մեծ երկրի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների:

Այս երկրում հայերի հետ կերպարանափոխություն տեղի ունեցավ: Թշվառ, անմխիթար վիճակից նրանց կյանքը վերափոխվեց ստեղծագործ կյանքի: Երբ ես կարդում եմ Ամերիկայում մեր հայ ժողովրդի կյանքի 100-ամյա պատմությունը, հանդիպում եմ շատ հուզիչ պատմությունների այն մասին, թե ինչպես մարդիկ աշխատում էին ֆաբրիկաներում և գործարաններում՝ փայփայելով հիշողություններն ու հույսերը իրենց երկրի մասին, հուսալով, որ օրերից մի օր իրենց երկիրն ի վիճակի կլինի ողջունել իրենց վերադարձը Հայրենիք: Նրանց մեջ կային մարդիկ, որ շաբաթավարձ էին ստանում: Եվ ինչպիսի կերպարանափոխություն տեղի ունեցավ: Այսօր մենք դարձել ենք աշխույժ մի համայնք, որտեղ ապրում և գործում են մտավորականներ, արվեստագետներ, արդյունաբերողներ, շինարարներ:

Շնորհակալություն Աստծուն, որ այս երկիրը տվեց մեզ բոլոր հնարավորությունները՝ մեր կյանքն արժանի դարձնելու այն նպատակին, ինչի համար որ Աստված մեզ կյանք է շնորհել՝ երջանկության համար: Եվ այն բառը, որ ամերիկյան բառարանից ես սովորել եմ և որը երբեք չեմ մոռանա, դա երջանկությանը հետամուտ լինելն է, թիրախը, նպատակակետը, որ նշանակում է կյանքի ընբռնման մտածելաոճ ծնող ուղղություն, և այն կարող է բերել ինքնագնահատման, թե ովքեր ենք մենք այսօր:

Մեր երկիրը հարյուր տարի առաջ վշտի ու մահվան դաշտ էր, մենք առնում էինք ջարդերի, կոտորածների, հալածանքների լուրը:

Այսօր արևը ծագել է մեր Մայր Հայրենիք Հայաստանի վրա: Ես ձեզ մոտ եմ եկել այնպիսի երկրից, որն այլևս չի ողբում, այլ նայում է առաջ, դեպի ապագան՝ դառնալու ՄԱԿ-ի և ազգերի համաշխարհային ընտանիքի արժանապատիվ լիարժեք անդամ:

Շնորհակալություն քեզ, Աստված, որ մենք այն չենք, ինչ որ էինք հարյուր տարի առաջ: Ինչպե՞ս ենք այժմ դիմագրավելու նոր մարտահրավերներին: Կյանքը միայն պարգև չէ, այլ նաև հուշում, որ մենք պիտի վերադառնանք Աստծուն: Եվ այսօր, երբ մարդկանց կյանքում տեղ է գտել նոր շարժում դեպի ծայրահեղ աշխարհայնացում, հոգևոր արժեքները պետք է վերստին կյանքի կոչվեն: Մենք այդ արժեքներով ենք ապրել և ապրելու ու հարատևելու ենք Աստծու օգնությամբ, մեր հավատով, սիրով միմյանց հանդեպ, Մայր Հայրենիքի ու Հայոց Եկեղեցու հանդեպ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Հավարտ Սուրբ Պատարագի, կատարվեց Հոգեհանգստյան կարգ բոլոր նրանց հոգիների հանգստության ու խաղաղության համար, ովքեր եղան հայոց նոր բնօրրանի և հայկական անդրանիկ եկեղեցու հիմնադիրները ամերիկյան հողում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ՝ Ի ՊԱՏԻՎ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅԱՆ

Հավարտ Սուրբ և անմահ Պատարագի, ի պատիվ Նորին Սրբության և բարձրաստիճան հյուրերի, տրվեց 100-ամյակին նվիրված պաշտոնական ճաշ, որին ներկա էին տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, բարձրաստիճան հոգևորականներ, մեծաթիվ ազգայիններ:

Պաշտոնական ճաշի ընթացքում բարեողջույնի և սրտի խոսքեր ասացին Մասսաչուսեցի նահանգի նահանգապետ տիար Արջեո Փոլ Սելուսսին, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, Պալատի անդամ Ջեյմս Փ. Գովերնը, Ուորսեսթերի քաղաքապետ տիար Ռեյմոնդ Վ. Մարիանոն և ուրիշներ:

Թեմական առաջնորդ Սրբազան Հոր խոսքից հետո, բոլոր ներկաներին իր հայրապետական պատգամը հղեց Ամենայն Հայոց Հայրապետը:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ՝ ՆՅՈՒ ՅՈՐՔԻՑ

Համաձայն Ֆրանսիայի Ազգային Ժողովի մի շարք երեսփոխանների բնորոշման, 1998 թ. մայիսի 29-ը ոչ միայն ֆրանսահայության, այլև ողջ հայության համար մեծ կարևորություն ունեցավ:

«Հայկական ցեղասպանությունը ճանաչելու մասին» օրենքի

նախագիծը քննարկելու նպատակով, մայիսի 29-ի ուրբաթ օրը, առավոտյան ժամը 8.00-ին, տարբեր քաղաքական ուժերի պատկանող 31 երեսփոխաններ էին հավաքվել: Քննարկումը բաղկացած էր երեք տարբեր փուլերից: Նախ Անտոնի քաղաքապետ պատգամավոր Պատրիկ Տևեճյանը և մյուս ելույթ ունեցողները ներկայացրեցին օրենքի նախագիծը: Այնուհետև քննարկվեցին ներկայացված առաջարկները: Տարաձայնությունները վերաբերվում էին հայկական ցեղասպանությունը գործած երկրի և ժողովրդի անունը նշելու կամ չնշելու հարցին:

Առաջարկված նախագիծը պաշտպանեցին սոցիալիստ պատգամավոր, Ֆրանսիա-Հայաստան խորհրդարանական խմբի նախագահ Ժան Փոլ Գրետը, կոմունիստ Գի Հերմիեն: Աջ պատգամավոր Ռոլանդ Փոլիումն ափսոսանք հայտնեց, որ բանաձևն ամբողջական չէ և չի հիշատակվում Թուրքիայի անունը: Հերմիեն առաջարկեց նաև, որ Ֆրանսիան ազգային սգո օր հայտարարի Ապրիլ 24-ը:

Ելույթ ունեցողները հանգամանալից կերպով ներկայացրեցին հայ ժողովրդի կրած տառապանքներն առաջին աշխարհամարտի տարիներին: Միաժամանակ հիշեցնում էին, որ այս օրինագծի ընդունումը նպատակ չունի սրելու Ֆրանսիա-Թուրքիա կամ Հայաստան-Թուրքիա հարաբերությունները, ընդհակառակը, ավելի շուտ ձգտում է հստակեցնել տվյալ երկրների միջև առկա խաղաղության, բարեկամության և համագործակցության գործընթացը:

Կառավարության ներկայացուցիչները խոստացան, որ Ազգային ժողովի այդ հանձնախմբի ընդունած որոշումները կներկայացվեն նաև Ֆրանսիայի Սենատ, քանի որ, համաձայն ֆրանսիական օրենքի, որևէ որոշում մինչև չվավերացվի Սենատի կողմից, օրենքի ուժ չի կարող ստանալ:

Իր կարծիքները լրագրողների հետ կիսելիս, Ջոն Քլոդ Քեբաբչյանն ասաց հետևյալը. «Այս ճանաչումը շատ, նույնիսկ չափազանց ուշացումով իրականացավ և առավել խեղաթյուրումով, քանի որ ցեղասպանությունը ո՞վ, ո՞ւր, ինչպե՞ս է գործել, նշված չէ: Ֆրանսիան սպասեց ճշմարիտ թուրք մտավորականներին, որպեսզի ինքը վերջապես ճանաչի Հայկական Ցեղասպանությունը»:

***

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Ֆրանսիայի Ազգային Ժողովի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման առիթով, մայիսի 30-ին Նյու Յորքից շնորհակալական նամակ հղեց Ֆրանսիայի Ազգային Ժողովի նախագահ Լաուրետ Ֆաբիուսին՝ արտահայտելով իր գոհունակությունն ընդունված բանաձևի համար:

Նորին Սուրբ Օծությունը նաև նշում է, որ, այս պատմական ճշմարտությունը ճանաչելով, Ֆրանսիական Պառլամենտն իր նպաստն է բերում պատմական արդարության վերահաստատմանը:

Շնորհակալական նամակում ասվում է.

«ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՆ ԼԱՈՒՐԵՏ ՖԱԲԻՈՒՍ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՓԱՐԻԶ, ՖՐԱՆՍԻԱ

Մեծ հրճվանքով և խոր գոհունակությամբ իմացանք, որ Ֆրանսիական Հանրապետության Ազգային Ժողովը, 1998-ի մայիսի 29-ին, Ձեր նախագահությամբ կայացած նիստին, պաշտոնապես ճանաչեց 1915-ին կատարված հայերի ցեղասպանությունը:

Հայ Եկեղեցու Հոգևոր Պետի հանգամանքով, հանուն թեմական արքեպիսկոպոսների և համայն հայ հավատացյալների ի Հայաստան, ի Լեռնային Ղարաբաղ և ի սփյուռս աշխարհի, Ձեզ ենք ներկայացնում Մեր խոր երախտագիտությունը և բարձր գնահատանքը Ազգային Ժողովի պատմական որոշման համար, որն արտահայտում է ճշմարտությունը վկայելու իմաստությունն ու քաջությունը՝ հոգուտ արդարության դատի:

Ազգային Ժողովի որոշումն ուրախացրեց ոչ միայն հայկական ծագում ունեցող Ձեր քաղաքացիներին, այլև ամբողջ հայ ժողովրդին, որը երախտապարտ է Ազգային Ժողովի արդար և արժանի որոշման համար:

Խնդրում ենք ներկայացնել Մեր ջերմագին շնորհակալությունները Ազգային Ժողովի անդամներին և Մեր աղոթքներն ու օրհնությունները՝ Ձեր կատարած ազնիվ գործի համար, ի բարգավաճումն ու հառաջադիմություն Ֆրանսիայի, որ միշտ մոտ է եղել մեր՝ հայերիս քրիստոնեական հավատքով և եվրոպական ոգով թաթախված հոգուն:

Հաճեցեք ընդունել, Պր. Նախագահ, Մեր աղոթքներն ու բարձր գնահատությունը, Մեր լավագույն մաղթանքները՝ Ազգային Ժողովին և ֆրանսիացի ժողովրդին:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

30 մայիսի, 1998 թ.»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՈՒՅՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՊԻՐԻԴՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵՏ

Հունիսի 16-ի երեքշաբթի օրը, իր շքախմբով, Նյու Յորքի Սուրբ Վարդան Մայր եկեղեցի ժամանեց Հույն Ուղղափառ Եկեղեցու Միացյալ Նահանգների թեմի առաջնորդ Սպիրիդոն արքեպիսկոպոսը՝

ԽՈՐՀՐԴՈՒՄ ԴՈՒՐԿԻՆՈՒՄ ՏՁԵ ՎՈՍԿԵՎԱՆԻԿԵՑՄԻ ՊԱՏՎԱՎՈՐ
ԵՎՈՒՏՅՈՒՆԻ ՎԵՐԻՎԵՐՈՒՄ ՍՈՒՐԲ ԵՐԵՎԱՆԻ ՄՈՍԿՈՒՆԻՆ ՊԵՏՈՒՆ

ողջունելու և եղբայրական սիրո խոսքեր փոխանցելու Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսին:

Սպիրիդոն արքեպիսկոպոսը, որ քաղաքից բացակայելու պատճառով չէր կարողացել Նորին Սրբությանը դիմավորել օդանավակայանում, օգտվելով Հայոց Հայրապետի Նյու Յորքում երկարատև ներկայությունից, պաշտոնական հանդիպում ունեցավ նրա հետ՝ արտահայտելով և փոխանցելով նաև Հույն Ուղղափառ Եկեղեցու հավատացյալ համայնքի հարգանքն ու սերը:

Բարձրաստիճան հյուրերին դիմավորեցին տաճարի մուտքի մոտ և ապա «Հրաշափառ»-ով թե՛ Ամենայն Հայոց Հայրապետին և թե՛ Սպիրիդոն արքեպիսկոպոսին, իրենց շքախմբերով, առաջնորդեցին դեպի Սուրբ Սեղան, ուր տեղի ունեցավ միացյալ գոհաբանական աղոթք: Այնուհետև երկուստեք փոխանակվեցին բարեողջույնի խոսքեր: Պաշտոնական արարողությունից հետո ծավալվեց մտերմիկ զրույց, որի ընթացքում Հույն Համայնքի հոգևոր առաջնորդը Նորին Սրբությանը փոխանցեց նաև Հույն Ուղղափառ Եկեղեցու պետի՝ Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքի ողջույնի խոսքն ու բարեմաղթանքները:

Զրույցի ընթացքում շոշափվեցին Եկեղեցիների համեղբայրությանը, երկու քույր Եկեղեցիների բարեկամական հարաբերությունների խորացմանն ու բարգավաճմանը, ինչպես նաև Միացյալ Նահանգներում երկու ժողովուրդների կեցությանն ու առաջընթացին առնչվող հարցեր:

Հանդիպման վերջում փոխանակվեցին հուշանվերներ:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԵՏ

Հունիսի 22-ի երկուշաբթի օրը, առավոտյան, Նյու Յորքի ՄԱԿ-ի կենտրոնում Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը հանդիպեց Միացյալ Ազգերի գլխավոր քարտուղար Քոֆի Անանի հետ:

Նորին Սրբությանն ընկերակցում էին ՄԱԿ-ում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ դոկտոր Մովսես Աբելյանը և Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը:

Գրասենյակի մուտքի մոտ Նորին Սրբությանը դիմավորեց Քոֆի Անանը և շնորհակալության իր խոսքը հայտնեց Հայոց Հայրապետին՝ բարեկամական այս այցելության ուրախ առիթով:

Իր հերթին Հայոց Հայրապետը շնորհավորեց հյուրընկալին՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար ընտրվելու առիթով, միաժամանակ նշեց, որ տիար Անանը չորրորդ գլխավոր քարտուղարն է, ում ինքը հանդիպում է իր ծառայության ընթացքում:

Նորին Սրբությունը տեղեկացրեց, որ Միացյալ Նահանգներում է գտնվում՝ նախագահելու համար Հայոց Առաջնորդական թեմի հաստատման 100-ամյակի տոնակատարությունները, և անդրադարձ կատարեց անցած 100 տարիների ընթացքում Ամերիկայում Հայ Եկեղեցու արձանագրած հաջողություններին: Գարեգին Ա Կաթողիկոսը գլխավոր քարտուղարին հակիրճ ներկայացրեց նաև Նյու Յորքում և Մասսաչուսեցում անցկացված 100-ամյակի տոնակատարությունները, ապա ավելացրեց, որ ինքը, առողջական վիճակի պատճառով, ստիպված եղավ հրաժարվել Վաշինգտոն, Կալիֆորնիա և Կանադա այցելելուց: Ակնարկելով ՄԱԿ-ում աղատ ու անկախ Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչի հետ գլխավոր քարտուղարին այցելելը, Հայոց Հայրապետը շեշտեց. «Այսպիսի այցելություն մը անկարելի պիտի ըլլար տասը տարի առաջ»:

«Իր պատմության ընթացքին բազմաթիվ տերություններու իշխանությանց և դժվարին ժամանակներու ենթարկվելե ետք՝ այսօրվան անկախ Հայաստանի Հանրապետությունը մեծ կարելիություններ ներկայացնող երկիր մըն է: Սակայն անկախության այս առաջին շրջանին Հայաստանը կարիքն ունի այլ ազգերու, մանավանդ Միացյալ Ազգերու կազմակերպության օժանդակության»,- շարունակելով իր խոսքը, ասաց Նորին Սուրբ Օծությունը:

Խոսակցության ընթացքում Գարեգին Ա Կաթողիկոսն իր ուրախությունը հայտնեց տիար Անանի այս տարվա սկզբին Իրաք կատարած դիվանագիտական առաքելության համար, որի շնորհիվ հնարավոր եղավ մեղմել քաղաքական լարվածությունը Պարսից Ծոցում: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաև գլխավոր քարտուղարի այն խոսքերին, որոնք առնչվում են պատերազմներին, ցեղասպանության և մարդկության հանդեպ գործված ոճիրներին, ինչպես նաև Հռոմում Միջազգային Դատարան հիմնելուն:

Այս կոնտեքստում Նորին Սուրբ Օծությունը շեշտեց ցեղնասպանության հարցին առնչվող խնդրի կարևորությունը, որին ի պատասխան, տիար Քոֆի Անանն ասաց. «Ես Ձեզ հետ կիսում եմ ցեղասպանության մտահոգությունը»: Ապա ավելացրեց, որ Միջազգային Դատարանի միջոցով պարբերաբար կանդրադառնան նման հարցերին, որոնք և կուսումնասիրվեն ու ճիշտ լուծում կստանան:

Երբ գրույցի թեմա դարձավ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, Վեհափառ Հայրապետն ասաց, որ այն կրոնական բնույթ չի կրում, այլ առնչվում է մարդու իրավունքներին: Տիար Անանն ասաց, որ ինքն ուշադիր հետևում է այդ հիմնահարցին:

Մեկ անգամ ևս շնորհակալություն հայտնելով Հայոց Հայրապետին այցելության համար, Ընդհանուր քարտուղարն ասաց. «Մենք նույն գործի մեջ ենք. թե՛ դուք՝ հոգևոր ղեկավարներդ, և թե՛ մենք՝ ՄԱԿ-

ԱՄՆ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ԿԱՐԼՈՍ ՄԱՐՏԻՆԵՍԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԱՍԱՎՈՐՈՒՀԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ի պատասխանատուներս: Երկուստեք աշխատում ենք օժանդակել աշխարհի ժողովուրդների խաղաղության և արդարության պահպանմանը»: Քոֆի Անանը նաև ասաց, որ ինքն այս առումով մշտապես փափագում է հանդիպումներ ունենալ հոգևոր առաջնորդների հետ և, ի մասնավորի, երախտապարտ է Ամենայն Հայոց Հայրապետին՝ այս հանդիպման համար:

Հանդիպման վերջում փոխանակվեցին հուշանվերներ: Ամենայն Հայոց Հայրապետը Քոֆի Անանին նվիրեց փայտի վրա փորագրված մի խաչքար և «Էջմիածնի դանձերը» գիրքը:

ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարը Հայոց Հայրապետին մաղթեց շուտափույթ ապաքինում և բարի վերադարձ ի Մայր Հայրենիք, ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ՎԵՐԱԴԱՐՁ Ի ՀԱՅԱՍՏԱՆ, Ի ՄԱՅՐ ԱԹՈՌ

«ԶՎԱՐԹՆՈՑ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ

Օգոստոսի 22-ի վաղ առավոտյան «Զվարթնոց» օդանավակայանում վայրէջք կատարեց Լոնդոն-Երևան հատուկ չվերթի ինքնաթիռը՝ չորսամսյա բացակայությունից հետո Մայր Հայրենիք բերելով Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետին:

Նորին Սրբությանն ուղեկցում էին ԱՄՆ-ի Արևելյան և Արևմտյան թեմերի առաջնորդներ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը և Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ Տ. Գյուտ արքեպս. Նագաշյանը:

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Հայաստանի Հանրապետության Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր մարմնի տնօրեն Ռաֆֆի Հովհաննիսյանը, ՀՀ Կրոնի գործերի պետական կոմիտեի նախագահ Լազար Սուջյանը, ՀՀ Կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը, Մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Ռոլանդ Շառոյանը, Արմավիրի մարզպետ Ալբերտ Հերոյանը, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հոգևոր դասը՝ դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի գլխավորությամբ, թեմական առաջնորդներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, մեծաթիվ հավատացյալներ:

Օդանավակայանի բարձրաստիճան հյուրերի սպասասրահում, կարճատև հանգստի ժամանակ, Նորին Սուրբ Օծության հետ տեղի

ունեցավ ճեպազրույց՝ հընթացս որի Ամենայն Հայոց Հայրապետն ի մասնավորի ասաց.

«Անհունորեն երախտագետ եմ Աստծուն և փառք ու գոհություն եմ տալիս Բարձրյալին, որ ինձ շնորհեց վերադառնալ ի Մայր Հայրենիք և ի Մայր Աթոռ Սբ. Էջմիածին՝ չորս ամիսների բացակայությունից հետո: Այս չորս ամիսների ընթացքում, փառք Աստծո, ֆիզիկական անհանգստությունը մեծավ մասամբ դարմանվեց և այլևս ի վիճակի եմ իմ գործը շարունակելու: Բնականորեն առաջիկա ամիսներին կապդուրման մի շրջան եմ անցնելու: Առողջությունս վերականգնվելու ընթացքի մեջ է և դրա համար ես գոհաբանական աղոթք եմ մատուցում Աստծուն:

Շնորհակալություն եմ հայտնում բոլոր այն բժիշկներին, որոնք իրենց գերագույն աստիճանի մասնագիտական իմացությամբ և բարյացակամ վերաբերմունքով հոգ տարան և վերականգնեցին Մեր առողջությունը: Շնորհակալության իմ խոսքը բոլոր այն հայերին, որոնք աշխարհի չորս կողմերից՝ Հայաստանից, Եվրոպայից, Միջին Արևելքից, Ծայրագույն Արևելքից մինչև Հարավային Ամերիկա և Կանադա, հեռագրերով, նամակներով, հեռաձայնելով, ոմանք նույնիսկ անձնական այցելությամբ, հայտնեցին իրենց սերը և կապվածությունը Հայ Եկեղեցուն՝ իմ տկար անձի միջոցով:

Ես ուրախացա նաև, որ մեր ժողովուրդը իսկապես կապված է իր Եկեղեցուն և այդ Եկեղեցու առաջին սպասավորի հանդեպ հարգանքը այդ անձին չի պատկանի, այդ անձը փոքր է այդ մեծ հարգանքի համար: Այդ հարգանքը կա հանդեպ այն հաստատության, որ դարերի ճանապարհ կտրեց և հայ ժողովրդին հասցրեց մինչև այս օրերը:

Մեր շնորհակալությունները Հայաստանի Հանրապետության վսեմաշուք նախագահին, մեր կառավարությանը, մեր Նվիրապետական Աթոռների գահակալներին, մեր բոլոր առաջնորդ սրբազաններին, հոգևորականությանը, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում և ՄԱԿ-ում մեր պետության դեսպաններին և բոլոր այն անհատներին ու կազմակերպություններին. այս առիթով ես զգացի, թե իրենց սերը և նվիրումը հանդեպ Հայոց Եկեղեցու, մնում է կենդանի և՛ հավուր, և՛ առհավետ: Սրտանց բոլորին մաղթում եմ առողջություն:

Այս շրջանն ինձ մի անգամ ևս սովորեցրեց, որ կյանքը Աստծո գերագույն տուրքն է մարդկությանը: Մարդը պետք է գիտնա իր կյանքը արժևորել, բայց արժևորման առաջին նախապայմաններց մեկը առողջությունն է: Եվ ես հաճախ աղոթեցի բոլոր նրանց համար, ովքեր անհանգիստ են իրենց տներում և հիվանդանոցներում: Եվ ես ասում եմ. «Փարատեա, Տէր, զցաւս եւ զհիւանդութիւնս ի ժողովրդենէ մերմէ եւ շնորհեա ամենեցուն կատարեալ առողջութիւն»:

Անհատների առողջությամբ ազգը պիտի լինի առողջ: Եվ ինչպես մարմնի անդամները երբ առողջ են, մարմինն ինքն ամբողջությամբ առողջ կդառնա, ինչպես բջիջները երբ առողջ են, այնպես մարմինն ինքը առողջ կդառնա, այնպես և դուք, սիրելի հավատացյալներ,

հայրենակից եղբայրներ և քույրեր, հոգ տարեք ձեր առողջությանը ձեր անձերի, ձեր ընտանիքների և մեր մեծ ընտանիքի՝ մեր ազգի, մեր հանրապետության և մեր Մայր Առաքելական Եկեղեցու համար:

Աստված օրհնի ձեզ բոլորիդ»:

ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«Զվարթնոց» օդանավակայանից Վեհափառ Հայրապետը, շքախմբի ուղեկցությամբ և մեքենաների շարասյունով, առաջնորդվեց դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Այստեղ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսին մեծ շուքով դիմավորեցին հոգևորականաց դասն ու հավատացյալների հոծ բազմությունը և ապա, Մայր Տաճարի զանգերի զողանջների ու «Հրաշափառ»-ի երգեցողությամբ, թափորով առաջնորդեցին դեպի Մայր Տաճար, ուր Վեհափառ Հայրապետը կանգ առավ Իջման Ս. Սեղանի առջև և ծնրադիր համբուրեց Սուրբ Խաչը: Այնուհետև Գարեգին Ա Կաթողիկոսի ուրախառիթ վերադարձը Հայոց Հոգևոր Կենտրոն ողջունեց Մայր Աթոռի գիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պողոսյանը՝ մաղթելով կատարյալ առողջություն և արևշատություն.

«Հանուն վանական խորհուրդի, Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների, Մայր Աթոռի պաշտոնեության և հավատացյալ ողջ հոտի, Ձեր վերադարձը Մայր Աթոռ արտագինս ողջունում ենք: Չորս ամիսներ առաջ մեկնեցիք ապաքինման նպատակով և այն, Աստուծո օգնությամբ հաջողապես ի կատար ածելուց հետո, այսօր վերադառնում եք Ձեր Սուրբ Աթոռը, Ձեր տունը, բնակարանը ողջամբ: Արտագինս ուրախ է Մայր Աթոռի միաբանությունը և ողջ ժողովուրդը, որ հաղթեցիք Ձեր առջև ծառացած բոլոր դժվարությանց և կարողացաք այսօր վերադառնալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Բարի եկաք, Վեհափառ Տեր»:

Որից հետո բոլոր ներկաներին իր Հայրապետական խոսքը հղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ առանձնակի նշելով.

«Սիրեցյալ միաբաններ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի, հոգևոր դասի անդամներ, հարգարժան ներկայացուցիչներ Գերագույն Հոգևոր Խորհրդի, պաշտոնեության անձնակազմի անդամներ և թանկագին հավատացյալներ.

Մարդու հոգու ամենից բնական և ամենից վավերական զգացումները այս պահին չեն կարող լինել ուրիշ բան, բայց միայն փառաբանություն առ Աստված, որ Մեկ վերադարձրեց Մեր հարազատ տունը, ամբողջ հայության Հոգևոր այս Տունը, որպեսզի կարենանք շարունակել և առավել ևս առաջ տանել ու զարգացնել այն պարտավորությունները,

որ Աստված և մեր ապգը դրել է Մեր ուսերին ձեր բոլորի անմիջական, անվերապահ և ամբողջական աջակցությամբ: Բոլորդ էլ գիտեք, որ մենք եղնու նպատակների համար գնացինք այս անգամ: Մեր նպատակներից առաջինը Ամերիկահայոց թեմի հարյուրամյակի պաշտոնական, հանդիսավոր տոնակատարությունն էր, որի նախագահության համար գնացել էինք թեմի առաջնորդ Սրբազանի և թեմական իշխանության հրավերով:

Գոհություն Աստուծո, որ կարողացանք կարնորագույն բոլոր ձեռնարկներին նախագահել և հայրապետական Մեր խոսքը ուղղել մեր սիրեցյալ ժողովրդին: Եկան նաև Արևմտյան թեմի առաջնորդը, Կանադայի հայոց առաջնորդը և մոտավորապես հարյուր եկեղեցականների եռօրյա խորհրդակցության ինքնահայեցության, մտածումի, ծրագրումի օրեր ունեցանք և այն, ինչ որ կատարել էր այս նույն Մայր Աթոռին մեջ նստած և բոլորիս պաշտելի Խրիմյան Հայրիկը 1898 թվի հուլիսին՝ գրելով իր նշանավոր կոնդակը, որով հաստատել է ամերիկահայոց թեմը, այսօր իր հաջորդներից մեկը, իմ տկար անձի միջոցով, գնում էր նշելու այդ հարյուրամյակը և փառք տալու Աստծուն, որ գաղթական վիճակով գնացած հայությունը Ամերիկայի մեջ այսօր տիրական, ինքնինք արժեցնող, բոլորից հարգանք վայելող համայնքի է վերածվել՝ բազմաթիվ եկեղեցիներով, երիտասարդական և այլական հոգևոր և կրթական գործունեությամբ:

Երկրորդ՝ նաև գնացինք ֆիզիկական առողջության դարմանումի համար և դարձյալ ծնկաչոք առ Աստված գոհություն եմ ընծայում, որ բժիշկների մասնագիտական և ամբողջանվեր ու սիրալիր վերաբերմունքի շնորհիվ մեծամ մասամբ հաղթահարվեց անհանգստությունը և հառաջիկա մեկ քանի ամիսներին կպդուրման, ապաքինման շրջանին կհուսանք բոլորովին կփարատի, և Մենք ամբողջությամբ կվերագտնենք Մեր կատարյալ առողջությունը՝ կայն ընծայելու համար Աստծուն և մեր ժողովրդին:

Ես կորացա, պիտի ասեմ: Եվ մեր Հայաստանի Հանրապետության նախագահից սկսյալ մինչև մեր նվիրապետական բոլոր Աթոռների թեմակալները, մեր բոլոր առաջնորդները անխտիր, Մայր Աթոռի միաբանության հետ միասին և ապա մեր դեսպանները, պաշտոնական անձինք, կազմակերպություններ բոլոր երկրներից այն սերը, որ արտահայտեցին, այն մաղթանքները, այն աղոթքները, որ ըրին և հայտնեցին Մեկ նամակով, հեռախոսներով և այլ միջոցներով, այդ բոլորը ինձ կգացրեց, թե Մենք շատ ավելին պետք է անենք այս ժողովրդին, քան ինչ որ ենք արել: Ես մի տեսակ ուխտ արեցի առողջությունս վերագտնելուց հետո, որ ժամանակի և կարողությանս բոլոր սահմաններում պետք է առավել ևս արժեցնեմ այն մնացյալ կյանքը, որ Աստված տվել է ինձ:

Հավատացեք, երբ հիվանդանոցում տեսա ուրիշ հիվանդների, երբ իմացա ուրիշ հիվանդների մասին, ավելի շատ նրանց համար աղոթեցի, քան ինձ համար և անդրադարձա, որ կյանքը Աստծու այն գեղեցիկ

տուրքն է, գեթագույն տուրքը, որ մենք պետք է արժևորենք: Աստծուն հաշիվ տալու կոչված ենք այն բարիքին համար, այն տուրքի համար, որ Ինք տվել է մեզ, և այդ բարիքը արժեցնելու համար կենսական, անհրաժեշտ պայմաններից մեկը առողջությունն է: Հոգ տարեք ձեր առողջությանը, որովհետև առանց դրա չեք կարող մեծ գործեր կատարել ձեր կյանքում:

Ես ցանկանում եմ այս առիթով, որ մենք, իբրև Մայր Աթոռի միաբանություն, եպիսկոպոսական դասով, վարդապետներով, սարկավագներով, քահանա հայրերով, Հոգևոր Ձեմարանի սաներով, աշխարհական օգնականներով կարենանք նվիրվել այն տեսիլքին որ այս Աթոռին ավելի պայծառակերպություն պիտի տա: Այդ ժողովուրդը, որ սպասումը կգաց իր Աթոռից, մենք այդ կգացումը չենք կարող թողնել անպատասխան: Եվ հետևաբար, եկեք, եղբայրներ, հոգեպես փոխվենք և առավել ևս եկեղեցական, կուտ հոգևոր, առօրեական դաստիարակության գործը մեր ժողովրդի նկատենք մեր գոյության իմաստը: Այդ գործը պարտականություն մը չէ, մենք ենք՝ մեր էությամբ, մեր եկեղեցական կոչումով, մեր գոյությամբ: Եվ հետևաբար, ես մաղթում եմ ձեզ բոլորիդ ուժ և կարողություն, որ այդ առաքելությունը միասնաբար տանենք, համերաշխաբար, փոքրիկ հաշիվներից, ճղճիմ-ճղճիմ նկատումներից վեր կենանք և այդ առաքելության լույսին տակ դիտենք մենք կմեզ և մեր գործունեությունը:

Այս առիթով ես սրտի պարտք եմ համարում իմ խոր շնորհակալությունները հայտնել վանական խորհրդին, որ կազմեցի այնտեղ և ուղարկեցի անունները, վանական խորհրդի ատենապետ Սրբազանին, մեր դիվանապետ Ներսես արքեպիսկոպոսին և բոլոր անդամներին, որոնք ընթացիկ գործերը տարին այնքան նվիրումով այս անցնող ամիսներին մեջ: Թող Աստված իրենց կորացնի: Այս իմ Աթոռը չէ, այս մեր Աթոռն է, բոլորիս: Ուրեմն, թող Աստված ծաղկեցնի այս Աթոռը և պարգևի մեր միաբանությանն ու Հոգևոր Ձեմարանին նորանոր պտղաբերում և առավել ևս արդյունագործություն Տիրոջ այգիին մեջ հայ ժողովուրդի կյանքին մեջ ի Մայր Հայաստան և ի Սփյուռս աշխարհի: Ամեն»:

Այնուհետև, թափորի ուղեկցությամբ, ինչպես նաև «Հայրապետական մաղթերգ»-ի երգեցողությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուղղվեց դեպի Վեհարան:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ